ԴԱՒԱՋԱՆԱԳԻՐՔ

ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆՔ ՎԱՆԱՁԱՐՑ ՈՒԽՏԻՍ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՐՕՆՈՅ

Աշխատասիրեաց

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ
Միաբան Ս. Կարապետի վանուց Տարօնոյ



Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔ. ԱՓՈՌՈՅ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
1912

EL-CH
USK
1912


1217

ԳԻՇԶՈՒՆԻՔ

ՅԱՋՈՐԴՈՒԹԻՒՆՔ ՎԱՆԱՁԱՐՑ ՈՒԽՏԻՍ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՐՕՆՈՅ

Աշխատասիրեաց

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴ. ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ
Միաբան Ս. կարապետի վանուց Տարօնոյ



Ի ՏՊԱՐԱՆԻ
ԱՌԱՔ. ԱՓՈՌՈՑ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
1912



1512-1912

ՁՈՐՍՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ

ՅՈՒԲԼԵԱՆ ՏԱՐԻ

ՀԱՑ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Հոգեշնորհ

Տէր Կարապետ Վարդապետ Լուսարարեան

Ժրաչան Լուսարարապետ

Ս. Կարապետի Վանուց Տարօնոյ

Ձեր այս «Գաւազանագիրք» անունով աշխատասիրութիւնը, չիւեղով առաջին՝ի տեսակս իւր շատ գեղեցիկ եւ փառաւոր աշխատութիւն է, ուստի եւ արժանի գնահատման վարձատրութեան: Ձեր այս աշխատութեամբ պիտի ծանօթացնէք Տարօնոյ Հայ ժողովրդին Ս. Կարապետի Հռչակաւոր Վանուց հանգոյց պատմութիւնը եւ Վանահարց ցանկը:

Ուստի առնանաչ յարգանօք նուիրելով Ձեզ, նոյն Եկեղեցւոյ ներկայ յատակագիծը պատրաստուած ինձանից խնդրում եմ զայն եւս գետեղել Ձեր այս ներկայ աշխատասիրութեան մէջ:

Ձեզ աղօթակից եղբայր

Սահակ Ծ. Վարդապետ Աստուածատուրեան

Տնօրէն Մատենադարան Թանգարանի

Ս. Կարապետի Վանուց Տարօնոյ

1912 ամի 14 Յունիսի, Ս. Կարապետ:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երուսաղէմի Սրբոց Յակովբեանց ազգապարծանիք վանիէն յետոյ, թէ հնութեամբ, թէ պատմական տեսակէտով, առաջին դիրք կը գրաւէ Մայր Հայաստանի մէջ Տարօնոյ սուրբ Կարապետի հռչակաւոր վանքը: Ազգային պատմիչներ եւ հետաքրքիր այցելուներ՝ ժամանակագրական կարգաւ նկարագրած եւ վեր հանած են այս մենաստանի փառաւոր դիրքն ու ծագումը յարակից հանգամանքներով, ինչպէս նաեւ զանազան ժամանակներու մէջ սուրբ Ուխտիս միաբանութեան կրած հալածանքն ու տառապանքը եւ վանքի աւերումն ու կողոպուտը այլ եւ այլ բռնապետներու ձեռով որոնք Ազգային թերթերու մէջ ալ պարբերաբար հրատարակուած են ժամանակին:

Ներկայ գրոյկս հեղինակութիւն կամ պատմութիւն մը չէ, որ՝ի լոյս կընծայեմ, այլ Ս. Ուխտիս վանահարց ցանկի շարունակութիւնն է: Զեռնոքայ շարահար պատմիչ Մամիկոնեան Յովհաննէս եպիսկոպոս վանահօրմէն զկնի՝ այլ եւս վանահարց շարքը կընդհատի. իբրեւ Տարօնի զաւակ եւ նախանձախնդիր միաբան Ս. Կարապետի վանաց կատարած եմ այս համեստ աշխատութիւնը. աչքի առջեւ ունենալով վանքիս եւ թէ շրջակայ մենաստաններու մէջ գտնուած ճարտնտիրներու, մագաղաթեայ, եւ թղթեայ Ա.Եեսարաններու յիշատակարանները եւ տապանաքարերը:


Կարելի եղածին չափ, ճշտած եւ գտած եմ Տարօնոյ վիճակի ընդհանուր վանահայր առաջնորդներու (մանաւանդ ԺԹ. դարու Բ. կէսէն) ճշտանակելի գործունէութիւնը որոնցմէ մի քանիսին ժամանակակից եւ ականատես եմ եղած. որոնց վրայ աւելցնելով Ս. Կարապետի ճեխարաց փոխադրութիւն յԵրուսաղէմէն 'ի Տարօն:

Տ. Յովհաննէս եպիսկոպոս պատմիչ Մամիկոնեան է եղած, է. դարու կէսին սուրբ Ուխտիս վանահարց ցանկը պատրաստող, եւ սկսեալ Զենոբ Գլակէն իւիճ եղած է այդ շարքին մէջ 35րդ վանահայրը ժամանակակից Տ. Ներսէս շինող կաթուղիկոսի, որ եւ գրած է Տարօնի պատմութիւնն:

Ինչպէս որ Մամիկոնեան պատմիչը իր պատմութեան յիշատակարանին մէջ խնդրած է իրմէ վերջը շարագրութիւն պատրաստողներէն չմոռնալ զինքն յիշելու: Ես պարտ անձին համարեցի կատարել նոյն յանձնարարութիւնը գրոյկիս յարակցելով անոր յիշատակարանը. մի եւ նոյնը կը խնդրեմ իմ յաջորդ եղբայրակիցներէս, որ ճախանձախնդիր կըլլան ինձմէ վերջը շարահարել Ս. Ուխտիս յաջորդ վանահարց ցանկը, թող չմոռնան յիշել եւ զիս նուաստ ծառայս եւ ապիկար պատճառեայս Ս. Եկեղեցւոյ. որով յիշեալ եղիցին առաջի աստուծոյ:

Կ. Վ. ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ

Տարօնոյ Ս. Կարապետի վանուց, Տաճարի ճատակագիծը:



1 Ջանգակատուն.
2 Գերեզման Թոռնիկ իշխան Սասնոյ.
3 Գերեզման տանն Մամիկոնէից.
4 Գերեզմ. Մամիկոնեան Մուշեղի.
5 Աբոռ վանահարց.
6 Աւազ Սեղան Ս. Խաչ.
7 Ս. Աստուածածին.
8 Գերեզման Սեփհանոսի որդի վարդ Պատկի.
9 Սեղան Ս. Յակոբայ.
10 Գերեզմ. Մամիկոնեան Սմբատ իշխանի.
11 Ս. Սեփհանոս.
12 Գերեզ. Պապլ վահանի.
13 Հանգստարան Ս. Յովհաննու Մկրտչի.
14 Ս. Կարապետ.
15 Գերեզման Աբահագիենեայ եպիսկոպոսին.
16 Սեղան Ս. Գրիգոր Լուսաւորչի.
17 Ս. Գէորգ.
18 Ձգնարան.

Վ.Խ. Ս. Յակոբեանց Դպրապետ

Գ.Թ. Ս. Ե. Վ. Ս. Աստուածատրեան



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՆՇԽԱՐԱՑ ՍՐԲՈՑ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ

Ի ԿԵՍԱՐԻԱՅԷ Ի ՏԱՐՕՆ

ԵՒ

ՊԱՏԵՐԱԶՄ Ա՝

ԳԼՈՒԽ Ա.

*Եւ մինչդեռ աշխարհն արարատեան տառապեր ՚ի պաշտամունս դիցն Աբրամազդայ և Աբեգական: Եհաս անսահման գթութիւն Աստուծոյ ազատել զազգն Հայկազուն խաւար վիճակէն և կրկին ածել ՚ի լոյս գիտութեան ճշմարիտ հաւատոյն: Եւ յաւուրս Հռոմմայ կայսերն Դիոկղետեայ արքայն Հայոց Տրդատ բազմադիմի տանջանօք չարչարեալ զվկայն Քրիստոսի սուրբն Գրիգոր և իմացեալ զորդի Անակայ լինելն արկանէ ՚ի խոր վիրապն յԱրտաշատայ ամս հնգետասան: * Եւ յետ հնգետասան ամին դիւազնեալ ամենայն երկիրն Հայոց, և ինքն թագաւորն ՚ի մէջ վարազացն եր-*

Տաճօթ. – Նոր Զենոբ տպագրութիւն Վենետիկ 1832:

թեալ դադարիլը : Իսկ հրամանաւն Աստուծոյ եւ կեալ հանին նախատարքն զԳրիգոր . և նորա եւ լեալ ժողովեալ զնոսա առ ինքն և հինգ օր ժողոլ զնոսա անստաղ առաջի իւր կալով, լսելով գթարողութիւն վարդապետութեան նորա : Այս առաջին պահք եղաւ յաւուրս սրբոյն Գրիգորի , զոր ’ի Հռովմ Սեղբեստրոս հաւանեցաւ , և պահեայ ինքն և Կոստանդիանոս թագաւորն , և ամենայն քաղաքն զոր և Առաջաւորք կոչեմք :

Եւ յորժամ լյան աւուրք պահոց նոցա , թափեցան մորթ վայրենական խոզակերպին Տրդատայ և դիւաբնակ մարմինք զօրաց նորա ընկալան ըզբժշկութիւն : Ապա ձեռն ’ի գործ արկեալ՝ ուսուցանէր նոցա չինել տունս սէրունականս , և ասէ . պարտ է քահանայս ածել որ հովուեն զձեզ : Իսկ հրեշտակ Տեառն հաւանեցոյց զնոսա , զինքն լինել նոցա հովիւ : Զոր յանձն առեալ , ասյ ’ի ձեռն նորա իշխանս և զօրս բազումս , և առաքէ զնոսա յաշխարհն կապադովկացւոց ’ի քաղաքն կեսարեայ , ձեռնադրել ’ի սրբոյ Հայրապետէն Ղեւոնդեայ յաջորդ սրբոյն Թադէոսի : Եւ եկեալք ’ի վաղարշապատ քաղաքէ անցանէին ընդ դաւառն Բասենոյ և գային յԵրեզնաւան յեկեղեցի դաւառին , ’ի կուռան՝ զոր լինքն կործանեաց : Եւ անտի երթեալք , մտին ’ի կեսարեայ յամի 302 : Եւ ձեռնադրի ’ի մեծ Հայրապետէն Ղեւոնդեայ , Մեծաշուք պատուով՝ անկախ Քահանայապետ և Առա-

քեալ Հայաստան աշխարհի. և արարեալ նմա մեծ ծարանս, ասայ նմա զսուրբ նշխարս կարապետին Յովհաննու և զՄեծամանդինեայ ընտրեալ վկայի:



Պետրոս Յովհաննու Մկրտչին:

Այժմ լեզ ո՛վ եղեր՝ ի կեսարիա զնշխար կարապետին Յովհաննու. Յովհաննէս Աւետարանիչն: Մինչ էր նա՝ ի Պատմոս կղզւոջն, եկն յեփեսոս և անտի երթեալ յերուսաղէմ՝ պատանէ զգերեզմանն նորա ըստ հրամանի տեառն Աստուծոյ. զոր աշակերտք լծաղեալ էին (*) ՝ի թէկուէ մերձ՝ ի գերեզմանն Ամովսայ մարգարէին: Իսկ գլուխ նորա ամփոփեցին յերկիր հրամանաւ Հերովդէի որ անյայտ եղեւ տեղին:

(*) Թէկուէ տես ճառընտիր 1210 երես:



Ս. Յովհաննէս Աւետարանիչ։

Եւ սուրբ Յովհաննէս առեալ ՚ի դիշերի զսուրբ մարմինն Կարապետի Յովհաննու եւ եւս ցՊողիկարպոս եպիսկոպոսն որ էր աշակերտ իւր և եւս տանել յԵփեսոս եկեղեցին զոր ինքն շինեաց և կոչեաց զանուն նորա սուրբ Աստուածածին, և յետ փոխման Աւետարանչին ճնաց յԵփեսոս սուրբ նըշխար Կարապետին, մինչեւ ՚ի ժամանակս Դեկոսի արքայի։ Եւ ապա ՚ի ժամանակս նորա նստի յԵփեսոս աշակերտ Ակդենոսի Փարմելոս եւ անտի հալածեալ եկն ՚ի Կեսարիա յընդ իւր ունելով զբոլորովին նշխարս սուրբ Կարապետին բայ ՚ի գլխոյն միայն։ Եւ եդ զնա ՚ի սուրբ Սերեդոնն ոչ ՚ի ծածուկ այլ յայտնի և եկաց ՚ի նոյն տեղւոջն մինչեւ ցթագաւորութիւն Դիոկղետիանոսի։

Եւ ՚ի գալ սրբոյն Գրիգորի ՚ի Հեռնադրու-
թիւն առ Ղեւոնդ կեսարու Հայրապետն, որ թէ-
պէտ բաղում անգամ խնդրեաց սուրբն Գրիգոր
ընչևարս սրբոյ Կարապետին, ոչ էառ յանձն տալ,
մինչեւ հրաման ՚ի տեառնէ առնոյր ՚ի դիշերի
վերջնումն բաժանել և տալ ըստ ցնա:

Եւ ՚ի վաղիւն բազում պատերազմունս սկսաւ
լինել, մինչեւ նախարարքն կշռեցին քահանայա-
պետին երկոտասան հազար դահեկան, և այնպէս
առեալ բռնութեամբ՝ եղին ՚ի քաղաքէն. մինչ զի
խորհուրդ առեալ իշխանն Անդեղ տանն հարկանել
զքաղաքն ՚ի դիշերի հրով. զոր իմացեալ Հայրա-
պետին, համոզեաց զնոսա ՚ի խաղաղութիւն. և փո-
խանակ երկոտասան հազար դահեկանին՝ ետ նոցա
ընչևարս Ս.Թանադինեայ ընտրեալ Հայրապետին
և հապիւ կարաց արձակել զնոսա հաշտութեամբ
և սիրով: Տայր և սրբոյն Գրիգորի երկու լուսա-
ւոր ակունս, զոր էր տուեալ նմա Հռովմայ հայ-
րապետն:

Ելեալ ՚ի կեսարիոյ՝ մնայր ժամանակս ինչ ՚ի
Սեբաստիա, հաւաքել զդասս կրօնաւորաց: Եւ զո-
մանս վարդապետս կոչէր յԱղէքսանդրիոյ և հրա-
շազան պաշտօնեայս. յորոց մին Դկլաւիոս, զոր
Դուինայ դաշտին Եպիսկոպոս ձեռնադրեաց. նոյն-
պէս և զայլս յԱսորոց որ և զիս իսկ ոչ եթող
դառնալ ՚ի Նիւսարա՝ հրաժարեալ յեղբօրէն իմ-
մէ եղիազարու: Եւ անտի ելեալ անցաք մինչեւ

’ի Թորդան. և անդ Թողաք զՍուրմինոս եպիսկոպոսի՝ վարդապետ ամենայն գաւառացն։ Եւ մեք երեսալ անտի, ընդ կարին և ընդ Հարք կամեցաք անցանել։ Իսկ ոմանք յիշխանացն զգայուցին սրբոյն Գրիգորի, եթէ ’ի դուռն Տարօնոյ երկու բագինս ճնացեալ են՝ որ դեռ ձօնեն դիւաց, իսկ նորա դէմ եղեալ գայր գի և զայնս քանդեսցէ. և երկեալ յերկիրն Պաղունեաց՝ յաւանն մեծ Գիսանէ ’ի քաղաքադեօղն կուառս, ոմանք ’ի քրմայ անդ հանդիպեցան։ Եւ տեղեկացեալ յիշխանէն Հայոց եթէ առ վաղիւն կործանելոց են զմեծ Աստուածան Գիսանեայ ’և Դեմետրեայ (*). գիշերացնաց եղեալ ’ի տեղի աստուածոցն, և լսին զգանձս ’ի տունս գետնափորս։ Եւ ինքեանք ազդ արարին յԱշտիշատ ’ի քուրմս, եթէ ժողովեցէք զարս պատերազմողս և փութապէս վաղիւն հասէք առ մեզ, գի մեծն Գիսանէս ’ի պատերազմ երանելոց է ընդ ուրացեալ իշխանս։ Նոյնպէս և զարան կուառացն սրեցին՝ զարան դործել ’ի յանկս այգեացն, և գոմանս յանտառս զարձուցին։ Եւ որ գլխաւոր քուրմն էր, անուն Արձան, և որդւոյ նորա Դեմետր, առեալ զօրս որք’ի կուառատանն էին՝ արս իբրև չորեքհարիւր և երեսալ ’ի վերայ լերինն՝ ուր հանդէպ կուառացն էր, և մնացին մինչեւ այլ զօրքն ուստեք եկեսցեն նոցա յօդնականութիւն։

(*) Դեմետր եւ Գիսանէ ո՛վ են, տես երես 28։

ելեալ ՚ի վաղիւն անցանէին ընդ սաորոտ լերինն, զոր օրինակ սովոր էին ասպատակել։

Իսկ սրբոյն Գրիգորի առեալ զիշխանն Արծ-
րունեաց, և զիշխանն Անգեղտան, և սակաւ ինչ
զօրու իբրեւ արս երեք հարիւր, ելեալ յերրորդ
ժամու ընդ Բլուրն՝ ուր Արձանն էր թագուցեալ,
և գայլին անհոգս եղեալ, քնաւ չունէին կասկածս։
Եւ իբրեւ մերձ եղեն ընդ ելս զառիվերին, յա-
ռաջ մատուցեալ Արձանն և Դեմետր, հնչեցուցին
զվողն պատերազմին՝ և յանդգնաբար յարձակե-
ցան ՚ի վերայ։ Զոր լուեալ իշխանքն՝ ընդոստեան
յոյժ. զի յորժամ լուան երիվարքն զձայն վողոցն՝
սկսան վրընջել և յուզել զպատերազմ. իսկ իշ-
խանն Անգեղտան, ձայն տուեալ ասէր. իշխանն
Սիւնեաց առաջ մատիր և տես՝ գուցէ զօրք հիւ-
սիսոյ իշխանին են։ Իսկ նորա երթեալ, և ոչ կա-
րաց գիտել՝ թէ ո՛ ոք են։

Դարձաւ և ասէ. փախո զԳրիգոր յանդքս ու-
րեք, հանդերձ ընկերօք իւրովք. գուցէ ըմբռնի-
ցեն զդա և մեք ամօթ կրիցեմք ՚ի թագաւորէն։
Եւ դու առաքեա զոք զկնի զօրաց մերոց, զի դարձ-
ցին յետս. քանզի ուազմ է բազում զօրաց, և բա-
զում դրօշք երեւին փողփողեալք։

Իսկ իշխանն Անգեղտան զսուրբն Գրիգոր ետ
՚ի ձեռն իշխանին Մոկաց, և ասէ. Փութացո յա-
մուրն Ողկան, մինչեւ տեսցուք՝ թէ զի՛նչ լինիցի.
եւ ինքն առաքեաց զկնի զօրացն՝ ազդ առնել։

Իսկ իշխանն Մոկաց առեալ զԳրիգորիոս, դառնայ ընդ զառիվայր բլերն՝ կամելով իջանել ՚ի կուառս։ Իսկ արք տեղւոյն սկսան զանց ճանապարհին պահ ունիլ. զոր տեսեալ սրբոյն Գրիգորի՝ թէ մեծ վտանգ է ՚ի տեղւոջն իջուցանել զնշխարս մերձ առ Աղբիւր մի յայնկոյս ձորոյն հանդէպ գեղջն (*), դներ և նշանագրէր զտեղին. և ծածկեաց զսուրբ նշխարս և ոչ ոք կարաց տեսանել մինչեւ սուրբ Գրիգոր դարձաւ ՚ի տեղին։

Իսկ արք գեղջն հետամուտ եղեն մեզ. եւ մեք հեծեալ իւրաքանչիւր երիվարս վախստական գնացաք յամուրն յՈղկան. և յառաջեալ քան զնոսա մտաք ՚ի ներքս, իսկ արք գեղջն եկեալ անցին յայնկոյս ՚ի քաղաքն կուառս, և ազդ արարին նոցա զմեզնջ. զոր լուեալ յայսկոյս անցին, և զամրոցն սկսան պաշարել։ Իսկ մեր ՚իվարանս մտեալ, հզեցեալք գիշերագնաց զոմն առ իշխանն Անգեղտան, և թղթով ծանուցաք զիրան։ Իսկ նորա չորեքհազար արանց ընտիր սուսերաւորաց առաքեաց. որք ՚ի վաղիւն եկեալ անցին յայնկոյս գետոյն։ Եւ յետ երից աւուրց պաշարեալ զքաղաքն աւերեցին, և զպարիսպն հիմնայատակ արարին, եւ զմարդիկ քաղաքին բերեալ ՚ի Մեղտի անցուցին։

(*) Յիշեալ աղբիւր որ այժմ ուխտատեղի է կուառսէն կէս ժամ հեռաւորութեամբ դէպի արեւմուտս որ այժմ Լուսաղբիւր ասի։

Իսկ իշխանքն իբրև լուան, ելին ՚ի վերայ բլերն՝ և տեսին զԱրձանն ; զի արս չորեքհարիւր լոկ՝ թէ աւելի կամ պակաս, ունէր ընդ իւրն : Վաղվաղակի ՚ի վերայ յարձակեալ քաջ իշխանացն, ՚ի փախուստ դարձուցին զԱրձանն. իսկ այլ զօրքն Հայոց իբրեւ լուան զձայն գուժին, վաղվաղակի ամենեքեան անդր ՚ի բլուրն հասանէին. իսկ Արձանն յառաջ մատուցեալ՝ սկսաւ թշնամանել զիշխանն Հայոց և ասէ. յառաջ մատիք, ո՛վ դեռնակորոյսք, և ուրացողք զհայրենի Աստուածն, և թշնամիք բարեփարին Գիսանէի. ո՞չ գիտէք զի այսօր Գիսանէ ՚ի պատերազմ ելեալ է ընդ ձեզ, և մատնելոց է զձեզ ՚ի ձեռս մեր, և հարկանելոց է զձեզ կուրութեամբ և մահուամբ : Իսկ իշխանն Արծրունեաց ՚ի մէջ անցեալ, ասէ. ո՛վ որ խրոխտասդ ՚ի վերայ մեր. եթէ վասն Աստուածոյն մարտնչիս ստա ես. և եթէ վասն երկրիդ, բնաւ իսկ անմիտ ես. զի այս իշխանն է Անգեղտան, և իշխան Սիւնեաց տանն, և այլք ՚ի պատուաւորաց՝ զորս դուք իսկ ճանաչէք : Իսկ Դեմետր որդի Արձանին ասէ. լուարուք մեզ իշխանքդ Հայոց. այս քառասուն ամ է՝ զի ծառայեմք մեծի Աստուածոյն եւ գիտեմք զզօրութիւն նոցա, զի ընդ թշնամիս պաշտօնէից իւրեանց ինքեանք մարտնչին : Արդ մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ, զի այս տուն է Թագաւորին Հայոց, և դուք իշխանք նորա : Բայց այս ձեզ յայտնի լիցի, որ թէպէտ

մեք ձեզ յայլմէ ոչ կարեմք. սակայն լաւ է այսօր մեռանիլ ՚ի վերայ Աստուածոյն մերոյ քան թէ զտաճար նոցա ՚ի ձէնջ ապականեալ տեսանելոյ, որով և զկեանս ատեցաք և զմահ սիրեցաք։ Բայց որ իշխանդ ես Անգեղատան՝ յառաջ մատիր, զի մենամարտեսցուք ես և դու։

Ցայնժամ ՚ի մէջ անցեալ իշխանն Անգեղատան և Արձան, և սկսան անցանել շուրջ զմիմեամբք. և աճապարեալ Արձանն եհար սիպաւ ՚ի վերայ բարձից նորա, և մերձ տարաւ յընկենուլ զնա։ Իսկ իշխանն դարձեալ ՚ի վերայ նորա, ասէ. Գիտեա զայս, Արձան, զի տեղւոյս այս Արձան են կոչելոց. զի քեզ արձանանալ պիտի այսմ վայրի։ Եւ ՚ի վեր ամբարձեալ զձեռն իւր՝ իջուցանէր զսուրն ՚ի վերայ ոտից Թիւկանցն, և ՚ի բաց ձգէր զպարանոցն հանդերձ ձախ թիկամբն և ոտամբն։ Եւ նորա անկեալ յերկիր թաւալէր. և կուտեցին Արձան ՚ի վերայ նորա, և կայ ՚ի Թալմանի ՚ի նմին տեղւոջն՝ որ դեռ եւս Արձան կոչի անուն լերինն։

Եւ վինչ այս այսպէս գործեցաւ, փութանակի եկին հասին զօրքն Քրմաց ՚ի վիշապ քաղաքէ, և արք Պարտխոյ եւ արք Մեղտոյ ամենեքեան առ հասարակ անդր հասանէին։ Եւ այլք յԱսպօնիոյ եկեալ ընդ նոսա, ընդ ամենայնն, որպէս և ինքեանք յետոյ ասէին, հինդ հազար չորեք հարիւր և յիսուն այր։

Իբրեւ հասին ՚ի գլուխ լերինն, ձայն գու-
ժեաց յերկոսեան գունդան. եւ յարձակեցան ՚ի
վերայ զօրացն Հայոց, և փախստական արարեալ
իջուցին զնոսա զառիվայր լերինն ընդ գերզն կող-
մանէ: Իսկ արք գերզն այնորիկ քանզի դարա-
նամուտք էին, ընդդէմ եկեալ մերոց զօրացն, և
յերկուց կողմանց ՚ի մէջ առեալ զզօրսն Հայոց,
սկսան կոտորել: Իսկ իշխանն Անգեղտան հեր-
ձեալ զբրմացն կողմն, և անցանէր յետուստ կող-
մանէ, և ուշ բլերն առնէր. զի անդ արք հեծե-
ւակք, որ զառիվերին կողմանէն էին, բազում
ինսա արարին վիմօք երիվարացն: Իսկ Դեմետր
իբրեւ տեսեալ՝ Անգեղտան իշխանն ՚ի բլուրն ել,
թողեալ զզօրսն՝ ուշ նմա արարեալ, նոյնպէս և
այլ զօրքն ձիախաղաց սկսան անդ ժողովել:

Իբրեւ եկին ՚ի վերայ բլերն, ճակատեցան
դարձեալ առ միմեանս: Եւ կային ինսային իշ-
խանքն մեր զօրուն իւրեանց, զի դեռ ամենե-
քեան չէին ժողովեալ. քանզի չորեքհազարն այր
դեռ ՚ի Մեղամ զգերիան ունէին, իսկ երեքհա-
զարն անցանէին ընդ Բասեան և ընդ Հարք. իսկ
այլք դեռ ՚ի դաշտի անդ սփռեալ առպատակէին:
Եւ յորժամ ճակատեցան առ միմեանս, և կամէին
խառնել ընդ իրեար, ժամանեաց նոցա երեկոյ.
և ՚ի նոյն վայրն իջեալ բանակեցան մինչեւ ցա-
ռաւօտն: Եւ իբրեւ առաւօտ եղեւ, եկին հասին
՚ի նոյն տեղի ինացեալք զօրուն Հայոց, և այլք

ումանք ՚ի Տիրակատարն քաղաքէ, որպէս թէ արք հինգ հարեւր, եկին օգնել քրմացն։ Արդ իբրեւ հարստացան երկոքին կողմանքն, և էին վեց հազար ինն հարեւր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգ հազար և ութսուն զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին զվտղս պատերազմացն, և դիմեցին իւրաքանչիւր այր ՚ի դէմ առն դիպանաւորի. զառաջինն յաղթեցին զօրքն Հայոց՝ քրմացն։ Իսկ ՚ի նոյն ցերեկն Դեմետրեայ իշխանն Հաշտենից, որ էր ընդ զօրան Հայոց, կտրեալ եօթն հարեւր արաւմբք ՚ի քրմացն կողմ եւանէր. եւ սկսաւ կռուել ընդ իշխանս Հայոց։ Իբրեւ տեսին զօրքն Հայոց զնա, լքան եւ յերկիր կործանեցան. զի այնպիսի այրն այն յաղթող և հմուտ պատերազմի և կորովի, մինչ զի ամենայն իշխանքն Հայոց դողային ՚ի նմանէ։ Եւ յանկնայ սկսաւ արեան ճապաղիս հանել. և ամենայն զօրքն զաղաղակ բարձին առ իշխանն Սիւնեաց։ Իսկ նորա ձայն տուեալ, ասէ. Ա՛յ գայլակորիւն, յիշեցեր զբարս հօր քո, և ՚ի նոյն չաղղակերութիւն դարձար։ Իսկ նա ասէ. Ա՛յ արծուոյ ձագ, լծեւօքդ ես հպարտացեալ. բայց եթէ ՚ի շար ակնատացս անկանիս, ես ցուցանեմ քեզ զիմ զօրութիւնս։ Իսկ իշխանն Սիւնեայ չանդուրժեաց առ թշնամանան. յարձակեալ ՚ի վերայ նորա, եհար մրճով ՚ի վերայ սաղաւարտին, և կտրեալ զնա ՚ի զօրացն, և վախստական

արար զնա ՚ի վերայ լերինն ընդ արեւելս կոյս։ Եւ հանեալ հանդէպ իննականեան վանուցն՝ մղեալ ընկէց յերիվարսէն, եւ իջեալ՝ դանակաւ կտրեաց զգլուխ նորա. և զմարմինն գահավէժ արարեալ, ասէ. տեսցեն զքեզ անգեղք, և գիտասցեն՝ եթէ արծուոյ հարեալ է զնապաստակդ։ Եւ ինքն դարձաւ։ Որ մինչեւ ցայսօր Արծուիք (*) կոչեն տեղւոյն։

Իսկ իշխանն Արծրունեաց ՚ի մէջ անցեալ՝ կտրեաց զքրմապետն Աշտիշատայ, որոյ անունն էր Մեհտակէս. և տարաւ փախստական մինչեւ ՚ի գլուխ լերինն՝ ընդ դիտան վայրուցն։ Եւ իբրեւ եհաս նմա, ընդ դէմ դարձաւ Մեհտակէսն, և եհար զբարձս նորա. իսկ նորա ջեռեալ յարենէ խոցուածին, աճապարեալ կտրեաց զմիկունս, եւ պարանոցաւն ՚ի բաց ընկէց, և զդի նորա դարաձոս արար. զոր եւ Մեհտակող կոչեն զանուն տեղւոյն։

Իսկ իշխանն Արշուշ փախուցեալ ՚ի նոյն վայրս լծագեաւ. զոր տեսեալ իշխանին Արծրունեաց՝ որպէս լծէ ընդ չաւս արար, և գնացեալ մերձեցաւ առ նա. և յանկարծակի յարձակեցաւ ՚ի վերայ նորա։ Իսկ նորա փախստական եղեալ ընդ անտառն, կտրօն փայտի էանց ընդ սիրտ նորա և ընդ լեարդն, և անդէն մեռաւ։ Իսկ նորա առեալ

(*) Արծուիք տես ծանօթ. երես 145։

զերկոսին երիվարան և դարձաւ, և անուանեցաւ տեղին այն Արջուց ձոր (*):

Եւ իբրեւ դարձաւ անտի, եկեալ հանդիպեցաւ դի Դեմետր և իշխանն Անգեղոսան մարտնչէին ընդ միմեանս: Եւ նորա 'ի վերայ յարձակեալ, կտրեաց զաջոյ ուս նորա, և 'ի վայր ընկէց. և կտրեայ զդլուխ նորա, և ձգեաց 'ի մխաղ իւր. եւ դարձաւ: Եւ յարձակեալ 'ի վերայ զօրացն, յանխնայ կոտորեալ դիմաւալ առնէին իբրեւ արս հազար երեսուն և ութ. և զայլսն մերկացուցին: Եւ 'ի նոյն պատերազմին եսպան Դեմետր զորդի Մոկայ իշխանին. որ և մեծ սուգ եհաս իշխանացն Հայոց:

Արդ իբրեւ մեռաւ Դեմետր 'ի նոյն պատերազմին, հնչեցոյց իշխանն Սիւնեաց զփողս պատերազմին 'ի խաղաղութիւն: Եւ յուեցին երկոքին կողմանքն 'ի կոտորելոյ զմիմեանս: Զոր իբրեւ տեսին արք կողմանցն, որ քուրմքն էին, աղաչեցին զիշխանան 'ի խաղաղութիւն; զի թաղեսցեն զմեռեալս իւրեանց. և թոյլ եառն: Եւ ժողովեցին զամենայն կոտորեալսն յերկոցունց կողմանցն, և հատեալ գերեզմանս՝ լցին զնոսա 'ի ներքս, և կանգնեցին 'ի վերայ գերեզմանացն արձանս, և գրեցին 'ի նմա այսպէս.

(*) Արջուց ձոր որ վանքիս հիւսիսոյ 10 րոպէ հեռու, որ այժմ փռներու ձոր ասի:



ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՐ ԵՂԵՒ ՅՈՅԺ ՍԱՍՏԻԿ
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՐՋԱՆ ՔՐՄԱՊԵՏՆ
ՈՐ ԿԱՅ ԱՅՍՐ Ի ԹԱՂՄԱՆ
ԵՒ ԸՆԴ ՆՄԱ ԱՐՍ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՈՒԲ
ԵՒ ԶԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄ ԱՐԱՐԱՔ ՎԱՍՆ ԳԻՍԱՆԵԱՅ ԿՌՈՅ
ԵՒ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Զայս գրեցին Ասորի և Հելլենացի գրով, և Յոյն և Իսայելացի նշանաւ։ Եւ ինքեանք իշին երեկօթիս առնել յիննակնեան տեղւոջն. և փութ֊թասպէս կոչնական արարին սրբոյն Գրիգորի, և ինքեանք մնացին անդէն։ Ոմանք՝ ի դիտանոյն մնացին, և այլ գօրքն՝ ի մարգճակին իջեւանս կալեալ առ քաղցր աղբերն անտառին։

Ծանօթ. – Այս գերեզմանատուն այժմ կայ ապառաժ խո֊չոր սեւ տապանաքարերով ծածկուած վանքիս արեւմտեան կողմ ժամ ու կէս հեռաւորութեամբ. տեղս այս Աւձան կոչի։ Տես երես 22։

Իսկ մեք ՚ի յամրոցէն ելեալ, եկաք ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ փախստական գնացաք: Իբրեւ եկաք ՚ի վայրս գեղջն, մոլորեցաք. քանզի գիշեր էր: Բայց մինչդեռ գայաք առ ափամբ այգեստանեացն, յանկարծակի ծագեաց լոյս ոստոիկ առաւել քան զճառագայթս արեգականն ՚ի նշխարացն՝ զոր պահեալ էր սրբոյն Գրիգորի: Եւ այնչափ ծագեաց, մինչեւ ամենայն բնակիչք գեղջն ՚ի դուրս ընթացեալ սրք և կանայք ծերք և տղայք ՚ի տեսիլն. և հիացեալք՝ սկսան զղջանալ: Եւ նոյն ժամայն բարձեալ տարան զնշխարսն մինչեւ ՚ի մէջ գեղջն, և պաշտօն ջնջոյ թուխեամբ կատարեալ մինչեւ ցառաւօտն, և ՚ի վաղիւն բարձեալ՝ եկաք յԱրձանն, և ընթերցաք զգիրն: Եւ բազում ժամս արտասուեալ սրբոյն Գրիգորի վանն ՚ի զուր կոտորածին, և ապա առեալ զալ Թեկն Մկրտչին՝ տեառնադրեաց չուրջ զամենայն կողմամբքն գաւառին, ասելով. Եղիցի ալ Տեառն ՚ի վերայ երկրիս այսորիկ, պահել ՚ի խնամեաց. և մէկ վանն մեղայ տանջեցան ՚ի Տեառնէ, սակայն խնամիւք սորա մի յերկարեացեն, այլ չարեօք սատակեսցին: Եւ մի հերձուածողք բնակեսցեն յայսմ աշխարհս. ալ սրբոյ կարապետին եղիցի կնիք և պահապան, և միանգամայն եղիցի տունս այս չինուած յաւիտենական ազգաց յազգս:

Եւ ասացեալ մեր զամենն, ձայն դղրդի եհաս

յականջս մեր։ Եւ իբրեւ եկաք իջաք յիննակնեան տեղիան, ընդ առաջ եղեն մեզ իշխանքն Հայոց, աւետիս տալով մեզ՝ եթէ Դեմետր կործանեցաւ։ Եւ իբրեւ եկաք ՚ի տեղին, տեսաք զտեղի կռոցն քանդակեալ. և զկուռսն, որ հնդետասան կանգուն էր, ընդ չորս բաժանեալ։ Եւ պաշտօնեայք կռոցն զաղաչակ բարձեալ՝ ողբային չարաչար, որ և դեւքն ՚ի լսելիս մարդկան կոծէին՝ ասելով. Վա՛յ մեզ, զի և ոսկերք մարդկան մեռելոց հալածեն զմեզ յերկրէս։ Եւ մարդկօրէն տեսլեամբ որպէս լեռաւորք եղեալ գնացին յԱշտիշատի կուռսն։ Իսկ այլք ՚ի դիւացն իբրեւ զպիծակս անհուն բազմութեամբ, կամ լեզ որպէս թանձրամած տաղտարափս՝ այնպէս յարձակեալք ՚ի վերայ բազմութեան, և զբուրմն առ հասարակ ևկեալ՝ լծողին իբրեւ զմեռեալս։ Եւ մատուցեալ սրբոյն Գրիգորի, բժշկեաց զնոսա. և հրամայեաց կործանել զԻսանէս, քանզի պղնձի էր՝ երկոտասան կանգուն երկայնութեամբ։ Իբրեւ մատեան կործանիչքն ՚ի ներքոյ նորա, զոր տեսեալ պաշտօնէիցն՝ բազում ողբով ՚ի վերայ յարձակեալք, ասէին. Մեռոյք նախ մեք, և ապա մեծն Գիսանէս կործանեսցի։ Իսկ զօրացն ՚ի վէջ առեալ զբուրմն սպանին արս վեց. և ապա կործանեցին զդուրս մահուն։ Իսկ դեւքն ձայն բարձեալ, ասէին. Թէպէտ եւ դուք զմեզ աստի հալածէք, բայց ոչ աստ կամին բնակիլ, և նոցա մի՛ լիցի

հանգիստ։ Բայց չէ անհաւատալի. զօր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք բազում մտանեն, նոյնպէս և այս տեղիս դուռն էր դիւաց. զի այնչափ էին ի տեղոյն Գիսանէ, որչափ ի սանդարամետս անդնդոյ։

Իբրեւ կործանեցին զօրքն զկուռան, սկսաւ սուրբն Գրիգոր հիմն արկանել եկեղեցւոյ։ Եւ վասն զի ոչ գոյր նոցա նիւթ պատրաստ, առեալ քարինս անկազմս և անտաշս, և դտեալ կիր ի բնակուխիւնս կռոցն, սկիզբն արար եկեղեցոյ ի տեղիսն՝ ուր կուռքն Աստղիկ էր լեալ՝ ըստ նորին չափոյ։ Եւ արար անդ աւուրս երկոտասան, և կամէր զնշխարս սրբոյ Կարապետին զաւիշն աստ դնել, բայց ոչ էառ հրաման ի Տեառնէ։ Այլ զհասարակն առեալ դնէր ի տապան բրտեայ, զի հողեղէն է և ոչ ոսկեղէն. վասն այնորիկ ոչ է պարտ ոսկով պատել զվեռեալ մարմին մարդկան։ Եւ եդ զնոյն տապանն ի նոյն պղնձի տապանն. և եդ անդ զմի ակն լուսոյ, զոր երբեր ի կեսարիոյ՝ անուն լիգրոն։ Եւ ոչ եթէ յայտնապէս ումէք դնէր, այլ զտեղին ի ծածուկ կազմեալ, և ի գիշերին առեալ բրիչս ևս և Աղբիանոս եպիսկոպոս, բրեցաք երկու առնայափս. արկեալ ի ներքոյ խիճս քարանց, եւ եդաք անդ զնշխարս սրբոյ Կարապետին։ Եւ այս էին զոր եդաք. զալ լծեկն մինչեւ զարմուկն, և զձախս ձեռն թիկամբն հանդերձ, և զոսկր բարձուց աջակող-

մանն, եւ այլ մանր ոսկերս ՚ի մարմնոյն: Իսկ զԱթանագինէին զգլուխն եւ զալջ ձեռն վինչեւ ցգօտին զամենայն հատեալ ընդ մէջ, և զնորայն եդաք ՚ի կաւէ տապան: Զոր լծէ ատուգիւ կամիք իմանալ, ցՊիսիդոն Թարգմանիչ ասորի իսկ հարցէք, և նա ասէ ձեզ: Քանզի կարապետին առ անկեան դրանն Արշակունի, Թզաւ մի հեռի գտանես զբեւեռս նշանին ՚ի մոխին, կէս Թգաւ բարձր ՚ի գետնոյն և յայլմէ եկեղեցւոյն: Զոր գրեալ է սուրբն Գրիգոր ՚ի տախտակս պղնձի, և եդեալ ՚ի բեմի անդ՝ Թէ կին ոք մի՛ իշխեսցէ մտանել ընդ դուռն եկեղեցւոյդ. զի մի՛ կոխելով զպատուական նշխարսն, անհաշտ խռովութիւն լիցի Աստուծոյ ընդ նոսա՝ որ մտանեն և ակնարկեն ընդ նա իսկ. զոր և Պիսիդոն իսկ լնլծերցեալ է զտախտակն:

Իսկ Աթանագինէին առ նոյն սեամս հուպ ընդ ձախակողմ անկիւնին. և այնպէս անյայտ կան ՚ի պահեստի, զոր եւ Թէ գտանել ոք կամի բեւեռացն նշանօք՝ չիք հնար, Թէեւ քառասուն կանգուն փորիցեն. զի պատճառ իրացն այս եղեւ: Ցորժամ պահեցաք զնշխարս սրբոյն, երից անգամ ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեւք հանդերձ, և յարուցեալ տարածեաց զձեռս իւր ընդ արեւելս, և ասէ.

Աստուած աստուծոյ և Տէր տերանց, որ կատարես զկամս երկիւղածացդ քոց, և ոչ անտես

առնես զաղաչանս այնոցիկ՝ որ խնդրեն ՚ի քէն. դու Տէր, որ պահեցեր զսա և ածեր վինչեւ ՚ի տեղիս յայս, ձգեա՛ զալ քո ՚ի վերայ տապանաց սոցա, և կնքեա անվթար զօրութեամբ քով զոսկերս սոցա, զի մի՛ ոք կարասցէ հանել զսոսա աստի և գտանել վինչեւ յօր կատարածի աշխարհի և նորոգման սոցա և ամենայն սրբոց։ Թէպէտ և ՚ի սրբոց ոք չկանայցէ հանել. աղաչեմ մի՛ լուիցես նոցա աղօթիցն. այլ որք յուսով եւ հաւատով խնդրեսցեն զբժշկութիւն ՚ի դուռն սրբոյ կարապետիս, բժշկեսցես զնոսա։ Բայց միայն թէ կամք քո իցեն թողուլ զնոսա ՚ի ցաւս իւրեանց, զի տանջեալ մարմնով՝ ապրեսցին հոգով ՚ի հանդերձեալ դատաստանին։ Իսկ զդասս պաշտօնէից սորա պահեա, որ զգուշութեամբ ծառայեն քեզ և սրբութեամբ ՚ի սուրբ եկեղեցւոջս. զի դու միայն ես կարող յամենայնի, և քեզ փառք յաւիտեանս։

Եւ մեր ասացեալ զամէնն, եկն ձայն երկնից որ ասէր. Եղիցի քեզ որպէս և կամիս, մի՛ ոք գտցէ զդոսա հանելոյ պատճառաւ. և որք ծառայեն ինձ սուրբ և անկեղծաւոր վարուք ՚ի տեղւոջդ, մանանակից լիցին դոցին բարեացն։ Եւ շարժեալ ծածկեցաւ տեղին։ Իսկ ՚ի վայրկեան ածեալ առաջի Սիւնեաց իշխանին քուրմն մի, աղաչէին՝ զծածկեալ տեղիս գանձուցն ցուցանել և զդրունս գետնափոր տանն. և ոչ ասաց, այլ մեռաւ ՚ի նոյն կախաղանին։ Եւ ոչ եղեւ հնար գտանել. թէ-

պէտ և կարծէին ընդ հիմամբքն եկեղեցւոյն լինել, ուր Դեմետրեայ տաճարն էր: Քանզի հիմն եկեղեցւոյն եղաւ ի նոյն տեղիս, նոյն չափովն լայնութիւնն և երկայնութիւնն. բայց միայն զի նոքա յարեւմուտս երկրպագէին: Նոյնպէս քըննէին եւ զտաճարն Գիսանէին ի վեր բերել, որ էր առ յորդ աղբերն յարեւելից կուսէ, որպէս երկուս քայլս մարդոյ հեռի գոլով, և ոչ գտին:

Եւ իբրեւ լցան նոցա անդ աւուրք ինն, երթեալ իշխանն Սիւնեաց յաւանն կուառաս, հաւաննեցոյց զզօրս գեղջն՝ գալ ի մկրտութիւն. որք յանձն առին և եկին ընդ նմա: Եւ առեալ սրբոյն Գրիգորի իջուցանէ զնոսա ի ձորն Ա.յծաանայ եւ մկրտեաց զնոսա. որ էր յարեւելից կուսէ հանդէպ կաճկոնից՝ Ասպետնից բերդին: Եւ մկրտեաց զնոսա քրիստոսազարդ օծմամբն, առնելով հաւատացեալս սուրբ երրորդութեան: Եւ երեւեցոյց Տէր լոյս մեծ ի սեան հրեղինի ի վերայ մկրտելոցն. և կացեալ երիս ժամս լոյսն ի վերայ սխրալի քահանայապետութեանն, և անդէն ծածկեցաւ ի տեսողացն: Եւ որք մկրտեցանն էին, արք և մանկտի, ոդիք հինգ հազար և յիսուն: Եւ առեալ ածէ զնոսա ի տէրունական տաճարն, և տօն սրբոյ Կարապետին տայր կատարել որ օր մի էր նաւասարդի: Եւ առեալ զնոսա ի ձեռս քահանայիցն, ետ տանել ի գիւղս իւրեանց: Եւ հրամայեաց քահանայիցն նշան վայտեայ կանգնել ուր զնշխարսն ե-

դիա, և՛ ի մէջ գեղջն. և զկանայն անդ մկրտել: Իբրեւ եղեւ այս աւետեան, ժողովել տայր սուրբն Գրիգոր զմանկունս քրմացն և զպաշտօնեայս կռոցն, և ապաչէր զնոսա՝ դառնալ առ տէր Աստուած: Իսկ նոքա ոչ առնուին յանձն, այլ ասէին ցիշխանան. Զայս բանս՛ ի միտ առէք, որ թէ ապրիմք՝ վոխարէնս առնեմք ձեզ. և թէ մեռանիմք, աստուածքն հատուցանեն զվրէժս մեր: Եւ լուեալ զայս իշխանն Անգեղտանն, եհտ տանել զնոսա՛ ի Փայտակարան քաղաքն՛ ի տուն բանտի արս չորեքհարիւր երեսուն և ութ՝ գերծեալ զդէս նոցա:

Այլ եւ յոյժ զարմանալի էր տեսիլ նոցա, քանզի սեւք էին եւ գիսաւորք և զաղրատեսակք, զի ցերկով՛ի հնդկաց էին: Քանզի և կռոցն, որ յայս տեղւոջ էին պատճառն այս է: Գեմեար և Գիսանէ իշխանք էին հնդկաց, և եղբարք ցերկով. դաւ իմն խորհեալ նոցա Քինասքեայ արքային Իւրեանց, զոր իրազեկ եղեալ արքային՝ առաքէ զօր զնոցա, կամ սպանանել, կամ յերկրէն հալածական առնել: Իսկ նոցա լեալ մաղապուր՝ անկան առ Թագաւորն Վաղարշակ. և նա եհտ նոցա զերկիրն Տարօնոյ իշխանութեամբ. զոր ինքեանք չինեցին քաղաք, և կոչեցին Վիշապ (*): Որք

(*) Վիշապ որ այժմ Պաղէշ ասի, եւ ունի երեսուն տուն Քիւրտ բնակիչս. վանքէն հինգ ժամ հեռաւորութեամբ. Յ.Աշտիշատին մօտ է:

եկեալ յԱշտիշատ, և կանգնեցին զկուռնն զայնո-
սիկ. յանուն կռոյն զոր ՚ի հնդիկան պաշտէին:
Եւ յետ հնգետասան ամի սպան Թագաւորն զեր-
կոսինն եղբարն, ոչ գիտեմ վասն է՛ր, եւ ետ
զիշխանութիւնն երիս որդւոց նոցա Կուառայ եւ
Մեղտեայ և Հոռենայ: Իսկ Կուառ չինեաց զա-
ւանն Կուառս, եւ վասն անուան նորա կոչեցաւ
Կուառս: Իսկ Մեղտէս չինեաց ՚ի դաշտի անդ իւր
ւան, և կոչեաց զանուն նորա Մեղտի: Իսկ Հո-
ռեանն չինեաց իւր աւան ՚ի գաւառն պալունեաց,
և կոչեաց զանուն նորա Հոռեանս:

Եւ յետ ժամանակաց խորհուրդ ՚ի մէջ առեալ
Կուառ և Մեղտէս և Հոռեան, երեքեքն ՚ի յեռուն
Բարքեայ և գտին զայն տեղին բարեհամ և գեղե-
ցիկ. զի ընդարձակութիւն էր որսոց և հովասուն,
խոտոյ և փայտի առատաձեռն. և չինեցին անդ
դաստակերտս: Եւ կանգնեցին երկուս կուռս,
զմինն յանուն Գիսանեայ, և զմինն յանուն Դե-
մետրեայ: Եւ եռուն նոցա ՚ի սպասաւորութիւն
զազգս իւրեանց: Գիսանէս զի գիսաւոր էր, եւ
վասն այնորիկ նորա պաշտօնեայքն գէսք էին Թո-
ղեալ. զոր հրամայեաց իշխանն կտրել: Զի ազգն
այն յորժամ ՚ի Քրիստոս դարձան, չէին կասար-
եալ ՚ի հաւատսն, եւ զհայրենի օրէնսն չիշխէին
յայտնի ունել, այլ խաբէութեամբ զայս հնարե-
ցան. ծամ՛ միայն Թողուլ ՚ի գլուխ մանկանցն,
զի զայն տեսեալ՝ յիշեսցեն զպաշտօն պղծութեան

իւրեանց։ Զոր և ես աղաչեմ զձեզ, զգոյշ կայեք՝ զի մի՛ այս և՛ի ձերում երկիրդ սերմանեսցի, և մի՛ լինիջիք ընդ անիծիւք։ Այլ մեք յառաջինն դարձցուք՝ի կարգս և՛ի բանս։

Իբրեւ հիմնարկեաց սուրբն Գրիգոր զեկեղեցին, և եդ անդ զնշխարան, և կանգնեաց անդ փայտեայ նշան տէրունական խաչին՝ի դուռն եկեղեցոյն և՛ի տեղի կռոցն Գիսանեայ, և երթող անդ պաշտօնեայս եկեղեցւոյն զԱնտօն և զԿրօնիդէս։ Եւ Զեպիփան հայր հաստատեաց վանայ ընդ ձեռամբ իւրով. և երթող՝ի տեղոջն արս կրօնաւորս քառասուն և երեք, և երկոտասան դաստակերտս եւս նմա, զի տեղեացն ծառայեսցեն։ Ցորոյ վինն կուռս, և Մեղտի և Բրեխ և Մուշ և Խորնի և կեռք և Բուզու եւ Խրտում։ Քանզի աւանք են սոքա մեծամեծք, որպէս կայ՝ի գրի իշխանացն Մամիկոնէից։ Քանզի կուառս ունէր երդահամարս երեք հազար և երկոտասան, և հեծեալս հազար և հինգհարիւր։ Մեղտի զոր չինեաց Դեմետր և Գիսանէ իշխանացն որդի՝ Մեղտես, ունէր երդահամարս քսան հազար և քսան և զօրս քսան հազար։ Խրտում որ լինն հարիւր տուն ունէր և հեծեալս չորեքհարիւր։

Խորնի որ ունէր երդահամարս հազար լինն հարիւր և զինուորս հազար ութն հարիւր։

Պարէխ որ ունէր հազար վեցն հարիւր և ութսուն ծուխս և զինուորս չորեքհարիւր։

կէտղէք երդս հազար և վեց հարիւր և զինւորս հազար չորեքհարիւր ։

Իսկ Բազու, որ Թարգմանի բազմաց կայան, ծուխս երեք հազար և երկու հարիւր, և հեծեալս հազար և քառասուն, եւ հետեւակս աղեղնաւորս ութհարիւր և քառասուն, և տիգաւորս վեց հարիւր և ութսուն. եւ պարսաւորս երկերիւր եւ ութսուն ։ Եւ ընդարձակեալ ունէին սոքա իւրեանց խաշանց արօտականս զդաւառն Հաշտենից ։ Ուրդայս աւանագեղք ՚ի բնէ տուեալ էին կռոցն ՚ի ծառայութիւն, զոր եւ իշխանքն դարձեալ հաստատեցին ՚ի սէր եկեղեցոյն յամս երեսուն եւ երկու թուով ։ Զայս այսպէս կարգեալ է սրբոյն Գրիգորի ։

Եւ Քրիսաոսի մարդասիրին փառք յաւիտեանս ամէն ։



ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ՄԱՏՐԱՎԱՆԻՑ

ԳԼՈՒԽ Բ.

Արդ յետ երկոտասան աւուր երթեալ իջա-
նէաք ՚ի քաղաքագեղն Մեղտի՝ եւ անդ երեկօթս
արարեալ, եւ ՚ի մէջ գիշերին եկն այր մի, եւ
գոյժ էարկ՝ եթէ արք հիւսիսոյ գան ՚ի վերայ
մեր: Իսկ մեք դէմ եդեալ կամէաք անցանել
յայնկոյս գետոյն, յամրոց մի կոչեցեալ Թար-
ձենք: Եւ իշխանքն անցեալ գնացին մինչեւ ՚ի
դուռն Մուշ քաղաքին, եւ տեղեկացեալ զի ոչ
ինչ գոյր, եւ ապա դարձան եւ եկին ընդ առաջ
մեր. եւ դարձուցեալ զմեզ յեզերացն Արածանու,
ոմանք անցեալ մտին ՚ի քաղաքն յառաջագոյն,
իսկ ոմանք ընդ մեզ երթային: Իբրեւ հեռացաք
՚ի գետոյն իբր ձիոյ արշաւանօք երկու կամ երեք,
եւ իբրեւ մերձեցաք առ փոքր ձորակին, եւ կա-
մէաք անցանել մխաբան եւ գնալ ՚ի տեղի մեհե-
նիցն Աշտիշատայ, քանզի անդ իսկ էր խորհեալ
դնել զմնացեալ նշխարան, ապա ջորիք կառացն
յայնկոյս ձորոյն ոչ կարացին անցանել, և նստան:
Ապա հրեշտակն յայտնեալ արգել զԳրիգորիոս,

և ասէ. Հաճեցաւ սէր սրբոյդ բնակիլ ի սեղանոյս յայս, և այն՝ վասն ցուցանելոյ ի հեռատոյն սեղեայ անդի զղօրութիւն Աստուծոյ, զոր սեպհական մարդիկն՝ հաւատացեալն ազանչելացան։ Քան զայս այլ պատճառս ի սրբոյն Գրիգորէ ոչ լուաք։

Եւ անդ. ձեռն ի դործ արկեալ չինուածոյ եկեղեցւոյն, և նոյն օրինակաւ սրպէս Իննակնեան. ի գիշերի կաղմեցաք զսեղի նշխարացն, և եդաք ի քարեայ տապան առնաչափ զերկուց վկայից մերձ առ դուռն եկեղեցւոյն յաջակողմն։ Եւ ըստվիւս նմա զանկն լուսաւոր դներ ի նոյն տապանին, յաղագս միշտ լուսոյն զոր ուներ։ Բայց զորս ասդն, այս են. զԱթանագինէին զհատասրակն, եւ զկարապետին զոսկերս բարձուցն ձախոյ, և զերկու սրուն, և զմասն ինչ ոսկերայ ոտինն։ Իսկ զայլն ի կեսարիա առին լուրևանց մասն, զերկուս ոտն և զահեակ բոյթն։ Արդ իբրև եդաք ի ներս ի տապանն զնշխարսն նոյնչափ խորութեամբ սրպէս չինեալքն առին, եւ ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեռք հանդերձ, զնոյն աղօթս մատուցաներ առ Աստուած, զի մի՝ ոք յանդգնեսցի առ ի հանել զնոսա։ Եւ նոյնպէս եկն ձայն յերկնից, եթէ զոր ինչ խնդրեցեր եղիցի, և ոչ ոք կարէ գտանել զդոսա։ Եւ զայս ասացեալ խաղաղացաւ սեղին ի մէնջ. և յայտնէ նշանաւ բեւեռով վաւխտողային իրքն։ Որ է Մատրաւանք. կոչեցաւ սակս սրբոյ Լուսաւորչին մա-

տուռ չինելոյ (*) : Սովորութիւն էր առ նախնիս Հայրապետին հանդերձ թադաւորաւ և մեծամեծ նախարարօք գալ յայցելութիւն եկեղեցւոյն (Աշտիշատայ) եւ առաւել այսր մատրան սօնս կատարել՝ ի յիշատակ սրբոց յառն հօրն անդամ (**) :

Եւ մինչդեռ գչինուածս մատրանն կազմէին՝ հրաման եւտ սուրբ Գրիգոր զօրականին և իշխանաց որ ընդ իւր էին, զի երկեն և մրճօք տապալեսցեն գչինուածք բադնեւայն Յաշտիշատայ ուր էր վահէ վահեան մեհեանն մեծապանձ լի ոսկով և արծաթով եւ բազում նուէրք մեծամեծաց եւ թագաւորաց ձօնեալք անդ. ումերորդ պաշտօն հռչակեալ. անուանեալ վիշապաքաղաք վահագնի հաշտից տեղիք թագաւորաց Հայոց մեծաց՝ ի սընարս լերինն Քարկեայ՝ ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ լերինն Տօրոսի. որ եւանուանեալ ըստ յաճախապաշտ պաշտման տեղեացն Յաշտիշատ, զի յայնժամ դեռ եւս չէն կային երկք բազինք՝ ի նմա : Առաջի Մեհեանն վահէ վահեան :

Ոսկիամօր Ոսկիածին դից եւ բազինն իսկ յայդ անուն անուանեալ Ոսկիհատ, Ոսկիմօր դիցն : Եւ Գ. Մեհեանն անուանեալ Աստղկանն դից. սեւնեակ վահագնի կարգեալ ըստ Յունահանին, որ է ինքն Ափրոդիտէս, ուր երկեալ շատ

(*) Տես Բիւզանդ :

(**) Ագաթանգեղոս պատմագիր :

Չանապին և ոչ կարապին դառանել դդրուն բաղնեայն Թէ՝ ի ներքս մտանն. դի ծառկեցին դուքն՝ ի նոյանէ և՝ ի կոչմանցն արտաքուստ Չանապան և ոչ դնեաց անդր երկաթ դործոյն. ապա վուխանակի հասին իջին իշխանքն Հայոց, և պատուեցին սրբոյն Գրիգորի զամենայն։

Իակ երանելի հայրապետս առեալ զնչան տէրունական խաչին ել ևս ելից՝ ի ձորակին, յանդիման բարձրաբերձ չինուածոյն, ասէ. Հրեշտակ Տեառն հալածեցէ զնոսա։ Եւ ընդ բանիցն հողմ ուժգին բխեաց՝ ի խաչանիշ վայրէն, զոր ունէր՝ ի ձեռին իւրում։ Եւ երթայր հողմն ուռուցեալ լերինն հաւասար և չոգաւ և հարթեցաւ տապալեաց ընկեաց զամենայն չինուածս բաղնեայ՝ և այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչ լինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել՝ ոչ քարի և ոչ վայրի, ոչ ոսկւոյ և ոչ արծաթոյ և ոչ բնաւ երեւեր Թէ լեալ լինչ էցէ անդ, դի անթիւ կուտուրեցան անդ մարդիկ պաշտօնեայք դրմռելեան որ՝ ի տեղւոջն անդ էին և անհետ եղեն ոսկերք նոցա. դի որք տեսին անթիւ մարդիկ հաւաստացին։

Ասէ Գրիգորիոս Թէ արդ տեսէք Թէ ո՞րպէս Ընկերեան դայթակղութիւնք ձեր դի և չէին խակ լինչ. այլ ծառայեցէք այսմ հետէ Տեառն Աստուծոյ որ արար զերկինս և զերկիր։ Ցետ այսորիկ ելաներ նա՝ ի վերայ տեղիս մհհենոյ և ժողովեալ դարձուցանէ զմարդիկ յօրէնս Աստուածպաշտու-

թեան, և եդ անդ ղհիմունս եկեղեցւոյ, և ուղղեաց սեղան վառւոյն Քրիստոսի ղի նախ անդ սրսար սկիզբն չինելոյ եւ եկեղեցեաց ուղղեալ յանուն Աստուծոյ և կազմեալ աւազան մկրտութեան: Նախ զայնոսիկ լուսատրեաց մկրտութեամբ, որ ընդ նմա երթեալ էին 'ի քաղաքն Կեսարացւոց, զմեծամեծ նախարարքն, և ապա զղուառւական բնակիչս երկրին աւուրս քանս: Երեկօթա ա:ռնէր և մկրտէր անդ աւելի զինն և տան. բիւր մարդկան, և կանդնէր սեղան զոր չինեաց մատուցանելով զպատարագ վերկութեան, բաշխէր անդ զկենարար մարմին և զարիւն Քրիստոսի: Որ յետոյ ամփոփեցաւ սրբատուն մարմին երիցս երանելոյ սրբոյն Սահակայ մեծի Պարթեւ հայրապետին, յամի Տեառն չորեքհարիւր և քառասուն. որ և պատիւ երանելոյն նախահարք կանդնեցին եկեղեցի մեծապայծառ և վեհաշուք, զարդարեալ պատուական և մեծադին սպասուք, որոյ բարեխոսութեամբ տէր Քիստոս ողորմեսցի աղգիս Հայոց ամէն:

Ծանօթ. – Ագաթանգեղոս Դ.ձկը:



Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

ԿԱՐԳ ՎԱՆԱՀԱՐՑ ՍՐԲՈՑ ԿԱՐԱՊԵՏԻ ՀՐԱՇԱԼԻ ՎԱՆԻՑ ՏԱՐՕՆՈՑ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄ Գ.

ԳԼՈՒԽ Գ.

1. *Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հիմնադիր և առաջին վանահայր, յաւի Տէրունն երեք հարիւր և երկու:*

2. *Տ. Զհնոբ ոտ եկայ ատս քսան, չինեայ չեր-*

Ծանօթ. – Նոր Զհնոբ. Դ. Ա:

մադին ապաստարութեամբ զեկեղեցին սրբոյ Կա-
րապետի և զումենայն չինուածս վանացն սրար
հոյակապ քարուկիր, զի սուրբն Գրիգոր լուսաւո-
րիչ հիմն միայն եղեալ էր յամի սեառն երեք հա-
րիւր և երկու։

3. Ձեա նորա Տէր Եպիփան աշակերտ Անտոնի
ամն երեսուն։ Եւ յաւուրս սորա յամի սեառն ե-
րեք հարիւր քան և եօթն դուռս սուրբ խաչափայտին
Քրիստոսի Աստուծոյ յԵրուսաղէմ՝ ի ձեռն Հելինե-
ից մօր Կոստանդիանոսի. ի դառնալ խաչափայ-
տին հաւատոյ Յուդայ ոմն հրէայ և կոչեցաւ
Կիւրեղ, որ առ յապա սովորաբար Յուդայ կիւ-
րեղ յորջորջէր։ Եւ ապա ի տան ամի վանահայ-
րութեան Եպիփանու եկն սուրբն Գրիգոր ի վանս
սրբոյ Կարապետին, և եկայ յԱւետեաց բլուն առ
Անտոն և կրօնիդէս՝ չորս ամիս։ Եւ նորա հանեալ
անտի զնա առնլով. «Գնա յանապատ անմարդա-
բնակ տեղիս զի ի մի ոք փառաբանութիւն մատուցա-
նէ քում սրբութեանդ.». իսկ նորա երեալ գնաց
ի Մանեայ այրն և կայեալ անդ տէր եօթն վար-
ճանի ի կենաց ի փառս Աստուծոյ յամի Տեառն
երեք հարիւր երեսուն և ինն։ Եւ յետ անտի, յամի
սեառն երեք հարիւր և յիսուն, եղեւ լուսափայլ
երեւումն սուրբ խաչին յերկինս, զոր սեռեալ
բազմայ հաւատացին ի Քրիստոս և մկրտեցան ի
ձեռն սուրբ հայրապետին Կիւրղի Երուսաղէմացւոյ
արս առաւել քան զտասն հազար։

4. Տ. Սահմանում աշակերտ Եպիսկոպոս. սա եկայ ամն հնգետասան. ՚ի սորա չորրորդ ամին վախճանեցաւ սուրբն Անտոն։ Եւ յետ երկուց ամաց և սուրբն Կրոնիդէս կայեալ ամս քառասուն յինանկնեան տեղւս, և է սակաւ լինչ հետագոյն Թաղեալ յեկեղեցւոյն ընդ հարաւոյ կուսէ. սա չինեաց եկեղեցի, որ սուրբն Գրիգոր զնշխարս պահեաց յայնկոյս Կուառաց, առ յորդաբուխ աղբերն և կացոյց անդ. կրօնաւորս վանիսան հրեշտակային վարուք։

5. Տ. Վահան՝ յամի Տեառն երեք հարիւր յիսուն և երկու։

6. Տ. Փառներսէհ Աշխիշատայ. սա խնդրանօք նախարարաց և խորհրդովք Հայոց արքային երեք հարիւր վանիսան և երկու Թուոյն գնաց ՚ի սուրբ էջմիածինն բազմեցաւ ՚ի հայրապետական աթոռն յամի Տեառն երեք հարիւր վանիսան և երկու։

7. Տ. Եփրեմ ամս քսան և ութն, յամի Տեառն երեք հարիւր հօթանասուն և հօթն։

8. Տ. Յովհաննէս Ա. ամս տասն. սա էր ՚ի ժամանակս սրբոյն Սահակայ Պարթեւ Հայրապետին, յամի Տեառն երեք հարիւր լիսուն և ութն։

9. Տ. Զեմենդոս ամս տասն, յամի Տեառն չորեքհարիւր տասն և հինգ։

10. Տ. Մարկոս ամս տասն և ութն, յամի Տեառն չորեքհարիւր քսան և հինգ։

11. Տ. Կիւրեղ ամս քսան և երկու. սա ա-

ռաջին եպիսկոպոս ձեռնադրեցաւ ՚ի Յովհաննէ Մանդակունեցւոյն ՚ի կաթուղիկոսէն Հայոց յամի Տեառն չորեքհարիւր և ութսուն ։

12. Տ. Գրիգոր Բ.՝ ամս վեց, յամի Տեառն հինգ հարիւր և երկու ։ Յիշատակուած է Տ. Յովհաննէս պատմիչ եպիսկոպոսէն ։

13. Տ. Անդրէաս Ա.՝ ամս տասն և մի ։

14. Տ. Ներսէս Ա. ամս եօթն, յամի Տեառն հինգ հարիւր տասն և ինն ։

15. Տ. Յովհաննէս Բ. ամս երեք, յամի Տեառն հինգ հարիւր քառասուն և մի ։

16. Տ. Սահակ Ա.՝ ամս հինգ, յամի յեառն հինգ հարիւր քառասուն և չորս ։

17. Տ. Յովսէփ ամս վեց, յամի Տեառն հինգ հարիւր քառասուն և ինն ։

18. Տ. Բարդուղիմէոս ամս չորս, յամի Տեառն հինգ հարիւր յիսուն և հինգ ։

19. Տ. Ալթանաս ամս տասն . սա էր ՚ի ժամանակս Մովսէս Բ. Հայոց կաթուղիկոսի Եղիվարդացւոյ, որոյ հրամանաւ ժողովեալ եպիսկոպոսաց և իմաստուն արանց, որոց մէջ էր Ալթանաս այր խորհրդատ և հմուտ ժամանակագրութեան, որ բազում քննութեամբ կարդեալ ուղղեալ ղտոմարն Հայոց ՚ի թուականին Քրիստոսի հինգ հարիւր յիսուն և մի ՚ի Դուին քաղաքի ։

20. Տ. Աբրահամ, յամի Տեառն հինգ հարիւր ինսուն ։

21. Տ. Բարսեղ՝ յամի Տեառն հինգ հարիւր լինաւն և երեք։

22. Տ. Թաթէոս (*) կամ Թոմիկ՝ յամի Տեառն հինգ հարիւր լինաւն և չորս։ Սա առաջաւ՝ ի տղայոյ մինչեւ զառաքինութիւն և էր աշակերտ Բարսեղի որ եղեւ նմա սիրելի վասն վարուց իւրոց և իչխանին Մամիկոնէից և Մուշեղայ և իշխանն Բաղմայեց սմա դաստակեաս բաղուսս։ Սա բազում կրօնաւորս կարդեաց՝ ի Գլակայ վանսն վիճաճաչակս և ճգնաւորս առանձինս բնակել անձինս երեք հարիւր ութաւն և ութին։

ԳԼՈՒԽ Գ.

Եւ յաւուրս սորա էին բնակեալ՝ ի կողմանս այնոսիկ եօթն խոստաճարակք ճգնաւորք զորոց յիշեցաք, որք և փայլէին հրեշտակակրօն վարուք։ Սոքա զիսայեալ զարշաւանս պատրիկ եկին վաղվաղակի յիննակնեան վանսն և աղդ արարեալ կրօնաւորացն յորդորեցին զնոսա փախչիլ անտի և ինքեանք մնային անդէն յեկեղեցւոջ։

Իրրեւ մատուցին զպատարագն եօթնեքին և հրամայեցին նշանագրի վիւռմ, որ եկեալ՝ ի Ծու-

(*) Պատմութիւն Յովհաննու եպիսկոպոսի Մամիկոնէի Տարօնոյ։

նայ գրել զառ ինքեանց ասացեալն և ինքեանք տարաձեալ զձեռս իւրեանց առաջի սուրբ Սեղանոյն, և ասեն այսպէս. «Տէր Աստուած ղօրութեանց և արարիչ յաւիտենից, որ առեղծեր զմարդն ի պատկեր բարերարութեանդ և կացուցեր զնա իշխան ի վերայ երկրի և ետուր նմա զփառս և զպատիւ յաւիտենական անմահ։ Ուստի նախանձեալ բանսարկուին մտին մեղք յաշխարհս և ի մեղաց անտի մոռացումն, և ի մոռացմանէն կորուստ յաւիտենական, և զորդեդրութիւն որ յԱստուծոյ էր ջնջեցաք մեղայ ապականութեամբ. ուստի վրկութեան ճանապարհ բանձեալ էր և մահ թաղաւորեալ։ Այլ դու, Տէր, զմայար ի առեղծուածս քո Աստուածային ձեռացդ, առաքեցեր զվիածին որդիդ քո Աստուածային ի վրկութիւն աշխարհի, որ եկն և եղև մարդ ի կնոջէ ի մեր նմանութիւնս և էառ զմեր պատժապարտութիւնս դատապարտեաց զմեզս, մարմնով իւրով ելոյծ զանէծս նախաստեղծին Ադամայ։ Եբարձ զպատկանութիւն մարմնոյն ի գերեզմանի. և իշխան դոլով ի վերայ մահու, զմահ գերեաց և զդժոխս աւերեաց, զարդելեալն ազատեաց, և ճանապարհս յերկինս ուղեաց, առաջնորդելով ամենեցուն յառաջին յանմահական տեղիան։

Զայս ամենայն արարեալ և զմարմին իւր ետ հաւատացելոց ի կերակուր, և զարիւն իւր ըմպելի, և զմահ նորա պատմել ամենայն հաւատացե-

լոյ։ Եւ վասն անուան նորա, զմահ առ ոչ ինչ համարելով՝ զանձինս իւրեանց մատնեցին տանջանաց և մահու, վոխանակին ակն ունելով՝ ի Քրիստէ Որդւոյ քո, վառաւորելով զամենեցունց Հայր սուրբ։

Այսօր և մեք զանձինս մեր՝ ի մահ մատնեմք և չարչարանաց և վշաւ. այլ և վասն խոստմանդ, մէկ որ ճանաչեն զիս՝ ի հալածանս կայցեն, զի «Ուր հան եմ, ասէ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»։ Եւ դիտեմք, Տէր, զի ոչ անտես առնես զաղաչանս մեր, և ոչ ընդ վայր հարկանես զանձինս ծառայից քոց։ Տուր, Տէր, վառս անուանդ քո վասն սքանչելեաց քոց, զորս ցուցանես առ վառաւրիչս անուանդ քո յաղդաց և յաւիտեանց։ Մի՛տար օտարոտիս զբնակութիւն սիրելեաց քոց անհաւատիցն ժառանգել, և մի մեծաբանեսցեն հեթանոսք՝ թէ կործանեցաւ տեղի փրկութեան նոցա և ոչ ոք է որ օգնէ նոցա, և ո՞ւր է Տէր Աստուած նոցա յոր յուսացեալն էին։ Ցիշեա՛, Տէր, զգինս արեան քո, և փրկեա՛ ի ձեռաց նեղչաց զհաւատացեալս անուանդ քո, զի ծանիցեն ազգք հեռաւորք զմեծութիւն քո, և յուսացին յանուն քո ամենեքեան, որք երկիւղիւ ծառայեսցեն մեծութեան քո։ Ամրացո՛, Տէր, զժողովուրդս քո, հովեա՛ և բարձրացո մինչև յաւիտեան. պարապեա, Տէր, լանամատար աչովդ քով զոր փըրկեցեր պատուական խաչիդ քով, տալով օգնա-

կան ՚ի ներումեան ՚ի դէպ ժամանակի : Զդեա՛, Տէր, զամրածածուկ աչ.քս ՚ի վերայ բանաւոր փարախիս այսորիկ, և մի՛ տար զժառանգութիւնս. քո բնակութիւն անհաւատից. եղիցի ձեռն.քս ՚ի զօրացուցանել զհաւատացեալսն, և որ.ք դա- ւանին և խոստովանին զանուն.քս առաջի ազգաց անօրինաց : Տուր, Տէր, մատն ժառանգութեան անձանց մերոց ի վերինն Երուսաղէմ, զի վասն.ք ապառնիմ.ք զօրհանապազ, և զանձինս մեր վասն.ք անբաւ և անչափ մարդասիրութեանդ ՚ի մահ մատնեմ.ք : Զայլ ինչ ոչ ունիմ.ք պարտուց վճա- րումն, բայց յաչխարհի աստ ներումիւն ունիմ.ք :

Լո՛ւր, Տէր, ձայնիս մերոց և խոնարհեցո զունկն.քս ի մաղթանս ծառայից.ս, բարեխօսու- թեամբ.ք կարապետիս և Մկրտչիս. և սորին ճըգ- նութեամբս պահեա զեկեղեցիս հաւատացելոց անսասանելի և անդրդուելի, զի հաստատուն կացցէ հիմն հաւատոյս մերոյ ՚ի վերայ հիման ա- ռաքելոց և մարգարէից խոստովանութեան, մինչեւ երեւեսցի արդար դատաստանն հատորէն աշխարհի : Երեւեսցի փառ.ք.ս, Տէր, ՚ի տաճարս յայս՝ զոր ընտրեցեր հիմնարկութեամբ սրբոյն Գրիգորի, և բնակութեամբ սրբոյ կարապետիս. և կացցէ փառ.ք նորա երկրորդութեան ՚ի տեղի աստ : Քանզի սա դուռն է դժոխոց և կապան.ք մահու, իսկ այժմ ՚ի սմանէ մահ սարսուցեալ, երկնչի մերձենալ չարութեամբ առ հաւատա-

յեալս ։ Ի սմանէ և դեւք պատկառեցան . և մի դժբեղդին ըսպասաւորք սորա և որք ի սմա ։ Զքաղմութիւն դիւացն կապեցեալս ի սեղջս այսմիկ , զի խրթեցին զծուլացեալսն յԱստուածպաշտութենէ . բայց մի տայցես նոցա իշխանութիւն՝ քան իւրեանց լրբութեան յարձակիլ ի վերայ հաւատացելոց ։

Եղիցի և որք հաւատով յիշեցին զանուն տեսցե՛ եկեղեցւոյս ի նեղութեան իւրեանց , կամ ի վիշտս , կամ ի տանկութիւն, չարեաց կամ ի ախտս կամ ի դեռաւիժութիւն , կամ ի դաղանաց բեկուածս, կամ ի վիհս անհնարս որոգայթից , դուք , Տէր Աստուած մեր, լուիցես նոցա , և ղերծուցես ինոսա յարժանահաս չարեաց անտի . քանզի քո արարած են և դինք արեան ։ Մի վասն մեղաց նոցա դատեսցես ինոսա , և վասն անօրէնութեան նոցա պատժապարտեսցես ինոսա. այլ դթութեամբ քով խրատեա , որ անոխակալք ես և առատողորմ ըստ իւրաքանչիւր պիտոյից ։

Ցիշեա՛ զորս արեամբ քով գնեցեր , և մահուամբ քով որդեգրեր զորս արարեր , մի եղիցի իշխան ի վերայ հօտի քո , և ապաստանիչ ժառանգութեան վերին սիոնի ։ Տո՛ւր , Տէր , չնորհս բնակչաց սորա՝ որք պանդխտութեամբ կեանս քնան ի կեանս յայսոսիկ , և ոչ ըստ մարմնոյ դրդանաց , և զիւրեանց յերկիւղ քո ունիցեն ,

թող զմեղս նոցա, ընկալ ղյանցանս նոցա բարեխօսութեամբ սրբոյ կարապետիս և հեղմամբ արեան սորա դրեա զնոսա ի դպրութիւն կենաց ի վիճակս արդարոց քոյ: Այո, աղաչեմք, եթէ մեղք մեծամեծք էին, ի կալ առաջի սրբոյ երկեղեցւոյս, և ունելով բարեխօս զհեղումն արեան սրբոյ կարապետիս, և զմեր նահատակութիւն տառապանացս, հաշտեաց ընդ նոսա մարդասիրութեամբ քով: Մի անտես առներ զաղաչանս մեր, զի դու վասն մեղաւորացդ էիր երկնեից, որպէս ասացեր. «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս»: Արդ վասն մեղաւորացդ աղաչեմք, և ոչ վասն արդարոց, զմեղաւորացդ թո՛ղ զմեղս, զհիւանդացդ առողջացո զվէրս. և որք ապաւինեցան ի կենդանութեան իւրեանց, և դուծեցին զբարիս ի ծուրբ եկեղեցիս, ի և որք ատարեսցեն սրբոյ կարապետիս և կրօնաւորացս, և բաղում մեղս գործեալ էին, և առատաձեռնեն ի մեղաւոր ընչից իւրեանց սրբոյ կարապետիս, նոյն ինքն կարապետ լիցի փոխառու փոխանակ ապականացու ողորմութեան ըստ հաւատոյ նոցա զպարտիս իւրեանց, մատակարարեա ի նոսա առատապէս զթողութիւն մեղաց:

Մնասցէ զօրութիւն աջոյ քո ի վերայ վիմիս այսորիկ, որպէս յառաջ հիմնարկեցաւ քո զօրութեամբդ, նոյնպէս կացցէ մինչեւ դաս

'ի նորոգել զերկիր: Յայնմաւուր գայցես դուս նորոգ և անապականս որպէս զխորանն 'ի հնումն, զի դու կարող ես յամենայնի և զմեր մահս ընկալ և յամենայն արարածոց զեղ փառք յաւիտեանս:

Եւ յասել զամեն, եկն ձայն յերկինից որ ասէր. Եղիցի ձեզ որպէս և կամիք, և որք ման անուան խնդ և Կարապետիս պանդխտասցին, հասուցից նոցա 'ի գալստեան իմում և զմեղս Թողից նոցա, զան զի մարդասէր եմ առ ամենեսեան. դարձեալ և դուք եկայք 'ի տեղիան լուսեղէնս, զոր պատրաստեցի ձեզ ճըշնութեամբ ձերով: Եւ լուեալ սրբոյն, երկիրպագին առաջի սրբոյ սեղանոյն, և եղեն արտասուք: Եւ դնաց Պողիկարպոս առաջի սրբոյ խաչին, և անդ սկսաւ աղօթել և աղաչել զԱստուած զան խաղաղութեան ամենայն աշխարհի, և զեկեալ Թշնամին խորտակելոյ, և աղքատացեալ 'ի տեղիս իւրեանց: Եւ յանկարծակի հասին զօրքն Պարսից, իբրեւ տեսին զՊողիկարպոս, վազվզակի հասին զպարանոց նորա և ընկեցին առաջի խաչին: Եւ ինքեան փութապէս եկին մինչեւ 'ի դուռն եկեղեցւոյն և տեսին զկրօնաւորան յարտասուս և աղօթս արարեալ, և յարձակեալ 'ի վերայ զեօթանեքան կուսանեցին: Որոց անուանքն են այսոքիկ. Թէոնիսա, Պողիկարպոս, Սիմէոն, Յոհաննէս, Եպիփան, Դիմաւիոս, Ենարկիոս:

Սոքա եօթանիքեան կաստարեցան ՚ի զօրացն Պարսից Միհրանայ, յամենեանն քաղցր, որ օր չորրորդ էր աւուր հինդշաբթի յինեներորդ ժամուն. և ինքեանք մնացին ի տեղին մինչեւ յաւուրեան: Բայց զդուռն եկեղեցւոյն ոչ կարացին գտանել, մի ծածկեաց Տէր ՚ի նոցանէ; և սկան մրճօք հարկանել և ոչ գտին: Եւ զարհուրեալք ՚ի դիւաց վախեան ՚ի տեղւոջէն, մի դիշեր էր և մարմինք սրբոցն անկեալ կային ՚ի տեղւոջն զերիս աւուրս անթաղ, քանզի վախեան ամենեքեան: Եւ յետ երից աւուրց եկին սպասաւորք եկեղեցւոյն և հայրն Թոդիկ և տեսեալ զնոսա զի վաղճանեալ էին, յարտասուս եղեալ տրտմեցան յոյժ: Ապա առեալ զնշխարս նոցա իջուցին ՚ի կողմն հարաւոյ ՚ի մէջ դրախտին և անդ փորեցին զերկիր և իջուցին զնա ՚ի գերեզման առ Անտոն և Կրօնիդէս, որք զկնի սրբոյն Գրիգորի եղեալ էին ՚ի կեսարիոյ և կանգնեալ նշան տէրունական ՚ի վերայ նոցա, բազմաց բժշկութիւն լինէր ՚ի տեղւոջն:

Իսկ յորժամ լուաւ Մուշեղն Մամիկոնեան զեղեալսն, ուշաթափ եղեւ զերկիր արտաքս: Եւ ըմբռնեցեալ երկու՛ի քնոյ, զարթուցեալ հրամայեաց կոչել առ ինքն զՎահան, զոր էշխան արարեալ էր զնա Տարօնոյ, մինչ ինքն Հայոց մարզպան եղեւ: Եւ ասէ ցնա. «Որդեակ Վահան, դիտեա զու զաւուրս կենաց իմոց զի այս հարիւր և քսան

ամէ, ոչ ես պատերազմ եմ մղեալ, և սաքսով խմով սրբեալ զարիւնն ի ճակատէս վիսանակ քրտանց : Ուրեմն երեք ռազմ անձամբ խմով եմ կարդեալ և մղեալ :

Եւ այժմ ծեր եմ և դաղդոյտ և օգնական իմ Աստուած է և դու և ոչ այլ ոք, զի որպէս իմ մեռաւ երկոտասանամեայ : Եւ արդ, որդեակ, զկր զայս ի մոխ քուսմ, զի եթէ ի վերայ քրիստոնէից մեռանիս և եկեղեցւոյ մարտիրոս ես, իսկ եթէ ի վերայ մարմնաւոր ընչից կռանես ի մարտ, և այն քաղուքեամբ է, զի ես այլ ժառանգ ոչ ունիմ և երկիրս քեզ և զաւակի քուսմ եղիցի յետ քո : Արդ, արի և դնա՛ և խոհասուքեամբ և հնարագիտուքեամբ որսա՛ դնա, և սուրբ կարապետ եղիցի քեզ օգնական և պահպան, և աղօթք սուրբ կրօնաւորացն յաջմէ և յահեկէ :»

Իսկ արքին Վահան յօժարուքեամբ կալեալ զյանձնարարեալն, խորագիտուքեամբ իւրով կատարեաց զքեզս պարսից զերեսուն հազար, և զքեզապետն նոցա զՄիհրան : (Տես Յովհաննու Մամիկոնէի պատմուքիւն գլ. Բ. երես 21) : Եւ այսպէս առեալ զյաղթանակ աղաուքեան, խորտակեալ զքշնամին բարեհաւուքեամբ Յովհաննու Մկրտչի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ամէն :



ԳԱՅԼ ՎԱՇԱՆ

ԳԼՈՒԽ Ե.

Գայլ Վահան լըրու վանեայ զըօրս Պարսից, եկն ՚ի սուրբ Կարապետ և մատոյց հանդիսիւ զոհութիւն առ Աստուած և ամենեքեան որք լուան զոր արար նա, զարմացեալ կային և ՚ի բերան առեալ զհնարս դործոյ նորա պատմէին յամենայն տեղիս։ Եւ եղեւ ՚ի նոյն ամի վեց հարիւր և չորս թուին Փրկչի ՚ի վանս սրբոյ Կարապետի շարժս խստագոյնս. վասն որոյ տունք որք ՚ի ներքոյ էին, ՚ի շարժէ անտի վըլան։ Իսկ եկեղեցին քանդի ՚ի վերայ նորա էր՝ շարժեցաւ և պատառեցաւ. զոր Մուշեղ Մամիկոնեան տուեալ դանձս բազումս և հրամայեաց քարակոփս չինել։ Իսկ ինքն Մուշեղ ՚ի նոյն աւուրս վաղճանեցաւ և կայ ՚ի Թաղման ՚ի նոյն վանս առ Սրբոյն Գրիգորեայ իշխանին կողմն արեւելից ճակատուն։

Եւ կալաւ զիշխանութիւն նորա իմաստունն Գայլ Վահան և իշխանն Մամիկոնէից տանն. և բազում քաջութիւնս գործելով յամի Տեառն վեց հարիւր և եօթին վաղճանի բարի մահուամբ վրէժխնդիրն Եկեղեցւոյ. և եղ տանել զինքն ՚ի Գլակայ վանսն և կայ ՚ի թաղման ՚ի դուռն սրբոյ կարապետի առաջի սեմոյն։ Ի նոյն ամի վաղճանի Երանելին Թադիկ հայր վանիցն Գլակայ և կայ թաղեալ ՚ի նոյն տեղւոջն, զոր Հայրաբլուր կոչեն, որ է ընդ աջմէ եկեղեցւոյն ՚ի հիւսիսոյ ընդ արեւելս։

23. Տ. Կոմիտաս՝ տէս ուխտն, եպիսկոպոս Մամիկոնէից և առաջնորդ սրբոյ վանիցս, այր խոհական և սրբակեաց Աստուածոնն դատաւէ ՚ի դեղջէ Աղցից։ Եւ յետ մահուան Աբրահամ կաթուղիկոսի, ազգի հաւանութեամբ և խնդրանօք ընտրուի կաթուղիկոս, յամի Տեառն վեց հարիւր երկտասան։

Սա նորոգ յօրինեաց զվկայարանն սրբոց Հռիփսիմեանց և եզիտ զտաղանակ սրբոց Հռիփսիմեանց, որ կնքեալ էր մատանեաւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և սրբոյն Սահակայ, որ զիւր կնիք եւս եդ ՚ի վերայ նորա և ամիսս եաց առեալ վայելուչ և սքանչելի Շարականն «Անձինք նուիրեալք»։

24. Տ. Ստեփաննոս Բ. տէս վեց. սա ՚ի ժամանակս Կոմիտասայ կաթուղիկոսի գնաց առ նա և երբեր մատն լինէ ՚ի սրբոց Հռիփսիմեանց. և եղ

'ի վանս Գլակայ, ուր ինքն իսկ էր յաւի Տէառն վեց հարիւր ութնեւտասան։

25. *Տ. Սահվաննոս Գ. Մանուկ որդի իշխանին Աղծրունեաց Վարդ Պատրիկի. հերձաւ մայրն սորա և՛ կան 'ի Թաղման Տնտղք նորա 'ի նոյն վանսն։*

Սա բազում ուղղութիւնս գործեաց 'ի դաւառն Տարօնոյ, պի վերապոյն էր և սրբակեաց նա քան զեպիսկոպոսունս. պի հայր էր վանայ և ընդ ձեռամբ իւրով ունէր երեք հարիւր լինելոսն և ութն կրօնաւորս և այնչափ առաքինի էր, որ ամենեքեան իբրեւ զՅովհաննէս Կարապետն համարէին զնա։

Սա չինեաց եկեղեցի անուամբ սրբոյն Սահվաննոսի 'ի ձախակողմն տաճարին սրբոյն Կարապետի և անդ եդեալ 'ի նշխարաց սրբոյն Սահվաննոսի անյատ զձախ բոյթ ոտին սրբոյ Նախավկային (*)։

Սա խնդրեաց 'ի սուրբ Կարապետէն կապել զբերանս գաղանաց, որք բեւկանէին զլուսաբերսն եկեղեցւոյն։ Եւ բազում պարկեշտ վարուք իւրովք յանդիմաներ զիշխանն Հարքայ, որ ունէր զկին եղբօր իւրոյ և յաճեալ 'ի յաւանն կոչէր 'ի կնոջէն և արարեալ կրօնաւոր 'ի Թիլն աւանի եկեղեցոյ գաւառի։

(*) Գլ. Բ. երես 29 պատմ. Յովհաննու Մամիկոնէի։

Եւ յամի Տեառն վեց հարիւր քսան և ինն վախճանեցաւ երանելին Ստեփաննոս և կայ առ այլ հարսն ի Հայրաբլուր ։ Եւ առեալ վահան իշխանի որդի Սմբատայ զեպիսկոպոսունան Մաժիկոնէից և զՊալունից և զՀաշտենից և եկն ի վանս սրբոյ կարապետի, և ձեռնադրեցին հայր վանացն զնախիան Ներշապուհ որ ի Դուինայ դաշտէն էր եկեալ յանապատ և բնակեալ ի վայրսն եկեղեցւոյն ։

26. Տ. Եպիփան Ներշապուհ՝ ամս երիս. սա եկայ վիճակն ի վանս սրբոյ կարապետի ամս քսան և ի ժամանակի վանահայրութեան իւրոյ գնաց ի ժողովն, զոր արար Հերակլ ի տասն ամի թագաւորութեան իւրոյ ։

Եւ յամի Տեառն վեց հարիւր երեսուն երկուք ին վախճանեցաւ յերկրի իւրում Սմբատ Մամիկոնեան և եւս տանել գինւ ի տապանատուն հարց իւրոց ի վանս սրբոյ կարապետի և կայ ի դուռն սրբոյն Ստեփաննոսի ։ Եւ նոյն ամի փոխանն Սմբատայ փոխեցաւ նաև հայրն Ներշապուհ առ Աստուած յետ քսան ամի վանականութեան իւրոյ ։

27. Տ. Դաւիթ՝ ամս երիս. ի սոյն աւուրս կնքեցաւ վահանայ որդին Տիրան ի վանս սրբոյ կարապետի ։

(Տես պատմ. Յովհաննու Մամիկոնէի երես 49) ։

ՊԱՏԵՐԱԶՄ Դ

ԳԼՈՒԽ Զ.

28, Տ. Դրիգոր՝ ամս ութն, յամի աւետն վեց հարիւր երեսուն և ութն. և սա գնաց ընդ Վահանայ (*) ՚ի պատերազմ երկբհարիւր ութսուն և հինգ կրօնաւոր կընկղով։

Իբրեւ խմբեցաւ պատերազմ յերկեր Աղուանից առ անտառով որ կոչի Կաղամախեաց բլուր, կրօնաւորքն սւսպդեսաք էին մաղեղինօք և կնկղաւորք. և ընդ տաս առն ժամահար մի, և ընդ երկուան խաչատրօշ բարձրաբերն և ճառկատեցան նոքա ընդ դէմ իրերաց ՚ի պատերազմ յայնկոյս գետոյն որ ՚ի դաշտին, զոր տեսեալ թշնամիքն զարմանային։

Եւ վարդուհրի ոչ եմուտ ՚ի պատերազմ, այլ տեսից՝ թէ նոքա զինչ գործեն։ Եւ իբրեւ խմբեցան պատերազմ ընդ իրեարս և կամէին վիճակիլ վահանեանք, յայնժամ նոցա ծուռն կրկնեալ միաբան աղաղակեցին առ Աստուած աղօթիւք և լի արտասուօք. «Ով Տեր, հա՛ր զմեր պատերազմս, ով Տէր, զարիւր ՚ի ձայն պաշտօնէիցս.» և զայս ասացեալ միաբան յոտս կացին

(*) Վահան կամսար որդի Սմբատայ։

և ընչան խաչին դարձուցին ՚ի վերայ Թշնամեացն և հարին զԹշնամիսհարան յանդունդն։

Եւ հայեցեալ Վահանայ ՚ի դունդ կրօնաւորացն, եռեւս զաջ Թեւս նոցա երիտասարդ մի աՀադին տեսլեամբ՝ և Թագ ծիրանի ՚ի գլուխ նորա և խաչ, և ի հանդերձիւ նորա հուր վայլատակեալ։ Եւ այլ երիս երիտասարդական հասակաւ տեսանէր, որք առաջի կային Թեւաւորիւք։

Զոր և Թշնամեացն տեսեալ, յիմարեցան և ՚ի դեռ անդր լցան։ Եւ որք ՚ի դեռսն յայնկոյս անցին Մեզամայ՝ ուշ արարին. իսկ Վահան ձայն տուեալ յորդին իւր Տիրան և այլ զօրսն և ասէ. «Ահա Տէրն արարածոյ Քրիստոս երեւի ՚ի մէջ ծառայից իւրոց, զի նա է Թագաւոր նոցա և մեր ամենեցուն, որ խոնարհեցաւ ՚ի ձայն պաշտօնէից իւրոց և էջ ՚ի վրկել զնոսա և զմեզ, և էջ պնդեացուք զկնի Թշնամեացն։» Իսկ անօրինացն հասեալ ՚ի Մեզամ և դային երկոտասան ամսան ծեր ի կրօնաւորացն և սպանին զնոսա, որք Թաղեալք կան ՚ի դուռն Եկեղեցւոյն, զի այն իսկ էր խնդրուածք նոցա։

Եւ այսպէս կրօնաւորացն զօրութեամբ սրբոյ խաչին յաղթանակեալ մեծաւ զօհութեամբ դարձան ՚ի վանս սրբոյ Կարապետին վառս մատուցանելով սուրբ Երրորդութեան յաւիտեանս ամէն։

Վահան կամսար Մամիկոնեան որդի Սմբատայ վաճառեցաւ յետ բազում յաղթութեանց

և կայ Թաղևաղ ՚ի դուռն որբոյ կարապետի յետ դասուն ձախակողմեան։ Յամի վերջհարիւր երեսուն և ութին վճար եղեւ պատերազմին Տարօնոյ և հինգ առաքինի իշխանացն ընդ դէմ Պարսից, Մուշեղայ, Վահանայ, Սմբատայ, Վահան Կամսարականի, և Տիրանայ, որոց յիշատակք օրհնութեամբ եղիցի ամէն։

29. Տ. Յովհաննէս Եպիսկոպոս պատմիչ Մամիկոնեան, որ և զինքն երեսներորդ հինգերորդ համարէ սկսեալ ՚ի Զենորայ ՚ի շարս վանահարցն (*) որբոյ կարապետի, ՚ի հայրապետութեան Սամուէլի, որ չորեքտասան էրնատեալ՝ յամի Տեառն վերջհարիւր յիսուն և երիք։

Սա յաւուրս Ներսէս Շինող Կամուղիկոսի իբր շարայարութիւն Զենորայ զրեաց զպատմութիւն Տարօնոյ, զոր ՚ի յիշատակարանի իւրում յիշեալ է։

(*) Ի Զենոբայ ցՅովհաննէս զանուանս ութն վանահարց ոչ կարացաք գտանել, որպէս ՚ի յայտ լինի ՚ի յիշատակարանի Յովհաննէս Մամիկոնէի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՄԻԿՈՆԷԻ

ԳԼՈՒԽ Ը.

«Զոր ինչ ի Տրդատայ մինչև ի Խոսրով արքայ Պարսից լեալ է, և տանս Մամիկոնէից ոչ դոխ դրուի: Ապա տեղեկայայ յոմանց թէ ի կողմանց Ուռհայի է կրօնաւոր ինն Մառ Մարայ կոչեցեալ և ունի զդիրսդ զայդ:

Գնացի և տեսի առ նմա զդիրսն որ 'ի նմին Ննեականեան վանսն էր գրած և նա ի գլխոց ուսուցեալ ունէր 'ի Պարսից կաւ յայլոյ ուրուք, որ ապականեալ զերկիր և զիրքն անտի է անկեալ ի նա: Եւ թարգմանեալ ի նմանէ քսան և ութ պատճեան և տասն օրինակ գրի առ իս կար և բռնվանդակեալ արարի երեսուն և ութ պատճեան ի գիրս մի հաւաքեալ Թողի մանկանց եկեղեցւոյ:

Ի ժամանակս Թագաւորութեան Հերակլեայ և 'ի մահուն Խոսրովի հրամանաւ Ներսէսի հայոց կաթուղիկոսի և յիշխանութեան Մամիկոնեան վահանայ, զոր Մայրենեօք կոմսարական կոչեն, երեներորդ երկրորդ էր Մուշեղայ, զոր Փաջակորով կոչեն: Գրեալ և կազմեալ 'ի վանսն Ննեականեան 'ի դուռն սրբոյ Կարապետի և Թողի անմոռաց յիշատակ ինձ և ժերաղնեայց:

Արք որք զկնի դոցա այլք նստին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա ՚ի տանս յայսմիկ դիցի ՚ի նոյն մատեանս, զի այսպէս գտաք օրինադրեալ յառաջնոցն։ Դարձեալ ես Տէր Յովհաննէս Մամիկոնեան եպիսկոպոս աղաչեմ ըզսանս կունս Եկեղեցւոյ Աստուծոյ, զի յորժամ զշարադրութիւնս զայս ընդօրինակէք, մի ինչ թուեսցի ծաղր ունէք, այլ և զիմ պատճեան անպակաս և լի գրով դրոշմեսջիք զհետ գրելացդ, զի օրհնեալ ՚ի տուրբ կարապետէն, և մեր նուաստ հովուական աղօթից, և բովանդակ իսկ ՚ի Քրիստոսէ և Աստուած վարձահատոյց լիցի գրողացդ և ընթերցողացդ ամէն։»

Ս. Կ.

Ինչպէս որ գրոյկիս յառաջաբանին մէջ յիշած եմ, Մամիկոնեան Յովհաննէս եպիսկոպոսի պատրաստած աշխատութեան շարունակող ըլլալը, անաւասիկ միջեւ ցայս վայր կը վերջանայ ծորին Սրբազնութեան ցուցակագրած Ս. Ուխտիս վանահարց անունները, ուսի յետագայ գլուխէն կ'սկսի իմ համեստ աշխատութիւնս:



ԳԼՈՒԽ Ը.

30. Տ. Սահակ Բ.՝ յամի Տեառն ՌԾԹ հարիւր քսան և ութն. ասոր յիշատակութիւնը կը գտնենք Մանազկերտի եկեղեցական ժողովի մէջ, որուն ներկայ էր Տ. Յովհան Օձնեցի կաթուղիկոսը յամի Տեառն ՌԾԹ հարիւր քսան և ութն։ Այս ժողովին նղովեց զՅուլիանոս Ալիկառնացի և զդիւրս նորա։

31. Տ. Վարդան Ա.՝ յամի Տեառն ՌԾԶ հարիւր ութսուն և ՈՒԹն, յիշուած յերկրորդ Տիեզերական ժողովին Կ. Պոլսոյ։ Տես յԵկեղեցական պատմութիւն Տիեզերական ժողովոյ Հ. Պօղոս Յովհաննեանի, Քրիստոսի ՈՒԹն հարիւր ութսուն և մի թուականին. այն ատեն Հայոց կաթուղիկոսն էր Տ. Եսայի, որ վարեց 775-778։

32. Տ. Գրիգոր Դ. Վկայասէր 1044. որդի Գրիգորի Մագիստրոսի՝ ի զարմէ Լուսաւորչի, և ապա լինի կաթուղիկոս։

(Այսպէս գրուած է մի ձեռագիր ճառընտրուն Ս. Յովհաննու վանքին)

«Տ. Վահրամ, այսինքն Գրիգոր Վկայասէր, որդի Գրիգորի Մագիստրոսի՝ վերակացու լեալ է ի վանս Իննականեայ Տարօնոյ, վասն նորոգութեանց նոյն ուխտին»։

Յաւուրս սորա Դաւիթ Թագաւոր տայ վկայս

քաղաք ՚ի Յոյնս, և ինքն մեկնի ՚ի Հայաստանէ, և Ամթոռն կաթուղիկոսութեան վոխի յՍնուոյ ՚ի Թաւ բլուր յամի Տ. 1063։ Եւտ չինելոյ յՍնի ամս եօթանասուն և մեկ և դնի ՚ի Մամնդաւ յամի 1066։ Ժողով Սեաւ Լերին առանձին Ա. և յամի 1079 բառնի Թագաւորութիւն Բագրատունեաց մահուամբ Գագկայ վերջնոյ և սկսանի տէրութիւն Ռուբինեանց։ Սա ինքն Գրիգոր Վկայասէր դնայ ՚ի Կ. Պոլիս առ կայսրն Յունաց Ալէքս կոմնենոս վասն միաբանութեան և ոչ յաջոդի ։

33. Տ. Դաւիթ Բ.՝ յամի Տեառն 1180, Տաթոնցի, յիշատակուած 1180ին Հռոմկլայի եկեղեցական ժողովին առթիւ, որ գումարուեցաւ Ներսէս Շնորհալի Հայրապետին հրամանով։

34. Տ. Յովհաննէս Դ.՝ յամի 1181.

(Զամչեանը յիշած է զայն յամի իբր 1181)։

35. Տ. Խաչատուր՝ յամի Տեառն 1204։

36. Տ. Յովհաննէս Ե.՝ յամի Տեառն 1268. Սա գանուած է Սսոյ եկեղեցական ժողովներուն և այն առթիւ յիշուած։ Սսոյ Գ. Հոգեւոր ժողով գումարուած էր 1251ին դարձեալ Տ. Կոստանդին կաթուղիկոսի օրով և իր նախագահութեամբ։ Հռոմայ Ինոկենտոս պապը առաջարկած էր, որ Հայ եկեղեցին ընդունի Ս. Հոգւոյն ՚ի Հօրէ և Միանգամայն Յորդոյ բխումն, բայց ժողովը մերժելով մերժեց։

Սոյն Տ. Յովհաննէս եպիսկոպոս, կը յիշուի

'ի ձեռագիրս նաև 1268ին տումարի ՉԺԷ լինի, թէ դարձեալ դնաց 'ի Սիս, բայց պատճառը չի բա- յտարեր. վարած է մօտ հաւանաբար քան և հինգ տարի. 1251-1276։

37. Տ. Յովհաննէս Ջ. Շատախեցի, յամի Տեառն 1293. վասն որոյ կայ յիշատակեալ 'ի ձեռագիր մատալաթեայ ոսկեզօծ աւետարանի միւմ, որ այժմ գտանի 'ի մայրավանս Սրբոյ Կարապետի Մշոյ՝ այսպէս.

«Բայց դրեցաւ լուսազարդեալ աւետարանս 'ի լուսալրական ժամանակի. և սկզբանէ արար- չութեան, մինչև առ մեզ ՉԺԲ. 714. իսկ 'ի կա- տարման գալառնէն ՌՄՂԲ. 1292. իսկ 'ի խոս- րովային Պարսից սկսեալ մեր թիւս որէ ՉԼԹ. 739. 'ի թագաւորութեան Հայոց բարեպաշտ, Աստուա- ծասէր, Աստուածապահ, Աստուածազարդ թագա- ւորիս Հայոց Հեթմոյ, և 'ի հովուապետութեանս Տեառն Ստեփաննոսի։ Ես Թորոս նուաստ յոդնա- ժեղս լոկ անուամբ քահանայ, բայց խորհրդով և գործով խաչեցայ, դրեցի զԱստուածահրաշ աւետարանս 'ի վերահրաշ ուխտս Դրազարկ. ընդ հովանեաւ սուրբ և փառաւորեալ Տիրամօր Աստուածածնիս և կենսական Աստուածաբնակ սուրբ Նշանացս. որէ պիր և դամբան թագաւո- րացն Հայոց և թագուհեացն իւրեանց օրհնեալ գարմին Ռուբինեանց, յաւուրս թագաւորութեան Տէր Թորոսի։

Եւ եթէ յոր տակս գրեցի զսա, տացեայ տուքը ՚ի չտաէ, յիշելով իմ զպատմութիւն ծնողացն հաւրն իմոյ զհայրենի գաւառէն Շատախ կոչելոյ և զՏարօնոյ, և զդիւրս առնլը և յառաջընթաց կարապետին և ամէնդուին Յովհաննու՝ հպողին յանհպելի գլխին Աստուծոյ մերոյ, և վրկչին Յիսուսի։ Եւ ՚ի վաղիւ յանկայն առաւնել զառուքը ուխտն և զհայրենի գաւառն իմ և մինչ ցայս վայր զդալն աչաւք ոչ առեալ, այլ մտաւք յաւիտեան ժամ. և ահն զբանս իմաստնոցն զմտաւ եթէ զինչ այլ ինչ է իմաստութիւն, բայց խոկումն մահու, և զինն մահու յիշատակ բարի, և ես ինքնին ձեռաւք իսով գրեցի ընդ յանկալն առուքը Աւետարանս և յարդարն ընչից իմոց եռաւ զսա տակի ծաղկով, տակի գլխագրով, համաբարբառաւք և չորեքին խորանաւք և բազմերանգ գունովք, կաշիաւք և արծաթի կոճակաւք յարմարեցի ըստ իմ փանաքի և մարմնոյ կարի և եռաւ զսա ընծայ արքոյն Յովհաննու կարապետի որ է ՚ի գաւառն Տարօնոյ։ Յառաջնորդութեան Տ. Յովհաննէսի գերամաքուր եպիսկոպոսի և խնդրեցի ՚ի նմանէ, և ՚ի վարդապետէն Մուրմանոյ մաքուր ոգւոյ ՚ի Յաղբակ և ՚ի կարապետէ և նոքա յանձն առին յօժար կամաւք զի աւր (օր) յայս արտացեն և յաւիտեան ամի մի աւր (օր) զպատարագն ժամարարքն լինձ և իմ ծնողաց արտացեն։ Եւ արդ

ապաչեմ նախ քան զամենայն աչօթս առնել, զի զտարակուսեալ և զվնլքոր սիրտս Հայոց ա- զատեսցէ Աստուած՝ ի դառն ծառայութենէ Փա- րաւոնի. և՝ ի ժանդ և՝ ի պղծապղծ և յատերա- ան ազգէն Իսմայելի: Զի բազում անդամ զաչ- խարհս Հայոց սրով և հրով մաշեցին և. զտաճարն արարին խաչանց վարագ: Զոր ՏԷր Յիսուս սատա- կեսցէ ընտա, զոր միով ամաւ յառաջ եառ զՀոգ- կապ և զհաչակատար քաղաքն Տրէպաւոնի՝ և տապալեաց՝ ի հիմանց և Բ. ամաւ յառաջ տէրն իմ և խնամօղն և անընդվիզելի սիրով սիրոյն և անուցանողն զիմս նուաստութիւն՝ բարեպաշտ և Աստուածասէր թագաւորն Հայոց Տանդեաւ՝ ի Քրիստոս ՉԼԲ. 737 յամենայնն վեցտասարդ Զ. 6. յառուրս չաբաթու. Հայցեցէք յԱստուծոյ նման մեզոյ թողութիւն և խնդրեցէք ի Տեառնէ Աստու- ծոյ, զի բարեպաշտ և Աստուածասէր թագաւորին ամենայն Հայոց տացէ ընդ երկայնաւուրս պարա- գայ ամօք խաղաղական կենօք յարդարութիւնս բերկրանօք, զի է աբանչելի խնամատութեամբ, համ- բակ սիտվք և ծեր խորհրդով, զեղեցիկ հասու- կաւ և բարի վարուք, առնել երկնային և երկայն ազօթից պատուղ սիրեալ ամենաւրհնեալ զարմն Ռուբենեանց առ՝ ի վախճարութիւն ազգիս Հա- յոց: Զոր պահեսցէ Աստուած զսա և զվեց եղ- բարան սորա զխնդեցիկան, զոր ի քան միոյէ՝ զԹորոս, զՄբատ, զԿոստանդին. զՍահմանսոս,

ղերկնորեականն՝ զԱշին և զկայտառն Ոտբէն, ասա և ՚ի հանդերձեալն ՚անպայման խնդութեամբ հրճուեսցին։ Եւ մի պակասեցի թագաւորութիւն դարուէն սոցա մինչեւ եկեսցէ ամենաթագաւորն Քրիստոս որոյ իւր է թագաւորութիւն։

Յիշեալքդ ՚ի Քրիստոս զընդհանուր եղբայրութիւն, զեպիսկոպոս, զքահանայ, զերաժիշտն, զընկերանի զաշակերտն, զՅովսէփ վաճառական, զվիանձունս որ յանապատս, զգործաւորս, զՏիմաւեթ պատուական քահանայ, ՚զբանտող քարտիս և զԻեւորգեան յապաղ ապաստաւորս։

Եւ յապա յերես անկեալ լալագին արտասուօք հայցեմ ընդհանուր և ՚ի սուրբ լրութենէդ, զի յընթեռնուլ զսա մի մի ծունր կրկնէք, լի և անբիծ հաւատով առաջի Աստուածահաճոյ նշխարացդ Տէր Յովհաննու մեղաց թողութիւն հայցեցէք դառնացելոյս մեղաւք և խմոյ և ծնողաց և ամենայն զարմից, և Քրիստոս Աստուածբարեխօսութեամբ սրբոյ Յովհաննու կարապետի և Ախթանագինեի վկային և հօրէն Խոտաճարակացն և ամենայն սրբոցն, յիշելոցս և յիշողացդ ողորմեացի և նոցա վարձք յաւիտեանս ամէն։

Ընկալ սուրբ կարապետ ՚ի թերատար, յապաւկար և մեղաւոր և յանարժան ծառայէս զաւետարանս հրաշալի սրպէս Քրկինն աշխարհի պսեռնել այրուն։ Եւ որք չանան դոզանալ կամ հանել զսա յայն սուրբ ուխտէն նզովեալ լիցին Հոգւով և մարմնով։»

38. Տ. Յովհաննէս Է.՝ յամի Տեառն 1316. յաւուրս որոց լինի ժողով ընդ Սիս, և ժողովին Ատանայ և յամի 1319 կործանումն Անի քաղաքին։

39. Տ. Դաւիթ Գ.՝ յամի Տեառն 1342։

40. Տ. Յովհաննէս Ը.՝ Ալենախ. ժամանակակից Տ. Մեսրովբ Արտազեցի կաթուղիկոսին. թուին ՊԺԴ. 814, Քրիստոսի 1360-1365-1372։ Ս. Առաքելոց վանքին Բերդակի եկեղեցւոյն նուիրուած ձեռագիր ճաշոցի յիշատակարանը. «Ի Հայրապետութեան Տեառն Մեսրոպայ, յեպիսկոպոսութեան Տ. Յովհաննէս Արքեպիսկոպոսի. և համանուն Ալենախ կոչեցեալ Ի սպասաւորութիւն Սրբոյ Կարապետին, Ի քաղաքին Մուշ, ընդ հովանեաւ Ս. Մարինէի, ձեռամբ Մարտիրոսի։ Եւ խոշոր գրիս անուշագիր լերուք, զի յոյժ ծեր էի և ոչ էր ժամանակ գիր գրելոյ, այլ Ի հարկէ ձեղեւ և թուղթն թանկ էր։

41. Տ. Յակոբ՝ ձգնաւոր. յիշուած Թովմա Մեծոփեցիի պատմութեան մէջ 1372-1385, նըշանաւոր իր բարեգործութիւններով։ Յաւուրս որոց Լեւոն Լուսինեան Ջ. վերջին Թագաւորն Հայոց ըմբռնի յեգիպտացւոց և դնի Ի բանտ. բառնի Թագաւորութիւն Հայոց և աւարի աշխարհն կիլիկիոյ. յորում ժամանակի էր կայսր Յունաց Յովհաննէս Բալէոլոգ և Թագաւորն Օսմանցւոց Սուլթան Մուրատ Ա. և յամի 1382

Լեւոն արքայն աղաւի ՚ի բանակ և առ ՚ի կանգնել զիշատակութիւն Հայոց՝ դնայ ՚ի Հռոմ, ՚ի Սպանիա, ՚ի Գաղղիա, և ՚ի խաչակրաց ոչ առայեալ զօգնութիւն, դայ և մնայ ՚ի Փարիզ ՚ի մայրաքաղաքն Գաղղիոյ և վաղճանի անդ։

42. Տ. Աբգար 1385-1408։ 1390 ին Թագաւոր Լէնկթիմուր խան իւր մեծ բանակով Մուշ կը մտնէ և կ՚ակսին ընդհանուր ահաբեկութիւնք։ Այս արշաւանքներէն առաջուան, դէպ ՚ի Ս. Կարապետի վանքը կը դիմեն Արճիշոյ Մեծոփայ վանքի վանահայր ճգնաւոր Գաւիթ վարդապետ, անոր աշակերտ ճգնաւոր Բարդուղիմէոս, մեծաքան կարգաւոր վարդապետներ եւ մերայիր կերպով կը պատսպարուին, մինչեւ որ յարձակումները դադար կ՚առնեն . . . ։ Այն առեն Խութայ ամիրան էր Շէխ Շարաֆ . . . ։

Գ. Յիշատակարան քարուճք Աստուածածնչիկ անուն մատաղաթ ձեռագիր գրքէն, որ 1895 ին կը գտնուէր Մակարայեցւոց վանքում. «Եւ եղեւ ըրաւ Հայոց տումարն ՚ի կրկին քառից հարիւրոց և քանից տասանց և քառից Թուոց (844). Քրիստոսի 1395, յայնմ ժամանակի որ եկն Լհաս յաշխարհս Թամուրլէնկ կոչեցեալ և ես էի ՚ի գաւառն Առաքելոց և Թադէի առ ոտն երջանիկ բարեւնապետին Գրիգորի։

43. Տ. Աւետիս, յամի Տեառն 1415-1424, գրեթէ ժամանակակից Ամթայ Առաջնորդ Տ.

Միրակ եպիսկոպոսն, որ բանաստեղծ ու դպրեվանքի վերակացուն էր Նագաշ անունով. 1405-1410։

44. Տ. Յովհէփ՝ յաւի Տեառն 1424-1433, յիշատակուած Ս. Յովհաննու վանքի ձեռագիրներու մէջ, պաշտօնավարու թեան շրջանը հաստատուած 1424-1433ի տեղեկութիւններն ըլլալու է, բայց ինքը ողջ էր մինչեւ 1444ին։

45. Տ. Գրիգոր Ե՝ յաւի Տեառն 1436։ Յիշատակուած Սուրբ Էջմիածնի յաւի 1440ին գումարուած եկեղեցական ժողովում։

46. Տ. Թորոս՝ յաւի 1455. պատմութեան Թովմաս Մեծոփեցին կը յայտնէ իր յիշատակարանի մէջ թէ՝ կաթուղիկոսական ամբոխը Սիսէն Ս. Էջմիածնի վանքը թեան և Տ. Կիրակոս Վիրապեցւոյ կաթուղիկոսական ընտրութեան առթիւ գումարուած եկեղեցական ժողովին թէև անձամբ ներկայ չէին, սակայն դրութիւն կերպով իրենց համահաճ հաստատութիւնը յայտներ էին, նաեւ Տարօնոյ Ս. Կարապետի վերահսկիչ Ովհաննէս Տ. Աւետիս եպիսկոպոս, Տ. Յովհէփ եպիսկոպոս, Տ. Գրիգոր և Տ. Թորոս եպիսկոպոսները յաւի 1441ին։



ԳԼՈՒԽ Ը.

47. Տ. Յովհաննէս Ը. Արդարն Բաղկեցի (*) յամի Տեառն 1463 և՛ ի Թուին Հայոց ՉԺԲ. 912 էր վանահայր տեառնչ և վերակացու կարգեալ Աստուածայնին ընտրութեամբ Իննակնեան վանայրն Սուրբ Կարապետի, որ էր վարժեալ՛ ի տղայութենէ պարկեշտ վարուք՛ ի կրօնս Աստուածպաշտութեան՛ ի նոյն սուրբ ուխտին Իննակնեայ որ և առաքելատար հովուէր զբանաւոր հօտս Քրիստոսի ուղիղ վերակացութեամբ, ոչ սրպէս ախրելով հօտին, այլ զանձն օրինակ տուեալ, առնելով և ուսուցանելով, և վայելէր յաշտանակս եկեղեցւոյ իբրև ղՅահս պայծառս՛ ի պարծանս աղգիս Հայոց։

Եւ քանզ բարւոք յօժարութեան զոր ունէր և սուրբ հովիտպատան Յովհաննէս ձեռնարկեալ նորոգեալ վերատին զտաճար սրբոյ Կարապետին. և յօրինեալ զնա գեղեցիկ չինուածով ձեռնարկեցին՛ ի մեծ կամուղիկէն՛ ի վկայարանս սրբոյ Սահմանողին նախավկային և այնպէս կային և զործէին մեծաւ ուրախութեամբ։ Զոր տեսեալ վիշապն անօրէն, օձն կամակոր, թշնամին արդա-

---

(*) Տե՛ս՛ ի ճառընտիր Գ.Լ. ՃՀԹ. 179 եւ երես 1331 յորմէ ընդօրինակեցաք զպատմութիւնս սորա;

րութեան սատանայ զայնպիսի յառաջդիմու-
թիւն՝ եպիսկոպոսին, ոչ կարաց ժուժել յաւուրն,
այլ տուան ածեալ չարին և յարոյց պատերազմն
՚ի վերայ նորին : Եւ շարժեաց ՚ի նախանձ աղգ մի
Բիւրա որ Տմբլիկ կոչեն, որք բնակէին ՚ի նոյն
գաւառն Տարօնոյ՝ առ սատրոտով լերինն Տօրոսի:

Որք դնացեալ առ իչխանն գաւառին, որոյ
անուն էր Խալիլ, և ղրաբանեցին ՚ի վերայ ե-
պիսկոպոսին, թէ « զմզկիթի քարերն տարեալ է
սորա և չարեալ յեկեղեցին ». վանորոյ կալեալ
կապեցին զեպիսկոպոսն և տարան ի քաղաքն Բաղէշ
առ ամիրապետն Շարաֆ և առ նախարարսն իւր :
Եւ նոցա ոչինչ գինեալ և ոչ զսաւդն լմացեալ,
վաղվաղակի եռուն զնա ՚ի ձեռն անօրէն գահճա-
յըն և հրամայեցին արտաքս հանել առենէն ՚ի
տեսութիւն քաղաքին : Որ և անդէն մերկացուցին
զնա, և արկին զպարան ՚ի վիզ նորա՝ և հանեալ
՚ի բարձր տեղի մի, որ կոչի Շահնշի, ճնալով հրա-
մանաց ամիրային, թէ զինչ արասցեն զնա : Իսկ
եպիսկոպոսին պատճառանօք գաւեալ ՚ի նոցանէ
և կոչեաց առ ինքն զմի ոմն ՚ի գահանայից քաղա-
քին, որ անդ կայր : Եւ կատարեաց զգաւանու-
թիւն ուղղափառ հաւատոյս ճշմարիտ խոստովա-
նութեամբ և հաղորդեցաւ ՚ի փրկական մարմնոյ
և յարենէ կենսարարին մերոյ, զոր յառաջագոյն
բերեալ էր ընդ իւր : Եւ ասացեալ զգոհացողա-
կան ալօթս, դարձաւ անդէն առ զինուորան : Եւ

նոցա բաղում հարց և փորձ տրտրեալ ընդ նմա նենգութեամբ, զի թերեւս կարասցեն պատրել զնա բանիւք : Եւ առաքեցին զկնի նմա ընդ երեսս և ընդ թիկունս, մահ սպառնալով՝ եթէ ոչ լուիցէ և դարձցի յօրէնս նոցա : Իսկ երանելին ոչ ինչ զանգիտեալ՝ ինոցանէ ամենեւին, այլ տայր համարձակ պատասխանս և յանդիմանէր զանձն մոլորութիւն նոցա : Եւ ապա քարշեալ զնա անարի բռնութեամբ ընդ քաղաքամէջն և տարան կացուցին հանդէպ դրան բնդդին և կուտակեցաւ ամբոխ յոյժ ի վերայ : Եւ բորբոքեցին հուր ի տեղւոջն, զի սրբեսցեն զնա և ասիպէին թէ՝ ուրացիր զքրիստոս և դարձիր յօրէնս մեր և ղերծիր ի մահուանէ, և բաղում պատիւս և պարգեւս ընկալցիս ի մէնջ և մեք զքնաս, զոր արարեր, չնորհեմք քեզ : Իսկ նա պատասխանեալ ասէ. «Խոստումն ձեր ընդ ձեզ լիցի ի կորուստ. մինչեւ ցայժմ աստուածպաշտութեամբ կեցեալ եմ՝ ոչինչ դիտելով խիղճ զանձնէ և այժմ անկանիլ յանաստուածութիւն, որպէս զանուղղայ ազգդ ձեր, վասն առօրեայ ժամանակիս և առաւակայ փափկութեան, աննիւար է ինձ այդմ լինիլ : »

Եւ նոքա առաւել ասիպէին զնա և ասէին. «Ասա՛ բան ինչ և ազատիր ի մահուանէդ և կացպատուով» : Իսկ նա՝ի պատասխանելոյ և յանդիմանելոյ զնոսա ոչ դադարէր : Եւ նոքա լցեալ բարկութեամբ կրճտեցին զատամունս իւրեանց

՝ի վերայնորա և ասեն. «Ո՛ Մըղդուն(*), դիտեա, որ քակեցեր զմկրտիմն և չինեցեր եկեղեցի. արդ հատանեա բանիկ մերոց, և եթէ ոչ՝ կրակով խորտուիս և չարաչար մեռանիս՝ի ձեռաց մերոց։ Իսկ նա կայր անժուռն, որպէս զքաւն անմեղ մատնեալ անողորմ գայլոց, որք աստերամերկ պատեալ էին զնովաւ որպէս դաշտն կատարչի արդասըյն արեան ծարաւի, և խոճատեին զնա բանիւք առաւել քան սրով։ Իսկ նորա ղերծեալ՝ի ձեռաց նոցա և դիմեաց լինքնին՝ի հուրն. եկայ՝ի մէջ բոցոյն և ասէ. «Տոչորումն հրոյս կակղադոյն է քան զխաստութիւն սրոյ ձերոց, որ պիտէ պահել զքնութիւնս իւր առաւել քան զձեզ»։ Եւ նոքա ևս՝ի բարկութիւն չարժեալ՝ բորբոքէին զհուրն վրովք դարբնաց։ Եւ նա կայր՝ի մէջ հրոյն արիաբար և վառաւորելով զԱստուած ոչ դադարեր։ Իբրև տեսին թէ ոչ ինչ օգտեցան այնու, դրոհ տուեալ ամենեցուն՝ի վերայ նորա և քարշեցին արտաքս՝ի հրոյն, և ահար մի ումն՝ի նոցանէ ուժգին զկոզ եպիսկոպոսին սրով և նա յոյժ նուաղեցաւ և անկաւ յերկիր։ Եւ ամենայն բազմութիւն ամբոխին ձեռնամուխ եղեն՝ի նա քարիւ և փայտիւ որպէս է այս աւանդութիւն նոցա չարութեան, զի ամենեքեան մասնակից լինին և վարձատրեսցին վասն նահատակութեան Յա-

(*) Մըղդ- քիւրտերէն բառ մ'է, որ կը նշանակէ՝ չար ոգի։

տուծոյ, ըստ այնմ որ ասէ Տէրն թէ՝ «ամենեքեան որք սպանանիցեն զձեզ, համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ», և այնպէս գայր ի վերայ նորա բազմութիւն քարանցն՝ որպէս զտարափս կարկտի և ծածկեցաւ ի խուռն քարանց յարձակմանէն։ Եւ այսպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած, որպէս խունկ անոյշ ընդունելի Աստուծոյ։ Եւ ապա հրաման եւս ամիրապետն Շարաֆ քրիստոնէիցն ի նմին աւուրն բառնալ և թաղել զնա։ Զոր յառաջագոյն հարճուկս արարին արձակել զնա վասն քրիստոնէից քաղաքին։ Եւ եկեալ արքեպիսկոպոս քաղաքին Տէր Յովհաննէս ամենայն ուխտիւ եկեղեցւոյն, և ժողովուրդք բարձին զպատուական մարմին նորա և տարան յաւարտ եկեղեցին ի վկայարանս սրբոյն Սարգսի զօրավարին, և կատարեալ հանդիսիւք զպաշտօն երեկորեայ մինչեւ ցառաւօտն, և մատուցեալ ըզխորհուրդ փրկական պատարագին, եդին զնա ի տապանի առաջի սրբոյ սեղանոյն սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Կատարեցաւ Ս. Յովհաննէս եպիսկոպոսն քաղց ամսոյ 29 և ապրիլ 19, յաւուրս յինանց յերկրորդումն շաբաթու երեքշաբթին, զկնի Նոր Կիրակէին ի հասարակ աւուրն, որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած Ազգիս Հայոց։ Ամէն։

48. Տ. Ստեփաննոս Գ. Շնեցի, անմիջական յաջորդ Տ. Յովհաննէսի յամի 1463։

Տ. Սահմանի մասին մի համառօտ տեղեկութիւն կը դանենք դարձեալ նոյն աղբիւրէն, Ա-լաշկերտի Տ. Յովհաննէսի տպեալ յիշատակարանները փոքրիկ հատւածոյի քաղուած նոյն ձեռագրէն կարնոյ Երկայնիատ գիւղի։ Այս ձեռագիրը այժմեւուրքը նախ գրուած է Աբծկէ, ՚ի յիշատակ Ս. կարապետին ու ժամանակներէ ետքը՝ տիրող պայմաններու երեսէ, գայած հասած մինչեւ հոն։

49. Տ. Մկրտիչ Ա.՝ ՚ի թվ. Տումարի Ջի. (220) 1471։

Հայրապետն ուխտիս Ս. Գլակայ Տ. Մկրտիչ, հանդերձ հաւախոհ եղբարբք ձեռնարկեցին ՚ի չինել զգմբէթ Ս. Կարապետին և Ս. Յարութեան տաճարին օժանդակութեամբ երջանիկ դիտապետին՝ Շխենոյ Տ. Սահման Եպիսկոպոս մականուանեալն։

50. Տ. Մելքիսեդեկ Ա. որոյ յիշատակարանն գրեալ է ՚ի մագաղաթեայ հրաշալի Ս. աւետարանի թագաւորին Հեթմոյ, զոր ինքն Տէր Մելքիսեդեկ եպիսկոպոս յիշեալ Ս. աւետարանի արծաթապատ և ոսկեզօծ կողքին վրայ, հետեւեալ յիշատակարան դրել տուած է արծաթեայ դրովք՝ այսպէս.

«Տէր Աճ Ցո Քս, որ նստիս ՚ի քերովբէական աթոռս, ողորմեա քո արարածոյս. և զառուղ արծաթոյս Մելքիսեդեկ եպիս-

կոպոս Ծ. կարապետի յիշեցէք, ղկաղմող պատկերացս ղկարապետ աբեղայս յիշեցէք, ղսկեւրիչն Ֆանոսը և ղՇահղուամին յիշեցէք։ Ի թվին ՋԽԲ. 942 և յամի Տեառն 1493։»

Ա. յս սուրբ Աւետարանը ամենօծ չքնաղ և սքանչելի պատկերօք և ծաղկադրովք զարդարեալ և է այժմ եղեալ ի վանս Սբոյ կարապետի, և պահի իբրեւ զանձ անգին Հայկազնեան սեռի, և երկրպագի ՚ի չքմակայ բարեպաշտ ժողովրդոյ մինչեւ ցայժմ։ Առնէ բազում բժշկութիւնս, և փարատումն ամենայն ցաւոց և հիւանդութեանց։

51. Տ. Սահման Դ. Տարօնացի. յիշատակարան մը թվ. ՋԾԲ. և Բ. ՋՂԴ. 1503-1505 ին. (յիշատակութիւն Ս. Յովհաննու դանձարան անուն մուղմ ձեռագրին թվ. Տումարի ՋԺԴ. 1505 ին։ «Փառք ևն. Արդ զբոյս զիրքս ՚ի դուռն Մշոյ Ս. Կարապետին ձեռամբ Տ. Մարտիրոսին, ՚ի վայելումն Տ. Սահմանուս եպիսկոպոսի, յիշատակ հոգւոյն Ծնողաց Մամախին, Մրուաթին, յընտիր և հաւատարիմ օրինակէ Ծերենց Գրիգոր . . . Աճ բարով վայելումն ասցէ նմա ընդ երկայն աւուրս, ամէն։ Եղբարք, յորժամ կարդայք կամ օրինակէք, Աճ ողորմի ասացէք Տ. Սահմանուս եպիսկոպոսին. ով զսա առանց հրամանի Տ. Սահման Եպիսկոպոսին հանէ կամ գողանայ, ղպատիժ կայենի առյէ ևն.։*

52. Տ. Զաքարիա Ա.՝ յամի Տեառն 1504։ Յիշատակարան Պղպեայ ձեռագիր Աւետարանին, որ Ս. Յովհաննու վանք կը գտնուէր և ուր, ինչպէս նշանակեցինք, յիշուած էր Ս. Կարապետի Տ. Զաքարիա Հայրապետը ևն. «Արդ դրեցաւ Ս. Աւետարանս ՚ի վերջացեալ և ազատեալ ժամանակիս ՚ի թվ. Հայոց ՋՄԹ. (1504) ՚ի հայրապետութեան Տեառն Սարգիս կաթուղիկոսի յԵղմիածին,՚ի թագաւորութեան այն որ Սաւֆին եղաւ, ո՚չ պարսն եթող և ես պահի . . . ձեռամբ Յովհաննէս անարուեստ դրչի, ՚ի գիւղն Բաղիշոյ որ Ամբ կոչի, ՚ի դուռն Ս. Յակովբայ Հայրապետին, ուսեալ իմ դուստրմն մանկութեան և զարուեստ դրչութեան՝ զծաղիկն, զկապն ՚ի Մարութիոս վարդապետէն . . .։ Յիշեցէք և ողորմի ասացէք, որ ՚ի Ս. Կարապետ Հայրապետն էր հանդուցեալ Տ. Զաքարին» ևն։

53. Տ. Յովհաննէս ժ.՝ յամի 1509

54. Տ. Յակոբ Ա.՝ յամի Տ. 1515։

Հայրապետք Ս. Կարապետի վանուց Մշոյ.— Աւետարան Պղպեայ ձեռագիր դրուած այսպէս Մշոյ Ս. Կարապետի վանքին մէջ. «՚ի Հայրապետութեան Տ. Եղիշէի, արդեամբք տանուտէր Մխիթարին, ձեռամբ Տ. Մարութիոս քահանայի, յիշխանութեան Շահ Իսմայիլին, ամիրային Մէր Սուար սկիզբ և որպէսզի նորա խոլըթ սկիզբ, յամի ՋՄԸ. 958 (և Քրիստոսի 1509) յիշեցէք և ողոր-

մի ասացէք առաջնորդացն Ս. Կարապետի վանուցս Տ. Մելքիսեդեկի, Տ Յովսեփայ. Տ. Սահվանոսի, քալ բաբունապետին, Տ. Գրիգորի, և հայրապետացն նոյն վանացդ Տ. Մկրտչի, Տ. Յովհաննէսի և Տ. Յակոբայ ևս և զորուպ գրոցս զՄարտիրոս քահանայս» ևն։

55. Տ. Ղազար. թվ. ՋԿԹ. 969 (1520) Ս. Առաքելոց վանուց վանահայր. սա Ս. Կարապետէն գնացեր է Վրաստան, բայց ի՞նչ նպատակով, ձեռագիրը բան մի չ'ըսեր. անոր հետ ուղեկից էր նաեւ. Տ. Սահվան վարդապետ՝ վանահայր Ս. Առաքելոց, ինչպես կը տեսնուի յիշատակարանի մեկնութիւն Ս. Յովհաննու Աւետարանչի անուն ձեռագրէն, որ Ս. Առաքելոց վանք կը գտնուի։

56. Տ. Աստուածատուր Ա.՝ յամի 1549, որ յիշատակեալ է 'ի ձեռագիր մատենի Հարանց վերոյ այսպէս.

«Բարեխօսութեամբ և աղօթիւք Սրբոց Հարցն և Տեառն Ներսէսի Շնորհալւոյ, ողորմեա՛ Քրիստոս Աստուած առացողի գրոյս Տ. Թորոս Եպիսկոպոսին և իւր ծնողացն, որ և խնդրեաց զպատմութիւն 'ի Ս. Հարանց, վասն Ս. Կարապետի վանացն Գլակայ, որ այժմ Ինեակնեան կոչի և ես անարուեստ և անարժանս Աստմա՝ յանձն առի և գրեցի զսա վասն յիշատակ լինելոյ սորա 'ի դուռն Սուրբ Կարապետին, և զը-

բերաւ սա ՚ի Թուականիս Հայոց ՋՂԸ. 998. ՚ի Ս. քաղաքն Երուսաղէմ, ՚ի յառաջնորդութեան Գլակայ վանային Տէր Աճատուր եպիսկոպոսին և ՚ի Տէր Անդրէասին եղբօրորդւոյ նորին, որ յայսմ ամի և սա եղեւ եպիսկոպոս։

Աղաչեմ զձեզ սուրբ հարք և եղբարք, որ ընթեռնուք զպատմութիւն Ս. Հարանցն, ողորմի ասացէք Թորոս եպիսկոպոսին և Յատմ գրչիս. ամէն։» ՚ի թվ. վրկչի 1549։

57. Տ. Անդրէաս Բ.՝ յամի Տեառն 1550-1557։ յիշատակուած Հարանց վարք ձեռագրի յիշատակարանին մէջ։

58. Տ. Մելքիսեդեկ Բ. ՚ի տանէն Պալունեաց՝ յամի Տեառն 1560. յաւուրս սորա չինեցաւ եկեղեցին Սրբոյ Կարապետի մինչեւ ցհիւնս ութն, արդեամբ և չանիւք բարեպաշտ իշխանին Խօճա Պուտախի, որոյ յիշատակարանն գրեալ կայ ՚ի վերայ սեանն, որ է առ դրանն սրբոյ գերեզմանին. «Չինեցաւ ժամատունս. յիշեցէք ՚ի Քրիստոս զխօճա Պուտախ և զիւր կողակից զխանզադան և զիւր դուստրն զնոր Մելիքն, որ բազում խարճերաց ՚ի դուռն Ս. Կարապետին ՚ի թվ. ՌԹ. 1009 և յամի Տեառն 1560։»

Եւ ապա վաղճանի յիշեալ վանահայր և այժմ թաղեալ է յարեւելս եկեղեցւոյ ութ քայլ հեռաւորութեամբ, յորոյ վերայ կանգնեալ կայ 3 մէթր բարձրութեամբ հիանալի վորագրուած

մահարձան մը, որ ունի հետեւեալ յիշատակարանը. «կանգնեցաւ խաչս ՚ի վերկուԹիւն հոգւոյ ՄելքիսէԹ եպիսկոպոսին, Տէր Ներսէսին և ծնողաց մերոց, ամէն: Թվ. ՌԺԲ. 1012 և յամի Տեառն 1563:»

59. Տ. կարապետ Ա.1561, որ զՄուրբ կարապետի դմբէԹն նորոգեաց մեծաւ չանիւք, Թվին տումարի ՌԻԵ. 1025 (1576) յիշատակուած Ս. Յովհաննու վանք եղած ԹղԹէ ձեռագիր աւետարանի մէջ, գրուած ձեռամբ Աւետիս սբեղայի, նըպաստիւք տանուտէր Գասբարի ՚ի Բազու գիւղ Մշոյ, ընդ հովանեաւ Ս. Ծ ածնին ևկեղեցւոյ Թվ. ՌԻԵ. 1025:

60. Տ. Յովհաննէս ԺՈ. Շևենց՝ յամի Տեառն 1580:

61. Տ. Մարտիրոս՝ յամի 1580, որոյ ձեռքով չինուեցաւ խանն Ս. կարապետի Թվ. ՌԻԹ. 1029. Քրիստոսի 1580ին, ՚ի գառն և ՚ի նեղ ժամանակի բազում աշխատու Թեամբ: Յիշատակուած ԹղԹէ աւետարանի մէջ, գրուած ՚ի Բազու գիւղ ձեռամբ կարապետ գրչի:

62. Տ. կարապետ Բ.՝ յամի Տ. 1581, որ եւս գրել զԹղԹեայ աւետարանն ՚ի մեծափառ անապատն Մոկաց, որ կանանց վանք կոչէ, ՚ի յիշատակ եղբօր իւրոյ Տ. Սահակայ, ձեռամբ Տ. Մոեփաննոս քահանայի և ծաղկաքաղ Առաքել աբեղայի, Թվ. ՌԼԵ. 1035 (1586): Սա նախորդն է Տ. Մար-

տէրոս Արհ-եպիսկոպոսին, մեծ բաբունին կարա-
պետ վարդապետ, որ երկու անգամ ստայեր է
առաջնորդութիւնը։

63. Տ. Աբիստակէս Ա.՝ յամի Տ. 1601. յիշա-
տակուած Հ. Ջամչեանի ընդարձակ պատմութեան
մէջ. ծանօթ է նաև ձեռագիրներէ։

64. Տ. Աբիստակէս Բ.՝ յամի Տ. 1654. ’ի գա-
ւառէն Ապահունեաց. սա ’ի թվին Հայոց ՌՃԳ.
1103, Քրիստոսի 1654, ղոյս յԱստուած եղեալ,
սկսաւ նորոգել զմեծ և զհոյակապ դմբէթ Սրբոյն
Սահմանոյն՝ բարձրաբերձ և սրբատաշ յօրին-
ուածով; այլ և զսահդեր երկու դմբէթից և զպա-
րիսպն, որ և շրջապատէ զվանս և զաղբիւրն բա-
րեհամ և զմեծ դուռն—դարկեահ՝ կամարակապ
երկաթապատ դռներով, նաեւ զսենեակսուն-
խցիկներով, այլ և զտեղի խոտաճարակ ճգնաւո-
րաց հոյակապ եկեղեցին։(*) Յիշեալ եկեղեցւոյ
յիշատակարանը այսպէս գրուած է.

«Յիշատակ է եկեղեցին, նորոգեցաւ ձեռամբ
Աբիստակէս եպիսկոպոսին, թվին Հայոց ՌՃԳ.
1103։» Եւ զայլ խախտած տեղիս նորոգեաց։

Սա ազատեաց զվանուցս գրաւ եղեալ դըր-
եանք և անօթք ’ի ձեռաց այլազգեաց, որ կայ

(*) Յիշեալ եկեղեցին թաղուած կան Անտօն, կրօնիդէս, եւ եօթն խոտաճարակ ճգնաւորք։

յիշատակուած ՚ի լուսանցս սուրբ աւետարանին Հեթումոյ բարեպաշտ թագաւորին այսպէս.

«Նաեւ Արիստակէս եպիսկոպոս սոսկալի սուրբ ժամադիրքս և եղև յիշատակ ՚ի դուռն Սուրբ Կարապետին, այլ և ընդ նմին սոսկալի և աղաւեղի զգրաւ եղեալ գրեանս ՚ի սուրբ տանս և յայսմաւուրքն ի և զՀեթում բարեպաշտ թագաւորի խաչիւ սուրբ աւետարանն պատեալ և զարդարեալ ներքոյ և արտաքոյ զանազան յօրինուածով և ոսկեզոյն երանգօք.

Ընդ նմին և փոքր մազաղաթեայ սուրբ աւետարան մի՝ նոյն գունակ ոճով և երկու խաչվառ ոսկեթել շուրջառ մի և այլ բազում անօթք, որք էին զրաւ ՚ի ձեռս այլազգեացն.» Զոր Տէր Ասուած յամենայնի տայէ վարձս ըստ վաստակոց իւրեանց. ամէն:

65. Տ. Յովհաննէս ԺԲ.՝ յամի Տեառն 1680:

66. Տ. Ներսէս Գ.՝ յամի Տեառն 1695, որոյ անուն յիշատակեալ է ՚ի ձեռագիրս մաշտոցի այսպէս.

«Դարձեալ յիշեցէք ՚ի Քրիստոս Ասուած վերանորոգող սուրբ տաճիս զՀայր մաշտոցիս, զՆերսէս բարեւնեաց պետ, զառաջնորդ սուրբ ուխտիս Ամլորդւոյն, որ եւս զսա վերստին նորոգել և կազմել և եղ յիշատակ ՚ի դուռն Սուրբ Կարապետի վանից ՚ի թուականիս Հայոց ՈՃՂԳ. 1144:»

67. Տ. Կարապետ Գ. Հարքայ՝ յամի Տեառն 1698։ Ի սորա ժամանակս նեղ անկանի վանս Ինանկնեան յանդուն թ պարտատեարց, զոր յիշատակէ Յովհաննէս Կոլոտ Բաղեշցին յիւրում յիշատակարանի. «Իսկ զպարտատեարց զանյագ և զանիրատալն առ ժուռն Ի դէր ոչ կարեմք արկանել. նաեւ զվեր ողորմելի լինելն Ի ձեռս այլատեռից և ոմանց դիւզորէից. և զայս ոչ միայն յանհատաոից կրեաք, այլ և ի մերազնէիցն։»

Եւ յաւուրս սորա եկին Ի հրաշալի վանս Սրբոյ Կարապետի զուգափառ և համապատիւ սրբազան հարքն երկոքեան՝ Յովհաննէս Կոլոտ և Գրիգոր Ծղթայակիր, Ի թվին Հայոց ՌՃԾԴ. 1154 և Փրկչի 1705։ Եւ յաւուրս սոցա վաղճանի Տէր Կարապետ եպիսկոպոս վանահայր Վանայն սրբոյ ուխտին, և յաջորդէ Յովհաննէս Կոլոտ մականուանեալն։

68. Տ. Յովհաննէս ԺԴ. Բաղեշի մականուանեալն Կոլոտ եկաց վանահայր Մուրբ Կարապետի յամի Տեառն 1705։ Սա պատմէ Ի յիշատակարանի իւրում ընդարձակ կերպիւ զվիճակն սուրբ վանացն, զերկրաշարժն և զնորոգ շինուԹիւն կաԹուղիկէին և այլոց տեղեաց։

69. Տ. Գրիգոր Ե. Ծղթայակիր Բաղեշի։

ԳԼՈՒԽ Բ.

70. Տ. Յովհան Ա. որին վանահայրութիւնն աւանդեմք ի կոնտակի միւռմ, զոր տուեալ է նա վանահօր վանից սրբոյն Յովհաննու և պահեալ է ի դրադարանի նոյն վանուց, որ ունի գՀետեւեալ թուականն Հայոց ՌՃԿԹ-1169 և յամի Տեառն 1720։

71. Տ. Աբրահամ Բ. Խոշապայ. սա մեծ չաւնիւք վճարեաց զպարտս նոյն վանուց և արար շինութիւնս բազումս, և ապա կարդեալ կաթուղիկոս Ս. Էջմիածնի յամի Տեառն 1726 և թուին Հայոց 1175, որոյ անունն յիշատակեալ է ձեռադիր ոսկեզօծ մագաղաթեայ աւետարանի միում այսպէս.

«Արդ ցանկացող եղեալ այսմ աստուածապատում և քրիստոսաւանդ տառիս աւետեան պարկեշտութեամբ զարդարեալն աստուածասէր փառակից Աճամ տէրացու Դանիէլին, որ հրամանակատար եղեւ ըստ Տեառն բանին, որ դրեալ կայ ի սուրբ աւետարանիս. վաճառեցէք գինչս ձեր և տուք ողորմութիւն և կամ յիշատակ՝ և արարէք ձեզ քսակ դանձ անպակաս յերկինս. ճշմարտապէս մայրս մեր Սիոն սուրբ եկեղեցի երկինն է ի վերայ երկրի։ Զայս պաշտելի և երկրպագելի ընդ աւետարանս բաշխեաց և դանձեաց ի Տարօնոյ Մշոյ Սուլթան Մուրատատուր Սուրբ կարապետաւ

վանիցն և եդ յիշատակ։ Եւ դարձեալ ունկնդիր եղեւ սրբազան Առաքելոյն ցրոյն, որ ասէ. Երանի որ ունկնդիր լսէ զաւակ ՚ի Սիոն և ընտանի յԵրուսաղէմ, զաւակի ցանկանալով անչնչելի յիշատակ առացայ։

Բայց դրեցաւ սա յաշխարհն Յունաց և յերկիրս Խրիմի ի հոյակապ և հռչակաւոր քաղաքին որ կոչի Կաֆայ, ընդ հովանեաւ և առ ոտն սուրբ Նիկողայոսի սքանչելագործ արագահաս Հայրապետի և այլ բազմահաւաք սրբոց, ձեռամբ անխմաստ, ոչինչ և յանձնեալ դրչի՝ քրիստոսապարտ մեղսամած երիցու ՚ի Թուաբերութեանս աս. քառնաղեան և աբէթական տումարի Ռ՚ՃՀԶ-1176, և ՚ի գալստենէն կենարարին Ռ.ՉԻԶ. 1726. և յելից Ադամայ ՚ի դրախտէն փխէ. ՚ի հայրապետու-թեան Տեառն Կարապետի Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, և. Սուրբ Երուսաղէմայ Պատրիարքի Տեառն Գրիգորի և Կ. Պօլսոյ վերադիտողի Տ. Յովհաննէս Աստուածաբան վարդապետի, և Չէնկլի ձայն բարբառոյ յանապատի Սրբոյ Յովհաննու կարապետի Տեառն Յիսուսի Մկրտչի սուրբ վանիցս առաջնորդի Տ. Աբրահամ սիրապատում եպիսկոպոսի և նորին նուիրակ Մաղաքեայ Աստուածաբանութեան վարդապետի, որ և սա վերակացու եղեւ ՚ի յորդորումն և յաւարտումն ոսկեղօծ և սուրբ աւետարանիս և հիւսիսական կողմանց ՚ի յերկրիս կաֆաու վերատեսուչ և առաջնորդ Տ. Աւետիք եպիսկոպոսի և

Տ. Սահմանեսի Աստուածածնան վարդապետին, զոր տէր Աստուած 'ի կամս ազգիս մերոյ ետուն ամէն։» Քիշեալ աւետարանը այժմ սուրբ կարապետի վանուց մէջ կը դանուի։

72. Տ. Ներսէս Գ. Տարօնացի, որ յիշատակեալէ 'ի Տաթեւայեցոյ ձեռագիր քարոզագրքի 'ի յիշատակարանի յաջորդ շարքի սկսեալ 'ի Մխիթար Գօշէ՝ այսպէս.

«Եւ այսպէս բարւոյ ճանապարհի օրինակ մնայ 'ի նոյանէ յաղթս մեր և յեկեղեցիս մինչև 'ի մեծ և երջանիկ րաբունապետն Մխիթար, որ մանաձայնեալ լինի Գօշ. սա չնորհեալ յայտնապէս դասուցան վարդապետական յովհաննէս վանականին, նորին աշակերտ Եսայի, որ է 'ի Նիչ դասատէն, նորին աշակերտ յովհաննէս Տարօնացի, նորին աշակերտ Գրիգոր Տաթեւացին, նորին աշակերտ Դանիէլ ճգնաւորն, նորին աշակերտ յովհաննէս Հաւիճենցին հրեղէն լեզուն, նորին աշակերտ երկու անուանիք՝ մինն Գրիգոր, որ մականուանեալ Զօրթան կոչիւր, միւսն Թորոս վարդապետ. սոյն Թորոսի աշակերտ Գրիգոր Տարօնացին, նորին աշակերտ յովհաննէս կոչեցեալն Շիրակաք, նորին աշակերտ Դաւիթ Կեղեցին, նորին աշակերտ Պետրոս Կառկառեցին, որ եղեւ կաթուղիկոս Սսոյ և Պետրոս կաթուղիկոսի աշակերտ Դաւիթ վարդապետն, նորին աշակերտ Մարտիրոս Տարօնացին, նորին աշակերտ Թա-

թէոս վարդապետան, նորին աշակերտ Ներսէս Տարօնացի, որ եղեւ առաջնորդ Գլակայ վանից Սրբոյ Կարապետին Մուրատաւոր դերեզմանին, նորին աշակերտ Աբրահամ վարդապետ Կ. Պոլսեցի՝ ի թուին Հայոց ՈՃՀԹ. և թուին Փրկչի 1730։»

73. Տ. Մինաս Անկել. սա նորոգեաց զպատրիսպ և զաշտարակս Սրբոյ Կարապետի վանից և զմեհեանակս նոյն վանուց վարդապետաց, նա և զսեղանատունն և ապա եղեւ պատրիարք Կ. Պոլսոյ յամի Տեառն 1743 և ապա եղեւ կաթուղիկոս Սրբոյ Էջմիածնի։ Նորին վանահայրութիւն սէս՝ ի կոնտակն Աբրահամ կաթուղիկոսին, որ այժմ Ս. Կարապետի վանքն է։

74. Տ. Յովհան Բ. Տարօնացի՝ ի Գևղէ Կեմհայ. սա կառուցանէ զեկեղեցին Սրբոյն Սարգսի՝ ի վերին փակայ և նորոգէ զբազում շինուածս Սուրբ Կարապետի վանից, որոյ յիշատակարան դրեալ կայ՝ ի վերոյ դրանն Սրբոյն Սարգսի եկեղեցւոյ։

«Շինեցաւ եկեղեցիս յանուն Սրբոյն Սարգսի զօրավարին Քրիստոսի Յովհաննու մեծաւորին վարդապետին արդոյ ամուռոյս, նպաստուքեամբ և ծախիւք Թոխաթցի Եղիսէի որդի մահտեսի Յովհաննէսին, յիշատակ վասն ննջեցելոյն և ծնողացն Եղիսաբէթին և Հռիփսիմէին, եղբարցն Գրիգորին Խաչատուրին թվին ՈՄԲ. 1202. և յամի Տեառն 1753։»

75. Տ. Պողոս, որոյ սուրբ աղօթիւք կատարի(*) հրաշագործութիւնս ինչ Ակն քաղաք։ Սա առաջնորդեալով նախ Սրբոյ Կարապետի վանից և ապա խնդրանօք Ակնայ բարեպաշտ ժողովրդոյ երթայ անդ։

Եւ աղբիւրն նոյն քաղաքին որ ՚ի վաղուց հետէ առատութեամբ յորդէր և ոռոգանէր զնա, որ և քաղաքն անուամբ աղբերն այնմիկ՝ Ակն կոչիւր, յանկարծ ՚ի ժամանակին այնմիկ ցամաքի, որոյ առթիւ բնակիչ այլազգիք նոյն քաղաքի միաբան խուռն բազմութեամբ դիմեն ՚ի խնդիր առ Աստուած վասն առատութեան աղբերն այնմիկ և ապարդիւն դառնան յետս։ Եւ ապա Տէր Պողոս եպիսկոպոս հանդերձ բարեպաշտ քահանայիւք և ժողովրդովք և եկեղեցական դասուք զգեստաւորեալ հսկմամբ և աղօթիւք, խուռն բազմութեամբ եկեալ ՚ի վերայ աղբերն այն և ասացեալ նոցա զԱռաքելոյ աղաւնոյ չարականն, սուրբ եպիսկոպոսան հեղու ի սրբալոյս վիւռոնէն յակն ցամաքեալ աղբերն, և հրամանաւ Աստուծոյ ջուրն սկսանի յորդիլ իր նախկին առատութեամբ։

Ցիշեալ եպիսկոպոսն յորժամ դնացեալ էր ՚ի սրբոյ վանից, տարեալ էր նաեւ ընդ իւր մասն ինչ ՚ի Սրբոյ Կարապետէն, զոր ՚ի վաղճանելն իւրում՝ թողուցեալ զնա առաջնորդարանիսա քա-

(*) Ակնայ տէր Գէորգ ծերունի քահանան կը պատմէ։

ղաքի յեկեղեցւոյ Սրբոյն Գեւորգայ, որոյ գերեզմանն եւս այժմ կայ առ դրանն նոյն եկեղեցւոյ որ ունի ղտապանադիրս ՚ի վերայ շիրմին այսպէս.

«Ով անցաւորք ճանապարհի,
Խնդրի ՚ի ձէնջ տուք ղողորմի.
Եթէ ասէք ինձ հայր մեր մի,
Այսօր ինձ՝ վաղն ձեզի,
Որ ՚ի Ակնայ Աւաջնորդի,
Պօղոս արք եպիսկոպոսի,
Բազմաց արար բազում բարի,
եկեղեցւոյն դոլոլ որդի,
Շրջագայեալ ամէն տեղի.
Որ հանդիպի՛ք այսմ շիրմի,
Լիով սրտով տուք ղողորմի.
՚ի Հայոց Թուականի,
Հազար երկու հարիւր ութնի,
Սեպտեմբերի տասն և չորսի
Յամի Տեառն 1759։

76. *Տ. Յովհաննէս ԺԴ. Մոկացի. յիշատակեալ է անուն սորա ՚ի յիշատակարանի Անալօճա դրքոյն, որ լինքն իսկ անձամբ դնացեալ է ՚ի կեսարիայ ՚ի վանս Սրբոյն Յովհաննու Կարապետին հանդերձ Տէր Պօղոս և Տէր Մարտիրոս վարդապետօք և Սարկաւագ վարդանաւ և անդօրինակեալ է ղԱնալօճայ դիրք Թուին Հայոց ՌՄԺԲ* 1216 *և Փրկչին* 1767։

«Եւ արդ ես յետնեալս ՚ի բանասիրաց Յով-

հանեցէս իբրու պիտակ պետս տեղեաւ՝ ի նահանգէն Մոկաց և ընկեր ծառայ Սրբոյն Յովհաննու կարապետին ընդհանրակարօտ գահին Մշոյ, ուստի զործոյն նոյնոյ Ա[ստուա]ծոյն եկեալ՝ ի վիճակս Ասիոյ, ի յերկիրն Կեսարիոյ, ի վանքն Սրբոյն Յովհաննու կարապետին հանդերձ աշակերտօքս, որք են՝ Տէր Պօղոս և Տէր Մարտիրոս վարդապետքն և սարկաւագ ուրացու Վարդան, առընթեր Սարգսի յոգնասէր մեծի և քաղցրատիպ աստուածհիմաստ վարդապետին, զոր ողջոյնս բերքս, որում ըղձայի ի վաղուց հետէ. յորդորմամբ նոյնոյ Տեառն Սարգսի ճշմարտաբան վարդապետի եռու գրել Յեւքառացի Տէր Յակոբ հանգուցեալ քահանայի որդի ուրացու Գրիգոր գպրին, որ սիրով յանձն էառ, աշխատանօք գրեացյ, որոյ Տէր ասցէ ղկարուղութիւն, և յանգելեալ բովանդակեցաւ գրուածս մերում Թվականիս ՌՄԺԶ-1216 ամի Հայոց, յամենայնի յուսկի սկիզբն և այլն ամէն։»

77. Տ. Յովհաննէս ԺԵ. որոյ անուն յիշատակեալ է՝ ի ձեռագիր մաշտոցի Եփեսոսի և Քաղկեդոնի ժողովոյն այսպէս.

«՝Ի վայելումն Տեառն Յովհաննու Մամիկոնէից եպիսկոպոսի և Մշոյ Սուրբ կարապետի արժանաժառանգ առաջնորդի. չնորհիւ Տեառն աւարտեցի գիրքս՝ ի Թուին Հայոց ՌՄԻՍ. 1221. հոկտեմբեր ԺԱ. յամի Տեառն 1772 ՚ի ջնորդու-

դուքեամբ եղբօր իմոյ կրթողի և վարժչի նուաստիս, բազմավիշտ տառապեալ դրադիր Մատթէոսի՝ Բրաբիոն դրադրուհի՝ ի Կ. Պոլիս, ընդ Սուրբ Հրեշտակապետ եկեղեցեաւն՝ ի մանկաստանն, որոյ Խաչն ապատինեալ և ահեղահրաշ մեծ նշանէ պաշտպանեալ։»

78. Տ. կարապետ Գ. Եւդոկացի. սորա անունն յիշեալ է ձեռագիր մագաղաթեայ յաւետարանի մեր։

«Գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ նոյն ամուսին Տառայ Եւդոկացի կարապետ վարդապետին, և յորդորմամբ նորին նուիրեալ է յիշեալ աւետարանս Վանեցի Զրաբաշենց Եղիազարին և եղեալ է յիշատակ՝ ի դուռն Մշոյ Ս. կարապետին, ապեղբայր Ամուսին և շնորհաբաշխ գերեզմանին. ՚ի մուտն Հայոց ՌՄԻԳ. 1223 և փրկչին 1774։»

79. Տ. Յովհան Գ. Համթեցի, որոյ անուն յիշատակեալ է ՚ի Դիոնեսիոսի Արիսպագացւոյ կենսագրութեան վերջ հին ձեռագրի մը մէջ այսպէս։

«Ա.յս պատմութիւն Սրբոյն Դիոնեսիոսի ՚ի սուրբ քաղաքն Երուսաղէմ թարգմանեալ էր ՚ի Յունականէն ՚ի Վխտականն, իսկ ՚ի մերս թարգմանեաց Յովհաննէս քմիչկ 329 թուականին փրկչի ՚ի վառս Բրիսաոսի Աստուծոյ մերոյ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից ամէն։

Օրինակեցաւ ձեռամբ Մկրտիչ անուամբ ևեթ գրչիս իբրեւ նօտարի սրբոյ գահին Աղիրպուոյ, գաւառաւ Տարօնացի՝ ի Զիարեթ յորջորջեալ գիւղէ՝ ի թուին Փրկչի 1778 և՝ ի ՌՄԻԷ. 1227 թուին Հայոց աւարտեցաւ, ՝ի փետրվարի ամսոյ քսանին և վերոգրեալ տուրբ ամուսին գահակալութեան Տեառն Յովհաննու Համիեցւոյ, հրամանաւ լուսարարի տանն սրբոյ Տեառն Մարտիրոսի բարեջան վարդապետի Տիվրիկցւոյ՝ ի յիշատակ անձին իւրոյ։ Որ ոք ընթերցի յիշեսցէ զնա՝ ի բարին։»

80. Տ. Յակոբ Գ. իւր օրով կը նորոգուի Մշոյ քաղաքի տէր Յակոբ քահանայի տան՝ ի նախնեաց մնայեալ հին կոնտակը և կնքուեցաւ Տուրբ կարապետի վերոյիշեալ վանահօր և Տուրբ Առաքելոյ Տէր Պողոս վանահօր կնիքներով՝ ի թուին Հայոց ՌՄԼ. և թուին Փրկչի 1781։ Յիշեալ կոնտակը կը ծանուցանէ քանի մը վանքերու հիմնարկութիւն։

81. Տ. Յովակիմ, որոյ յիշատակը եպիսկոպոսական եմիվորոնի մը վրայ այսպէս գրուածէ.

«՝ի վայելումն արհի եպիսկոպոս Յովակիմ Աստուածաբան վարդապետին և առաջնորդին Սրբոյ կարապետի վանից Տարօնոյ՝ ի թվին Հայոց ՌՄԼԵ. 1235. և յամի Տեառն 1786։»

82. Տ. Աստուածատուր Բ. Տարօնացի, որոյ յիշատակն գրեալ է՝ ի լուսանցս տուրբ աւետա-

րանի Հէթմոյ Թագաւորին։ Սա ութ սիւն ևս աւելցնելով ընդարձակեաց Սուրբ Կարապետի եկեղեցին, ղանդակատունն և զգաւիթն և ապա հրայեալ տապակօք նահատակի Լևին վաշայէ յամի Տեառն 1787ին։

Դարձեալ վասն սորա կայ յիշատակեալ՝ի ձեռագիր աւետարանի միում, որ գտանի այժմ՝ի վանս Սուրբ Յովհաննու Եղրդոտի, այսպէս.

«Վերջապէս կազմեալ նորոգեցաւ սուրբ աւետարան՝ի թվոյս ՌՄԼԵ. 1235ին օգոստոս ամսոյ ԻԴ. 24ին. ձեռամբ Պողոս սրբակրօն վարդապետի Սասունցւոյ, ՝ի Սուրբ Կարապետի վանս, որ՝ի Մուշ, ի խնդրոյ Տէր Յովհաննէս քահանայի Յաբրանցւոյ, ՝ի վայելումն անձին իւրոյ։ Ի սոյն ամի ձեռնադրեցաւ նոյն Տէր Յովհաննէս քահանայ՝ի մեծ պահոց չորրորդ կիւրակէին յԱստուածատուր բազմերախտ վարդապետէ և արքեպիսկոպոսէ, որ էր առաջնորդ՝ի Սուրբ Կարապետի վանքն, որ նորոգեաց վերստին զնոյն դերահուչակ ամրոցն Յովհաննու կարապետին, որ ընկղմեցաւ՝ի մեծի շարժէն իւրով ժամանակաւ՝ի թվոյս ՌՄԼԵ. 1235ին վարդավառի կիւրակէին զկնի գալ երկուշաբթի օրն յերրորդ ժամուն, յորում պատահրատ մատուցանիւր. եղեւ կարի ահագնատեսիլ շարժումն գետնի և անկաւ կամուրջիկէն Սուրբ Ստեփաննոսի տաճարին, սեղանատունն հանդերձ վերայ եղեալ միաբանից խցիւքն, խաչքակի

խուցքն, ուխտաւորաց օտայքն, չորս պուրճքն, հարաւային կողման պարիսպն ծագէ ՚ի ծագ, վուռս հայաստան և այլ տեղիք: Եւ յայսոցս թեամբն Աստուծոյ չինեցաւ վերատին բոլոր վէմեալքն գեղեցիկ կերտուածովք հօմնապատիկ լաւագոյն քան զառաջինն չինուածան ՚ի նոյն Աստուածատուր վարդապետէն. նաև քակեաց զդաւիթն եկեղեցւոյն, որ երեքտ և արար զերկուս եան մի, և ուղիղ սիւն ևս յաւելեալ և զպանդակատունն յառաջ տարեալ չքեղացոյց չինմամբ: Արդ վէմեալ եղեւ ՚ի թվոյս ՌՄԼԹ. 1233. և նորոգոյն ՌՄԼՋ. 1236ին լրացաւ բոլորն: Այլ և ընթերցողքդ տուրբ աւետարանիս մշտապէս յիշման արժանի արասջիք զՊօղոս ճգնակրօն վարդապետան, որ բազում աշխատութեամբ ի նեղ ժամանակին կազմեաց զսա վասն յիշատակին իւրոյ ձրիապէս, զի կարի հնացեալ էր և ՚ի կազմէն իւրում տեսեալ էր յերտպղ զերաշս սրբոյ աւետարանիս և պատմեաց և զի լսողքս հրաշիկ կարի ապուշ ինացեալ զարմայաք, վասն որոյ լաւով և արտատուօք ծոմապահութեամբ կազմեաց և պատուիրեաց զգուշութեամբ և պատուով պահել զսուրբ աւետարանս ի սուրբ տեղիս, ժամանակի ի վերայ հիւանդաց և դիւահարաց ընթերնուլ հատատով և լիցի փարատումն ի պէս պէս ցաւոց, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ և յիշողքդ և պահողքդ յիշեալ լի-

Ջի.ք յԱստուծոյ քանիցս անգամ, յիշելն յիշէ.ք ողջ լերուք»։

Սակայն զանգակատան դմբէթի արեւելեան կողմ կայ առանձին յիշատակարան մը մարմարեայ քարի վրայ, որ նոյն ժամանակի թուական կը կրէ այսպէս.

«Յիշատակ զանգակատունն հանդերձ սուրբ հոգեկան եկեղեցեաւն Կարնեցի Եփրիկեան Մահտիսի Յակոբին և հանգուցեալ կողակցացն՝ Զարդարին և Թագուհոյն և Ծնողացն՝ հօրն հանգուցեալ Մահտիսի Գրիգորին և կենդանի կողակից Թագուհոյն Թվին ՌՄԼԵ ։»

83. *Տ. Յակոբ Աղպեղ. սա 'ի վանահայրութեան իւրում ղհետ եղեւ մեծ չանիւք և հոգատարութեամբ վճարել զպարսս նոյն վանուց և ապա նահատակի ձեռամբ Մշոյ Եուսուֆ փաշայի 'ի ձորակն Սահակայ, յամի Տեառն 1807 և թաղեալ է 'ի վանս, որ ունի զայս տապանագիրս.*

«Այս դամբարան մարմնոյ տեղի,
Տեառն Յակոբայ արհոյ դիտի,
Սրբոյ դահիս առաջնորդի,
Նաև կարնոյ մեծ քաղաքի։
Սա էր տեղեաւ Սամաթեացի,
Եւ աշակերտ պատրիարքի
Զաքարիայ վարդապետի.
Զորեքտասան ամս հովուեալ,
Զբաղում պարսս վճարեալ,

Որ սուրբ տանս վրայ դիպեալ։
Յարդելանայ բանտս մտանի,
՝ի կապանայ ղերծեալ լինի,
Բայց սուրբ տեղիս չհասանի,
Մինչ Սահակայ ձորակ մտեալ,
՝ի նենդողացն ընդհարեալ,
Սրախողխող մարմնովն լնալ,
Կակծալի մահուամբ մեռեալ,
Կոծով մեծաւ՝ի յատտ բերեալ,
՝ի դերեզման մահու եդեալ։
Հանդիպողաց իւրոյ չիրմի,
Հայցէ՝ի ձէնջ աղերսալի,
Ասել ղհոգւոց և ղողորմի.

Թվին Հայոց 1256 մայիս 7, և յամի Տեառն 1807։»

84. Տ. Պօղոս Ե. կարնեցի՝ յամի Տեառն 1808։ Վասն սորա յիշատակեալ է՝ի ձեռագիր քարոզադիրք մատենիս, որ ասի «վասն կիւրա-կէից»՝ այսպէս.

«Լուսանկար Սրբոյ Էջմիածնի մխաբան և նուիրակ Համթայ Ռէթէոս սեւակիրս՝ի գալն իմ Համթայ՝ի մէջ ճապաղչրոյ և Պոկլանու եղեւ մերկացեալ յամենայն դոյից և սրահալ, որ՝ի յամբարտաւանութենէ Մշոյ հայ խաթրճոյն, և մնացաք՝ի սուրբ վանս հինգ ամիս անկեալ, յաւուրս Տեառն Դանիէլի սրբազան կաթուղիկոսի, յորում ամի սպանեալ էր՝ի նենդող Մարայ աղգէն առաջնորդ Յակոբ եպիսկոպոս Պալանցի և Մինաս

վարդապետան յառաջայեալ լուրովն ընդ վաշայի կամային, նա եւս ժանտախտէ վոխեցաւ. ընդ նմին և Մուրատ վաշային մեռաւ ՚ի ժանտախտէ յետ աւուրց և մեռ ոչ գայր ֆարման յառաջնորդութեան որ եւս վաշայի կամօքն յառաջնորդեալ էր Պօղոս վարդապետան կարնեցի։ Եւ մեք առաջն սակաւ ինչ ընթերցեալ զդէպս ՚ի ՌՄԾԼ. 1257 թուին Հայոց ՚ի սպրիլի հինգ հինգշաբթի աւուրն՝ զայս ծրարեցաք, որ և վաղուն գիմեալոց եմք ՚ի Ս. Աթոռն, եթէ Տէր կամեսցի։»

85. Տ. Մկրտիչ Բ. վանեցի. սա կը շինէ Լուսաղբիւրի երիս կամարներն և յետոյ կերթայ կը նորոգէ Աչախաւի Ս. Սահակ Պարթեւ հայրապետի եկեղեցին՝ յամի Տեառն 1810։

Եկեղեցւոյ արեւելեան ճակատի վրայի յիշատակարանը.

«Նորոգեցաւ եկեղեցիս Ս. Սահակայ ձեռամբ Սուրբ կարապետու Մկրտիչ վարդապետին և ճարտարապետութեամբ Բաղշեցի Սիմոնին, թուին Հայոց ՌՄԾԹ. 1259։»

86. Տ. Վարդան Բ. Բաղշեցի. սա կը շինէ Ս. Մատրաւանուց զանգակատունը երեմն սեամբ դմբեթահարի յամի Տեառն 1824։

87. Տ. Պետրոս Տարօնոյ Կուրաւ գիւղէն. սա կը լինի առաջնորդ Տարօնոյ աշխարհին և վանահայր Սուրբ Կարապետի վանացն։ Ասոր պաշտօնավարութեան ժամանակ Մշոյ աշխարհ կը կա-

ռավարուէը Ալասին պէկի տան թուրք միապե-
տական փաշաներով։ Հանանոյի աշխրէթ մէկ
կողմէն և Ալասին պէկի տուն միւս կողմէն
լեցուած Մշոյ դաշտը կը ճնշէին ու կը հարըս-
տահարէին ժողովուրդը և տարուան երեք ե-
ղանակներուն՝ գարուն, ամառ և աշուն զանոնք
իրենց հաշուոյն աշխատեցնելէ ղինի՝ ձմեռն ալ
խշլայ(*) դրութեամբ իրենց բոլոր անասուններ՝ ձի,
ոչխար, տաւար կը ցրուէին անոնց վրայ պահե-
լու. մինչեւ գարնան և եթէ այդ անասուններէն
մէկ սատկէր ժողովուրդ պարտական կըլլար ա-
նոր փոխարէն երկու հատ վճարել և դոհացնել։

Պետրոս եպիսկոպոսը մեծ զոհողութիւննե-
րով վերջապէս կը յաջողի յետ երկար աշխա-
տութեանց խշլայի դրութիւնը ջնջել Օսմանեան
իշխանութեան միջոցաւ, որ նոր սկսած էր ազդել
քրդականութեան վրայ և այդ կերպով ժողո-
վուրդը կազատի այդ անտանելի լուծէն։

Ծիշեալ եպիսկոպոսի օրով տեղի կունենայ
Ռուս և Թուրք մեծ պատերազմը յամի Տեառն
1819։

Ա.յս միջոցին Քրդաց ազդը և Տվիկներ մեծ
բազմութեամբ կը յարձակին վանքի վրայ, կը

(*) Ձմեռուան մէջ առ աւի բունակալաց անասունները
ձրի պահել եւ խնամել :

կողոպտեն վիաբան վարդապետները, որոնք բո-
լորովին մերկ, բոկոտն և իրենց մերկութիւնը
ծածկելով խոլորձ ըսուած խոտով՝ լեռներ և ձո-
րեր կապաստանին և վերջոյ Մուշ երթալով կըն-
դունին Բոթանեանք ըսուած թուրք խապիլէն
(ցեղ) և հոն կը պահպանուին 6 ամիս: Անոնց
վախսաներնէն յետոյ 6 ամիս վանքը թափուր կը
մնայ և դռները բաց. վայրենաբարոյ քրդեր կը
կողոպտեն և կը տանին եկեղեցական սրբազան
անօթները, սպասներ և բազմաթիւ ձեռագիր
հնութիւններ: Այս կողոպտումէն ղերծ կը մնան
սրբոյ մասունքները և կարգ մը թանկագին և
ընտիր շուրջառներ վիայինէ

Այս դէպքերու միջոցին Պետրոս եպիսկոպոս
կարին կը դառնայ, վանդի կարնոյ առաջնորդու-
թիւնն ալ վիացած էր վանքի առաջնորդութեան
հետ: Նորին Սրբութիւն վերադառնալով 'ի տուրք
վանս, երկար օրեր կուլան վիաբանութեան հետ
վանքի աւերութեան և անդին հնութեանց կորըս-
տեան վրայ և հակում ու աղօթք կը կատարեն առ
Աստուած, որպէս զի ողորմի Ազգին և խաղաղու-
թիւն պարգեւէ աշխարհին:

Երբ պատերազմ կը դադրի և խաղաղութիւն
կը տիրէ, Նորին Գերապատուութիւնը նուիրակ
վարդապետներ կը ղրկէ ամէն քաղաքներ և գա-
ւառներ՝ նպաստ հաւաքելու 'ի վերաշինութիւն
Ս. Աթոռոյն. ինքն ալ անձամբ վեց տարիներ

Ռուսաստան և Պարսկաստան կը շրջագայի և կը հաւաքէ մեծ քանակութեամբ դրամ և եկեղեցական սպասներ, ապա վերադառնալով՝ սուրբ վանուցս չինութեան համար մեծ չանքեր կը թափէ և ի հիմանէ կը կառուցանէ վանքի հիւսիսային և արեւմտեան երկու պարիսպները երկյարկանի սենեակներով, կամարակապ և բակի մէջ գանուած զոյգ բարեհամ աղբիւրներով, ինչպէս կը յայտնէ արձանագիրը, որ կը գտնուի աղբիւրին ճակատը այսպէս.

«Վերատին սկիզբն առնելով նորոգման, սրբոյ աթոռոյս՝ի նորակերտման, արեւմտից և հիւսիսային կողման, կամարակապ և յոյժ անհնման. երկուց աղբերցն բարեհամական, ընդ նմին չինեալ կառուցան, յիշատակ եղեւ մերս աղգին չանիւ նմին առաջնորդութեան, որ եմ յարկէն Տարօնեան, գիւղիս մնեալ Կուբաւեան, չնորհիւ հոգւոյն աեւսողական, Պետրոս վարդապետ տէր Կիրակոսեան, առաջնորդեալ սոսո իմ նահանգս, այս տեղիքս կանգնեցան, թուին 1825 յամի Տեառն»։

Նմանապէս և յետոյ չինել կուսայ Սուրբ Գեղեզմանի, Սուրբ Սահականնոսի և սւսդ սեղանի խորաններու ոսկեզօծ դեղաքանդակ և վորագրեալ պատկերաղարդ խաչկալները, որ կը պայառաւացնէ սուրբ եկեղեցին, որոյ չինութեան յիշատակարան այսպէս գրուած է.

«Սա դեղաչքեղ ոսկեզօծ պանծալի, նման

լուսաճէմ երկնից խորանի, որպէս ոսկեբողբոջ՝ի մէջ չինուածի, որ բաշխէ ղճաճանչս մերձակայ լուրոյ տեսողին։ Արդ ժամ է ցնծայ ի դէղ լուսափայլ քան զերկուս խաչկալս տեսօք դողվելի, չքնաղ չինուած քանդակագործս զարդարի, կամարացն չքեղազարդ յոյժ և յոյժ տենչալի, որոյ արդեամբ Տեառն Պետրոսի, աստուածարեալ արքեպիսկոպոսի, բարեսիրտ որդւոյ Տէր Կիրակոսի, դիտի Ս. Գահին որ էր Կաբրաւցի, 1800 ամ աղաւոթեան, 42 յարեալ Թուականի՝ի ձեռն վանեցի Սարգսի և Նիկողայոսի, ՚ի վառս Աստուծոյ ամենակալի։»

Յիշեալ Պետրոս եպիսկոպոս սուրբ եկեղեցւոյ աւանդութեանց կարգաց ու կանոնաց անվըթար պահպանման խիստ նախանձախնդիր էր, եկեղեցասիրութեան և աստուածպաշտութեան սիպար էր, բոլոր վանական վիճաբանութիւն եկեղեցին կը յաճախեր և դիշերային ժամերգութենէ առաջ երկու կանոն ասմնա երգել պարտիք ըրած էր վիճաբանութեան, և եկեղեցական պատժոյ և հայհոյութեան կենթարկէր այն կրօնականը, որ առանց բանաւոր պատճառի եկեղեցիէն և ասմնաերգութենէն ետ կը մնար։

Ա.յոչափ չինութիւններէ և կարգապահութիւններէ դիմի կարին կերթայ վերջին անգամ, և հոն կը վաղճանի և կը թաղուի մայր եկեղեցւոյ կից հարաւային կողմ Սուրբ Աստուածածնի մատրան առջեւ, ուր տակաւին կայ նորին դերեզմանն։

88. Տ. Յարութիւն Եպիսկոպոսի 1833-38 թուականներուն կը վարէ Սուրբ Կարապետի վանից և կարևոյ միացեալ վանահայրական առաջնորդութեան պաշտօնը խիստ արդիւնաւոր կերպով։

Ասոր օրով կը շինուի Սուրբ Կարապետի առաջնորդարանի երկյարկանի սրահը, հայի վուռը՝ իր մէջ դանուած աղբիւրով, մառանը, Խաչբակի հոյակապ սենեակները, վայրի խանը, ջրաղացը, նաեւ եկեղեցւոյ մէջ առաջնորդական գեղակերտ աթոռը, ինչպէս կը վկայեն այժմեան մեր յիշատակարաններ և արձանագրութիւնները։

Իր շինած հարաւային պարսպի դրան ճակատի յիշատակարանը այսպէս գրուած է.

«Սա թագ պարծանաց է Հայոց ազգիս, պայծառ փողփողի ՚ի Մուշ գաւառի, որ նախ հիմնեցաւ ՚ի Լուսաւորչէ, յանուն Յովհաննու բանին ճըրագի. իսկ նորոգ չինեալ չքեղ գեղգեղի, կամար առ կամար զօրէն եթերի, նորոգ ՚ի հիմանէ կանգնեալ պարսպի, հանդերձ սենեկօք և վերնայարկի, խնդայ միտ առնէ զսիրտ տեսողաց, ՚ի վեր առեալ փառս Միածնի, այս եղեւ յաւուր աթոռոյս դիտի, Յարութիւն արհի եպիսկոպոսի, որ ծննդեամբ բուն եղեսեցւոյ, խոհական չանիւք այր երեւելի, տուրք աղգիս Հայոց եղեն օգնական, շինուածոյս ծախուց սատար բաւական, Աստուած օրհնեսցէ զաղգս մեր հատմային, տացէ փոխարէն վերին օթևարան։ Ա.յս

վերնայարկիս դիր.ք սքանչելի, եղեւ բոլորեալ ՚ի թիւ ՃիսուսԻ, հալար ուր հարիւր երեսուն ուրի ամեան երե.քի սեպտեմբերի։»

Այսպէս և յիշեալ եպիսկոպոս հմուտ էր Սուրբ Գրոց և քաջ հայկաբան, նարեկ ծայրէ ՚ի ծայր տաղաչափութեան վերածած էր։ Եւ ապա ՚ի խոր ծերութեան վերջին ժամանակները հրաժարեցնելով Սուրբ կարապետէն կը վերադառնայ իւր ծննդավայր Եդեսիա և հոն աոաջնորդ կը կարդուի։ Իւր օրով կը շինուի Եդեսիոյ անուանի մեծադիր և դեղեցկակերտ մայր եկեղեցին, որ ցայսօր կանգուն կը մնայ։

Ճիշեալ առաջնորդ Ցարութիւն սրբազան եպիսկոպոսի յիշատակարան այսպէս գրուած է Սուրբ կարապետի եկեղեցւոյ վանահարց աթոռոյն վրայ.

«Շինեցաւ աթոռս ՚ի վերաեաչութեան Ցարութիւն սրբազան արք. եպիսկոպոսի Եդեսիացւոյ յաւի Տեառն 1839»։

89. Տ. Զաքարիայ Տարօնացի Խէյալեան գիւղէն. սա կը նորոգէ Սուրբ Գէորգ եկեղեցին և կը շինէ յորենի ամբարը, դպրոցը և ապա կարտաքաուի վանքէն և Սուրբ Յովհաննու վանք կը վաղճանի յաւի Տեառն 1846։ Իր նորոգած Սուրբ Գէորգ եկեղեցւոյ յիշատակարան այսպէս գրուած է.

«Տերտէրք վերստին նորոգեալ կանգնի կոփ-

ուսածոյ քարտուղարք այս եկեղեցի Սրբոյն Գէորգայ քաջ զօրավարի, յառաջնորդութեան Տեառն Զաքարիայի, երջանկադարդեալ հայր վարդապետի, ի վառս Աստուծոյ և ի պարծանս Հայ ազգի, զրանաթոռ Չանիւք Ուսուս Սիմոնի, յամի Տեառն 1841»։

90. Տ. Մաթէոս Գալատացի՝ 1853. որս անուն յիշատակեալ կայ վանուցս մատենադարանի կոնտակներու. մէջ։

91. Տ. Կարապետ Ե. Բագրատունի երեւանցի, որոյ տապանաքարն վրայ յիշատակեալ է իր պաշտօն։ Սա Արեւելեան պատերազմի ժամանակ վանքը ազատ կը պահէ զրդայ բռնութենէն՝ յամի Տեառն 1855։

92. Տ. Կարապետ Զ. Կեսարացի՝ յամի Տեառն 1861։ Յիշատակարան իւր տապանաքարի վրայ դրուած է։

93. Տ. Մկրտիչ Գ. Խրիմեան Վանեցի. սա յոյժ կրթասէր լինելով՝ պէտք եղածին չափ խնամք կը տանի դպրոցի յառաջդիմութեան համար։ Սորը Կարապետի ժառանգաւորաց վարժարանի ուսուցիչ կը կարդէ Գարեգին վ. Սրուանձտեանց և տպարան բանալով կը հրատարակէ «Արծուիք Տարօնոյ» ամսաթերթ՝ բանասիրական, դրական և ժողովրդական լեզուով։ Իր վանահայրութիւնն կսկսի Քրիստոսի 1862 թուականին և յամի 1869ին Կ. Պօլսոյ պատ-

բիարք կընարուի և Մակար կաթուղիկոսի մահուան յետոյ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսական դահ կը բարձրանայ։

94. Տ. Մամբրէ Տարօնացի՝ Մուշ քաղաքէն. ոա Վարժապետեան Ներսէս պատրիարքին շատ սիրելի և հաճակիր ըլլալուն և միաբան վարդապետաց պահանջմամբ 1873ին վանահայր կը կարգուի Սուրբ Կարապետի վանից և կը վարէ արժանապէս իր պաշտօնը լինն և կէս տարի։ Սորա պաշտօնավարութեան օրով տեղի կունենայ Ռուս և Թուրք Արեւելեան պատերազմը, որոյ միջոցին կինճի կողմերը բնակող Տմլիկ ըսուած բարբարոս ցեղը ձմեռ եղանակին կը յարձակի վանքին վրայ և կը յափըշտակէ կը տանի 900 ոչխար, 25 ձի, 3 ջորի, 20 աւանակ, բաղմաթիւ եղներ, դոմէշներ և կը կողոպտէ ու կը չարչարէ վանուց մշակները ու վարձականները, և որովհետեւ ձեան շատութեան պատճառաւ դոմէշները չէին կրնար երթալ և կը խրէին ձեան մէջ, այդ վայրենաբարոյ և անգութ աւազակները ողջ ողջ դոմէշներու կաշին հանելով կը տանէին։ Փակայն աւարէն ղկնի Տմլիկներու կողմէն սպառնալիքներ կը լսուին, որ հինգ հարիւր մարդով վանքի վրան ալ պիտի գան և զայն ալ կողոպտեն։

Տ. Մամբրէ Մուշ կը դիմէ և կառավարութեան դիտութիւնը կը հրաւիրէ վանքին վրայ։

վանուցս միաբան վարդապետներէն ումանք կը լքանէին վաստաբար և վանքը թողլով կը փախչէին, որ այնչափ ժամանակ զնորին պահեր էր ու խնամեր իր ծոցին մէջ. սակայն ասոնց հակառակ Տէր Ներսէս վարդապետ Խարախանեան Աստուծոյ Սուրբ Տան պահպանութեան նախանձայոյզ զգացմամբ վառուած՝ կը յորդորէ վանքի միւս վարդապետներ և հասարակ գործակալներ, որ վանքի մէջ ամրանալով կ'ուխտեն ցկեանս պաշտպանել զՍուրբ Շիրիմը և մեռնիլ հոն քան թէ թողուլ, որ պիղծ ոտքերուն կոխան լինի։

Իսկ Աստուած վերէն տեսնելով միաբանութեան այս միակամ միախորհուրդ առաջադրութիւնը և ուխտը, կը խնայէ և կ'օգնէ այս վանքին, կը ցրուէ անոնց խորհուրդ և կ'աղաւէ պայն բարբարոսաց արշաւանքէն։

Երբ պատերազմը վերջացաւ, Մամբրէ եպիսկոպոս մինչև վերջ դրաց ու բողոքեց այս վայրենիներուն դէմ և յաջողեցաւ խիստ հրամանն հանել տալ, որու համար զօրքեր ղրկուեցան Կինճ և ետ բերուեցաւ վանքի աւարը՝ մէկմէ վեհարէն երեք։ Մինչ այդ ժամանակ Կինճի դաւառը տեղացի բռնակալ պէկերու ձեռք կը դտնուէր, որոնք մեծամեծ զնաններ կը հասցնէին թէ տերութեան և թէ ժողովրդեան։ Ցիշեալ բարբարոսներու

անդդայութիւնը այնչափ էր որ կըսէին, «փաշտիշան ըկ թրանուսայ սըբէրու մաւեան(*) »։

Տէր Մաքրէ եպիսկոպոս եռեւէ եղաւ, շարունակ դրեց և բողոքեց կառավարութեան, դիմեց Պաորխարքարան և անոր միջոցաւ՝ Բ. Դուռը, մինչեւ որ յաջողեցաւ միւթէսէրըֆութիւն հաստատել տալ կինճ։

Նաև վանքի սահմանի մէջ գտնուած կուարա դիւղը, որ վանքի կալուածն էր, որուն մէջ բնակած և թանձրացած էին հետզհետէ 40 տան չափ Տմլիկները և միշտ վանքին գլխաւորներ կը հասցնէին, ձեռք բերելու համար ամէն չանքեր և զոհողութիւններ չխնայեց, մինչև որ յաջողեցաւ իլամն վճռագիր բերել՝ ի նպաստ վանուց։ Դժբաղդաբար անոր գործադրութիւն չտեսած 1882 Թուականին կը վախճանի և կը թաղուի յետ կոյս սուրբ եկեղեցւոյ։ Իր գործակրանին վրայ հետեւեալ արձանագիրը կայ.

ՄԱՀԱՐՋԱՆ

«Աստ հանգչի Տէր Մաքրէ Ս. Արքեպիսկոպոս Մաւիկոնեան աշակերտ, գասախօս և վիճաբան Սրբոյ Էմիոածոյս, որ՝ ի վարդապետութեան

(*) Մահմետական դաւանութիւն Տմլիկ ցեղին լեզուն է, որ ըսել է՝ «եթէ թագաւոր կը վախնայ, թո՛ղ գայ մեր մէջ։»

վարեալ զպաշտօն քարոզչութեան ՚ի Կ. Պոլիս, յԱդրիանուպոլիս, ՚ի Ռոտոսթոյ, ՚ի կարին, ՚ի Կեղի և ՚ի Բալէշ և յամի 1873ին բարձրացաւ յաստիճան եպիսկոպոսութեան ՚ի Ս. Էջմիածին և հուսկ ապա կարգեցաւ վանահայր Իննակնեան մեծի ուխտիս Տարօնոյ զամս լինն և կէս։ Երջանկայիշատակ հանգուցեալ եղ զանձն իւր ՚ի վերայ հօտին և սուրբ ուխտիս և յամենայն վտանգս արիաբար պատրաստ գտաւ։ Ննջեաց ՚ի հասակի 48 ամաց ի 19 մարտի 1882ին։»

Տէր Մամբրէ եպիսկոպոս ճշմարիտ եկեղեցական մ՚էր. քաջ ուսած էր հայերէն դրաբար լեզուն, ունէր սուր գրիչ և ճարտար լեզու։ Վերին աստիճան նախանձախնդիր էր եկեղեցական սահմանութեանց և կանոնաց և մաղէ չափ չէր ուզեր չեղել անոնցմէ։ Զայն խրոխտ և ուժեղ, կերպեր դեղեցիկ չարական. իսկ իր առոգանութիւն այնքան պարզ յատակ էր, որ բառին բոլոր դրերը որշ կերպով դուրս կուգային։ Իր պաշտօնավարութեան սկիզբը չինել տուաւ Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ կից սրբատաշ քարերով վարժարան մը՝ մնայն ներքին յարկ. վերին յարկն ալ պիտի չիներ և կանոնաւոր վարժարանի մը հիմ պիտի դներ վանուցս մէջ, սակայն 1876ի Կարսի պատերազմ՝ վրայ դալով՝ ուխտաւորաց երթեւեկութիւն դադրեցաւ, այլեւս մնջոյնները չօդնեցին իրեն դլուխ հանել իր դեղեցիկ ծրա-

դերը, որ թաղուեցաւ իր հետ՝ ի գերեզմանս։

95. Տ. Աբիսահակ Կ. Պոլսեցի։ Երկու տարին յետոյ Պատրիարքարանի կոչմէն, կը հրաւիրուի յամի Տեառն 1886ին և անկից ալ Պազտատ կերթայ առաջնորդութեան պաշտօնով և ութ տարի պաշտօն վարելէն ետքը կը վախճանի։

96. Տ. Գարեգին Սրուանձտեանց Վանեցի՝ յամի Տեառն 1888. սա երեք տարբեր շրջաններու մէջ մեծ ծառայութիւններ կատարած է աւրը ամենուին։

Ա. Շրջան՝ 1860 թուականին՝ ի վանահայրութեան Խրիմեան Հայրիկի՝ անօրէն դասատու կարգուած է վանուց վարժարանին աւանդելով դրաբար լեզուն իր ճիւղերով մէկտեղ. միևնոյն թուականներուն առանձներ է «Արծուիկ Տարօնոյ» ամսաթերթին անօրէնութիւն, հրատարակելով բանասիրական, պատմական, տաղաչափական և աղգային ընտանեկան բաներ։

Բ. Շրջան՝ 1870 թուականին՝ ի պատրիարքութեան Խրիմեան Հայրիկի, կարնոյ Հայոց առաջնորդ վեհապետեան Տէր Յարութիւն արքեպս. զանէն վարդապետական ձեռնադրութիւն ընդունելէ յետոյ վանահայրական փոխանորդ կը կարգուի, սակայն բուն վանահայրութիւնը Խրիմեան Հայրիկի վրայ մնալով։ Երեք տարուոյ չափ վանուց եկեղեցական վիճակ խիստ լաւ կը բարուքէ հոգեկան մտաւակարարութեամբ, այնպէս

որ տարուէ տարի դուսմար մը աւելցնելով արեւկղին վէջ, վանք բաւական դրամական կարողութեան տէր կըլնէ և վարժարանն ալ խիստ կանոնաւորութեան վէջ կը պահէ։

Այդ շրջանին եկեղեցւոյ վէջ չինել տուած է երեք մատենադարաններ և անոնց վէջ դասաւորած է վանուց տպեալ և գրչեայ գրքեր։ Նաև իւղալի ներկով ներկել տուած է Սուրբ Կարապետի եկեղեցւոյ ամբողջ կամարներն ու սիւներն քանի մը դոյներով։ Եւ ապա 1887 թուականին, Նորին Սրբազնութիւն Մաղաքիա պատրիարքի հետ Սուրբ Էջմիածին երթալով Մակար կաթուղիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի և կը վերադառնայ՝ի Տրապիզոն, վարելով տեղւոյն առաջնորդութեան պաշտօնը։

Ցետոյ Տէր Գարեգին եպիսկոպոս ընդհանուր վանահայր առաջնորդ կը կարգուի Սուրբ Կարապետի և հանդէն վանորէից և վիճակին Մշոյ։ Այդ միջոցին անմիջապէս վանուցս վերին դմբէթ ըսուած հողային կալուածի իւղամի գործադրութեան կաշխատի, թէպէտ իւղամը 1881 թուականին մեծ չանքով և ջոհոդութեամբ հանած էր Տէր Մամբրէ սրբազան, սակայն նորին վաղճանումէն յետոյ անգործադրելի կը մնայ։ Տէր Գարեգին լսելով՝ որ Բաղէշի կաւսակալ Էհմէտ փաշան կինճ եկած է, վանքէն կինճ կը փութայ՝ հրաւիրելու համար՝ի վանս նորին վսեմութիւն.

Կինճ երթալով խնդրադրոյ մը կը ներկայանայ փաշային, նոյն իւրաւի անդործադրելի ճնաշն ու քրդայ վանքին առաջ ընտանեքը կը բայատրէ։ Արդարապատ փաշան Տէր Գաբրիէլին եպիսկոպոսի առաջնորդութեամբ կուգայ վերին գմբէթ բառած դիւղը, որ առաջ վանքի դոմն եղած է և յետոյ քիւրտերը յափշտակելով վանքէն՝ 40ի չափ տուն կը հաստատեն հոն և կը բնակին մէջ։ Վ.ռեմ. կուսակալը պէտք եղած քննութիւններ այնտեղ կատարելով վանք կուգայ և նոյն տաեն հրամանադիր մը կը գրկէ Մշոյ կառավարչին, գործադիր պաշտօնեաներ բերել կուտայ և այդ 40 տուն քիւրտեր դուրս հանելով, երեսց տները բոլորովին քանդել կուտայ և յիշեալ տուներուս դիները վանք կը վճարէ և այդպէս վերջ կը դանէ այդ հոզային դատը, որ երկար տարիներ շարունակուելով ահագին ծախուց դուռ մը բացած էր վանքին։


Գաբրիէլին Սրբազան այս գործերն՝ ի գլուխ հանելէ յետոյ՝ իւր դէմ յերիւրուած դրպարտութեանց վրայ Բ. Դրան հրամանաւ Կ. Պոլիս կը տարուի և երեք տարի վերջ կը կենքէ իր արդիւնաւոր կեանք 2000 ոսկւոյ կտակ մը թողլով աղքին։

97. Գաբրիէլին եպիսկոպոսին յաջորդեց Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեան (այն տաեն վարդապետ), որ քանի մը տարի հաղիւ կրցաւ շա-

բռնակել իր առաջնորդական դժուարին պաշտօնը, և աքսորուեցաւ իբրեւ քաղաքական յանցաւոր Ս. Երուսաղէմի Հայոց վանքը։

Երուսաղէմի վանքին մէջ 12 տարիներ վատնուած մնալէ յետոյ, շնորհիւ Սահմանադրութեան վերահաստատման, Տ. Ներսէս եպիսկոպոս Կ. Պոլիս դարձաւ, ուր երկրորդ անգամ ըլլալով ընտրուեցաւ առաջնորդ և ընդհանուր վանահայր Տարօնոյ վիճակին։

Տ. Ներսէս եպիսկոպոս Խարախանեանի աքսորման թուականէն մինչեւ 1908 յաջորդաբար Տարօնոյ վիճակը ունեցած է 5-6 առաջնորդական տեղապահներ, բայց Ս. Կարապետի վանուց փոխանորդութիւնը ընդ միշտ վարած է Տ. Վարպան Ծ. վարդապետ Յակոբեան։




ՑԱՆԿ ՎԱՆԱՀԱՐՑ

		Ա՛Ժ Տեառն
1.	Տ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ս.	302
2.	Տ. Զենոբ Ասորի	303
3.	Տ. Եպիփան Ս.	339
4.	Տ. Ստեփաննոս Ս.	...
5.	Տ. Վահան	352
6.	Տ. Փառնեբսեհ	362
7.	Տ. Եփրեմ	377
8.	Տ. Յովհաննես Ս.	398
9.	Տ. Զեմեննոս	415
10.	Տ. Մարկոս	425
11.	Տ. Կիւրեղ	480
12.	Տ. Գրիգոր Բ.	502
13.	Տ. Անդրեաս Ս.	...
14.	Տ. Ներսես Ս.	519
15.	Տ. Յովհաննես Բ.	541
16.	Տ. Սահակ Ս.	544
17.	Տ. Յովսէփ Ս.	549
18.	Տ. Բարդուղիմէոս	555
19.	Տ. Աբանաս	559
20.	Տ. Աբրահամ Ս.	590
21.	Տ. Բարսեղ Ս.	593

22. Տ. Թաբեռա-Թորիկ	604
23. Տ. Կոմիտաս	617
24. Տ. Ստեփաննոս Բ.	618
25. Տ. Ստեփաննոս Դ, Մեկ.	629
26, Տ. Եպիփան Ներսապուհ	630
27. Տ. Դաւիթ Ա.	...
28. Տ. Գրիգոր Դ.	638
29. Տ. Յովհաննես Դ. Մմկն.	653
30. Տ. Սահակ Բ.	728
31. Տ. Վարդան Ա.	787
32. Տ. Գրիգոր Դ. վկայասեր	1044
33. Տ. Դաւիթ Բ.	1180
34. Տ. Յովհաննես Դ.	1181
35. Տ. Խաչատուր	1204
36. Տ. Յովհաննես Ե.	1268
37. Տ. Յովհաննես Զ.	1293
38. Տ. Յովհաննես Է.	1316
39. Տ. Դաւիթ Գ.	1342
40. Տ. Յովհաննես Ը. Ալեճախ	1360
41. Տ. Յակոբ Ձգնաւոր Ա.	1370
42. Տ. Աբգար Լեռնկիմուր	1390
43. Տ. Աւետիս	1415
44. Տ. Յովսեփ Բ.	1426
45. Տ. Գրիգոր Ե.	1436
46. Տ. Թորոս	1455
47. Տ. Յովհաննես Թ. Արդարե	1463

48. Տ. Ստեփաննոս Դ.	1464
49. Տ. Մկրտիչ Ա.	1481
50. Տ. Մելիսեդեկ Ա.	1493
51. Տ. Ստեփան Ե. Տարօնացի	1503
52. Տ. Զաքարիա Ա.	1505
53. Տ. Յովհաննէս Ժ.	1509
54. Տ. Յակոբ Բ.	1515
55. Տ. Ղազար	1520
56. Տ. Աստուածատուր Ա.	1549
57. Տ. Անդրէաս Բ.	1555
58. Տ. Մելիսեդեկ Բ.	1560
59. Տ. Կարապետ Ա.	1561
60. Տ. Յովհաննէս ԺԱ.	1580
61. Տ. Մարտիրոս	...
62. Տ. Կարապետ Բ.	1586
63. Տ. Արիստակէս Ա.	1601
64. Տ. Արիստակէս Բ.	1654
65 Տ. Յովհաննէս ԺԲ.	1680
66. Տ. Ներսէս Բ.	1695
67. Տ. Կարապետ Գ.	1698
68. Տ. Յովհաննէս ԺԴ. Կոլոս	1705
69. Տ. Գրիգոր Ե. Շղթայակիր	1712
70. Տ. Յովնան Ա.	1720
71. Տ. Աբրահամ Բ.	1726
72. Տ. Ներսէս Գ.	1730
73 Տ. Միքայէլ Ակնցի	1743

74. Տ. Յովնան Բ. Տարօնացի 1753
75. Տ. Պօղոս Ա. 1759
76. Տ. Յոհաննէս ԺԴ. Մոկացի 1767
77. Տ. Յոհաննէս ԺԵ. 1772
78. Տ. Կարապետ Դ. Եւդոկիացի 1774
79. Տ. Յովնան Գ. Համբեցի 1774
80. Տ. Յակոբ Գ. 1781
81. Տ. Յովակիմ 1786
82. Տ. Աստուածատուր Բ. Տարօնցի 1787
83. Տ. Յակոբ Դ. Աղպեղ Պոլսեցի 1807
84. Տ. Պօղոս Բ. Կարնեցի 1808
85. Տ. Մկրտիչ Բ. Վանեցի 1810
86. Տ Վարդան Բ. Բաղեշցի 1824
87. Տ. Պետրոս Կուրաւցի 1825
88. Տ. Յարութիւն Եդեսիացի 1833
89. Տ. Զաքարիա Տարօնացի 1846
90. Տ. Մատթէոս Պաղատացի 1853
91. Տ. Կարապետ Ե. Բագրատունի 1855
92. Տ. Կարապետ Զ. Կեսարացի 1860
93. Տ Մկրտիչ Գ. Խրիմեան 1862
94. Տ. Մամբրէ Մշեցի 1873
95. Տ. Արիստակէս Գ. Պոլսեցի 1886
96. Տ. Գարեգին Վանեցի 1888
97. Տ. Ներսէս Խարախանեան Մշոյ Յարութեանցի :





ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ը.

ԳԱԼՈՒՍՏ ԵՐԻՑ ՄՈԳՈՒՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ Ի ՏԱՐՕՆ

ԿՈՆՏԱԿԻ ՊԱՏՃԷՆ

«Եւ ընդ առաւաւտս ապարդեւ և չնորհաղեղուն օրհնութեան գրոյս ձանիք սիրելիք մեր ՚ի Տէր, զի դրէ սրբազան Առաքեալն Պօղոս թէ՝ ՚ի պէտս սրբոյ հաղորդեցարուք. կամի ասել թէ օգնական լերուք տաճարացն Աստուծոյ, որք յանուն սրբոյ են կառուցեալ։ Ահա տաճարս այս կառուցեալ անուամբ Սրբոյն Յակոբայ և՚ի մէջ տաճարին կայր գերեզման Դասպար Թադաւորին, որ սակաւ մի պատմեցից վասն այս տաճարիս։ Քանզի ի ժամանակս Յննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի երեք մոգք եկին յԵրուսաղէմ, երկրպագին նորածին Մանկանն և Բէթղեհէմ այրին. և յորժամ Հերովդէս ասաց՝ յորժամ տեսանէք աղդառնիցէք ինձ և ես եկեալ երկրպագիցեմ նմա, և հրեշտակ Տեառն երեւեցաւ ի տեսլեան և գը-

նային ընդ այլ ճանապարհաւ յայնմանէն իւրեանց. և երեալ դնային ևկին ի Մուշ. յարեւելեան կողմն Մշոյ օվձևանեցան՝ ի տեղին, որ այժմ ասի Մոկունք. անդին՝ ի ձորն այն բաղում առուտս, կեցեալ և՝ ի նոյն ձորակն եղեւ վաղճան Թագաւորին Գասպարայ և ի նոյն ձորակին ամփոփեցին զմարմին Գասպար Թագաւորին, և Մելքոն ու Պաղտասար Թագաւորքն դնային յերկիրն Մոկաց. և անդեալ մինչեւ որ եկեալ Սուրբ Առաքեալն Թադէոս յԵրուսաղէմ հրամանաւ Սուրբ Առաքելոյն Պետրոսի, եւ նոցա զկնդանապետին Ս. կաւսին, զչիշ իւղոյն, զգեղարդն առառաձամուխ և զաջոյ ձեռացն բեւեռս, և եկեալ յԱրծկայ առ Թագաւորն Աբգար, բժշկեաց զնա՝ ի ոմմանէ ցաւոց և եղ՝ ի Հայս երկու ծառայիւքն և եկն՝ ի Սուրբ Աղբերիկն, ի լերին չինեալ առառաձային կարգաղութեամբ զանք այն տեղին յանուն Սուրբ Առառաձածնի և եդ անդ զբեւեռն ներկեալ արեամբ Տեառն. և եկն՝ ի Մուշ՝ ի լեառն Եղերդոյ և առիսիկաց զչիշ(*) իւղոյն և զգեղարդն և եկն՝ ի ձորն, որ էր գերեզման Գասպար Թագաւորին։ Եւ Սուրբն Թադէոս անդ իւր ձեռամբ նաչ օծեաց, զոր այժմ քիւրան խաչ ռաչ(**) ասէ. և հայքն Թուխմանուկ առեն. մնաց այսպէս մինչ՝ ի ժամանակս Սրբոյ

(*) Շիշ իւղոյն այժմ կը գտնուի Եղերդոյ Ս Յովհաննու վանք (Տարօնոյ) :

(**) «Խաչ ռաչ» Քիւրտերէն լեզուաւ է, որ կը նշանակէ Սեւ խաչ :

Հօրն մերոյ Գրիգորի Սուրբ Լուսաւորչին և Տրդատայ Թագաւորին, որ զկռոյն պատկերը խորտակեցին և զմարմին Սրբոյն Յովհաննու եղին ՚ի Լեառն Տարօնոյ ՚ի պահպանութիւն երկրին, և զաջ բազուկն եղին ՚ի վանս Սուրբ Յովհաննուս եւ Հման անտի զչիլ եղոյն և զգեղարդն, զոր ամփոփեալ էր Սուրբ Առաքեալն Թադէոս ՚ի նեբ.քոյ եղբարենւոյն, Հման անտի Սուրբ Լուսաւորիչն և զսուրբ վանքն որ չինեցին, և յետոյ եկեալ Սուրբ Երիստասան Առաքելոց վանք կառուցին և զարդարեցին, և եկեալ Սուրբ Լուսաւորիչն ՚ի Հռոմ Մոգայ և տեսեալ զդերեզման Գաւազար Թադաւորին և զնաչն օծեալ ձեռամբ Թադէոս Սուրբ Առաքելոյն, չինեաց տաճար մը յանուն Յակոբայ Ս. Հայրապետին ՚ի վերայ Սուրբ Թադաւորի դերեզմանին, վինչեւ որ եկն Մարուգէ Ս. Ճղնաւորն աղօթեաց յայս տաճարս գ. տարի, և Թագաւորացն Հայոց ժամանակս տիրապետեին զվանքերն, յորժամ բարձաւ Թագաւորութիւն Հայոց, մնացին վանքերն և եկեղեցիք անտէրունչ, մինչեւ Մշոյ Սուրբ Կարապետն և միւս վանքերն եղան ապահով ՚ի ձեռս դասատորաց, լաքին այս սուրբ տաճարս Սուրբ Յակոբայ մնացեալ խեղճ անտէր և նախանձն մեր, որք էին ՚ի ցեղէն Մուշեղայ, տիրապետութիւն արարեալ են սուրբ տաճարին Ս. Յակովբայ, և Գաւազար Թադաւորի դերեզմանին, զայն տաճարն չէն պահեալ և զկանթեղն ՚ի

վառ պահեալ, մինչ եհաս ի յեսին ժամանակն եհաս ՚ի մեզ երկու եղբարքս՝ Տէր Յովհաննէս և Տէր Զաքարիայ քահանան և մեր ըստ կարեաց մերոց ծառայութիւն առնէաք. վասն մեղայ մերոյ անցեալ չարժի տարին խոնարհեցաւ չինուածս սուրբ եկեղեցւոյն, որ վաղուց հետէ չինեալ էր, բայց որ չարժն եղեւ վըաս։»

(Սոյն կոնտակ, որմէ միայն այս կարեւոր մաս քաղեցինք, Տէր Յակոբեանց տան քահանայից կողմէ ուղղեալ էր Ժոլովըդեան, որպէս զի երկնց առաջ տրօք և ողորմութեամբ կարողանան նորոգել Սուրբ Գաստար Թադաւորի դերեզմանի վրայ կառուցած Սուրբ Յակոբ եկեղեցին։ Թէեւ այժմ Թուխ Մանուկ Մշու Տէր Յակոբեանց տան վերաբերեալ այդիով և նորա հանդիպակաց Սուրբ Գաստար Թադաւորի դերեզմանը ուրիշ այդիներով չրջապատուած կայ, քայքայուած և խարխուլ վիճակի մէջ է, բայց ի հաստատութիւն բանիս դեռ Ժոլովուրդ նոյն անուններով կը յիշյիշէ տեղերու անունները։ Օրինակ՝ Սուրբ Գաստար, Թուխ Մանուկ, Մոկաց Ձոր, Մոկունք(*), Հայաբնակ և այլն։ Տարուէ տարի ուխտի կերթան և կը տանին մանր երախաներ հոն, աւելի կայատառ անելու և բիպղ ըսուած մանկական ախտերէ ազատ մնալու համար։)

(*) Մոկունք 50 տունէ բաղկացեալ հայաբնակ գիւղ մէ Մուշէն կէս ժամ հեռաւորութեամբ արեւելեան հարաւ։

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
ԵՂՐԴՈՏԻ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆԻՑ

ԳԼՈՒԽ ԺԱ.

«Յորժամ ելին Քիսուս ՚ի տուն Սիմոնի բորո-
ւոյ, կինն պառնիկ էարկ զնւոն ՚ի գլուխ Քիսուսի
լի անուշահոտութեամբ և զկնի չարչարանացն
Քրիստոսի զմնացեալ նուն առեալ Թադէոս ա-
ռաքեալ, երեր առ Աբգար Թագաւորն և նոյն
նուագն էօծ զորդի Թագաւորին և բժշկեաց. անսի
հրամանաւ Աբգարու գայ առ ստորոտով լերինն
Տաւրոսի և գտանէ վայելուչ տեղ մի հարաւային
կողմանէ և գտանէ ծառ մի եղրդոսի, և անդ
եղ զնւոն աստուածային հրամանաւ Տուրբ Հոգ-
ւոյն. և աղօթիւք հարեալ զդեղարդն աստուա-
ծային ՚ի տեղւոջն և բխեցաւ աղբիւր գեղեցիկս,
և ինքն գնաց ՚ի գաւառն Աբտազ, և անդ կատա-
րեցաւ: Եւ մնաց անդ նուն աստուածային բազում
ժամանակս, մինչ յայտնեցաւ Լուսաւորչին մերոյ,
յորժամ երեր զտուրբ նշխարս կարապետին ՚ի
Տարօն, եաես ՚ի հարաւային կողմանէ լոյս վայե-
լուչնաձեւ ինչ ՚ի վերայ լերինն բազում աւուրս,
ուր կայր նուն աստուածային, և յարուցեալ առ-
նու ընդ ինքն զՆանօն և զկրօնիդէս և վուրթով
հասանէ ի տեղին, և գտեալ զնւոն աստուածային

մեծաւ ուրախութեամբ գոհութիւն և փառս մատուցանէին Սրբոյ Երրորդութեանն եւ Սուրբ Գրիգորը մնաց առեալ էր Սուրբ կարապետէն թէ տարցէ առ Տրդատ արքայն, հրամանաւն Աստուծոյ և յայտնութեամբ հրեշտակի անդ եղին ՚ի տեղի լուղոյ և չիներցին ՚ի վերայ նորա վայելուչ եկեղեցի ՚ի փառս Աստուծոյ և Սուրբ կարապետի (*)։ »



(*) Ցիշեալ պատմութիւն գրուած էր մի ձեռագիր քարոզագրքի մէջ՝ «՚ի վայելումն Մկրտիչ վարդապետի վանիցոյ Թվին Հայոց ՈՄԽ, 1240 մարտ 1։»

ԿՈԼՈՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ

ՇՂԹԱՅԱԿԻՐ ՎԱՆԱՀԱՐՔ

ԳԼՈՒԽ ԺԲ.

«Դէմ եղեալ նկաք՝ ի Տարօն և հասեալ յաս-
տուածախնամ դիւղն Յորձանք նուաստ ծա-
ռայքս Ստեփաննոյ Գրիգոր և Յովհաննէս ապաս-
տոլք Սուրբ Աստուածոյ եկեղեցին. եղեցին օրհնեալք
քահանայք և ժողովուրդք սիրելի սեղբոյն աղ-
նիւ երկրին այնորիկ, ընդ որս և լուսաւորեցէք
Տէր զհօդի կարապետ եպիսկոպոսին վերադի-
տողն Սրբոյն Լուսաւորչին վանիցն,
քանզի կարի սիրով ընկալան զմեզ, ժողովելով
մերս օտարութիւն, իսկ յետ աւուրց լինչ անցա-
նելոյ՝ առեալ զմեզ բարեպաշտից ժողովրդոց
Տարօնոյ համայնից տանելով զմերս նուաստու-
թիւնն յերկնաւոր սերովբէական լուսաւորչա-
վերս ուխտն սրբական՝ ընդ հովանեաւ բարեբաշխ
չխրմին մեծի Մկրտչին Յիսուսի Քրիստոսի։ Եւ իբ-
րեւ մուտք՝ ի ձորն ընդ լուսանալն առաւօտուն
և՝ի ծագիլ արեգականն և մեք սկսաք զԱրե-
գականն արդարութեան, երեւեալ և նոյն ժա-
ման աքանչելագործել ու լուսաճաճանչ ահեղահրաշ
առաքելին սրբոյ դէմ, որ հայի հանդէպ Ամմի-
նադաբեան դաշնին և Տարօնոյ բաժանել։

«Եւ մինչ զայս այսպէս տեսաք ՚ի հոգի բերկրութեամբ և արտասուախառն եկկիւղիւ լսեաք, և բարձեալ դոհութիւն մատուցանեաք Սրբոյ Երրորդութեան։ Եւ իբրեւ հասաք ՚ի տեղի Իննակնեան, լսեաք անպատմելի լինդութեամբ, որ և զՏէր օրհնեցաք յաղթական օրհնութեամբ, որ եղեւ մեր յոյս։ Իսկ զկրնէլոց մերոց զեղանակ և զչափ դիտէ Տէր. անթերի և ճառայն իւր աղնիւ կարապետն Սուրբ, որոյ բարեխօսութեամբն փրկեաց զմեզ յաւիտեանս և փրկեսցէ։

«Այլ արդ թէպէտ տեղւոյն վայելչութիւն գեղեցիկ դոլով յոյժ, եթէ սրբոյ շնորհաբաշխ և լուսակաղմ չերմունդն, քերովբէաճեմ ահընկէց հրեշտակախումբ տեսակօք տաճարացն, որք զտեառնէն իսկոյն ածեն յաւիտականութիւն, զի ունի և զգեղեցիկ մայր՝ գեր քան զվիրաւանան պսակեալ անուշահամ լռենաբուղս աղբերակօք և երփնագեղ դոյնզդոյն բազմորակ ծաղկօք չքնաղապէս պարսպաւորեալ, թագ լուսապաճոյճ կերտեալ ձեռամբ Լուսաւորչին մերոյ ՚ի վերայ ամենասուրբ նշխարաց Սրբոյն Գրիգորիսու և յանուն նորա, որ զկնի Տեառն Մօր՝ պարծանք և գագաթն սրբոց ամենից և վեհապ յարեւելից բազմեալ ՚ի լեառն Քարկեայ, ձայն բարբառոյ և Մկրտիչ Քրիստոսի, քաղցրահնչող գարնան ատտրակ հրաշիւք յամլոյ ծննեալ որդին Զաքարիայի և օրհնեալ պառաւոյն Եղիսաբեթի՝ Գրիգորիոս և մեծ վարուցն։

«Եւ յաւուրս սորա թուին հայոց ՌՃՄԷ. 1155 նորոգեցաւ սուղերն Սրբոյ Կարապետին դեղեցկայարդ տաճարին և Սրբոյն Սահմանոյ. իսկ յամի Տեառն 1709 և հայոց ՌՃՄԸ. 1158ին Մեծ ծահրաշ կիրակէոչն յորժամ կատարեցաք զսուրբ պատարագն և վառատրական գոհաբանութիւնս մատուցաք վերոյ Աստուծոյ, յանկարծ իսկ թնդմամբ չարժեցաւ երկիր՝ ի հիմանէ անտի, սկսեալ յհիւսիսոյ դաւառէն և հասանելով առ մեզ։ Ո՛հ և եղուկ ժամուն այնմիկ՝ թէ զի՞նչ դողծեցաւ և ո՞րպիսի թշուառութիւնք զմեզ պատեցին. զի այնքան ահագին էր շարժումն, որ զանշարժելի լերինն ի՝ միմեանս հարկանէր, և զհաղին մեծամեծ վէմս պատառէր, և զգնացս դեղեցիկ ապերասպ արգելեալ՝ ի բաղում ժամս՝ ի ցամաքութիւն վտիտէր զանգին, զի առաջք ոմանք սատկելով ասիցեն առ ի վայր գնացքն Եփրատ գետոյն ընդ կրունկն դարձեալ ջուրքն՝ ընդ երես գաշտին սկսեին։ Եւ մինչ վազվզուկ երկիւղալիս չստափուդութեամբ հանդերձ ամենայն միաբանիւք՝ իբր արք հարիւր արտասուաղոչ հառաչմամբ անհատանելի գնացիւք դրեթէ արտաքս նստեաք որպէս ճնճղուկ ապրեալ՝ ի յորսոյ, բայց զաչս մեր և յառեցաք առնանել զբաձրադիտակ կաթուղիկէ Սրբոյ Կարապետին, ահա ոչ երեւիւր զի անկեալ էր յերկիր, ընդ որում և այլ չինուածք մեծի ուխտին քայքայեալ և կործանեալ էին։

«Յայնժամ համրացաք ամենեքեան և ոչ կա-
րացաք խօսիլ, սղաւորեցան սիրտք մեր և այլա-
պունեցաք ի դէմս ի վերոյ ահագին առաւել-
լեան : Եւ դիմեցաք անտի ի բարձր բլուրն արև-
մտեան, որ հայի ի վերոյ վանիցն և առ տաճարն
և տեսաք զնա՝ ոչ որպէս յերէկին և յեռանդն, այլ
յայլ իմն դարձեալ կերպարան :

«Եւ անդ. ևս առ հասարակ ամենեքեան յար-
տասուս հարեալ լացաք մեծաձայն ողբալ ի
հարուստ ժամն, մինչ դրեթէ առ հասարակ ի ձայնէ
կրծնատրացն դոչման անդրան տարեալք յողբալ
դիմէին : Եւ լքեալ անտի ի հոգալուքն, անցաք
առ դամբարանօք մարմնով մեռելոյն՝ աւաղելով
զկեանս հոգւով մեռելոյն, և մնացաք անդ ի
կողմն հիւսիսոյ զերիս աւուրս առ հասարակ վանիցն:

«Եւ զկնի աւուրց եկին հասին ի Մուշեղայնոյ
Մար իշխանէն և դառաւորէն արք, որք սեռեալ
զերան ծանուցին մեծի խանին, որ ի Բաղէշ և
մեր դնացեալ ընդ նոսա առնուլ հրամանն և չինել
զանկեալան :

«Եհաս յօդնութիւն Սուրբ Կարապետին և
քաղցրացոյց Տէր զսիրտ, որ եառ հրամանն նորոգել
և կերտել : Սակայն կարի չատ տառապանս կրե-
ցաք ի խստասիրտ ազգէն Մարոց, և այն՝ զի ոչ
դադար եւր առ ձեռն պատրաստ և մերձակայ տե-
ղիան, որ լինչ պիտոյն էր ի նիւթ շինուածոյն.
վասն որոյ յոգն նեղութեամբ դառնէին երբեմն,

լայց ՚ի խնամոյն Աստուծոյ երթեալ ընդ կողմն հիւսիսոյ հասանելով յարդիւրն բարեհամ անցանելով ղջուրն, որ Առաքելոյ և Աւագ ա- կունք, եկանելով ՚ի կատար լերինն Բարկեայ, ընդ մէջ դնալով երկուց բարձրակատար գագա- թանցն, եւ իջանելով գառիվար միւսոյ կողման վազս առնելով ընդ ջրոյն կողմն, որ կայ հան- դէպ Մանդակունեաց գաւառին յարևմտեան Շամունեաց, գտաք անդ պէս պէս տեսակս քա- րանց և բերեալ չինեցաք զկամուրջիկն դեղեց- կաքանդակ յօրինմամբ, նմանապէս և գաւիթ կամարակապ քարեայ տեառքն և զանգակատուն կամուրջիկեայ խաչիւ գագաթեալ և Սուրբ Հոգւոյն նեղանիւն զարդարեալ, և այլ չինուածք ևս բաս չափու, թանապէն և խրճիթք՝ ՚ի վտառս Աստուծոյ:

« Սակայն ևկ և կրկնակի լայ զկրկնա- մեռքս՝ թէ ոչքանեայ բարդուխեանց պար- տուց անկաք ՚ի նեղքոյ, որոյ վասն երեալ ՚ի տուրբ ուխտէն տարադէմ դնայիւք, դիմեցաք յայլ օտարական գաւառս ժողովել ողորմութիւն յաստուածասէր անձանց առ ՚ի մեմեւատուցանել զպարտուցն ծանրութիւն. և այսպէս շրջաշուրջն դնայիւք հասաք աղուիսամբ, Տեառն յաստուա- ծակեցոյց, արքայանիստ, կայսերատեղիս, բազմա- մարդ քաղաքն Կոստանդնուպոլիս: Եւ վերա- դարձեալ նորին առ նոյն ժամանակին եպիսկո- պոսն Խահակ ընկալաւ բազում սիրով զմեզ

նուաստութիւն, և յորդորեայ զաստուածատեր ժողովուրդն, որք եւս զղջմունքիւն լինելիր և զբազում յիշատակս զարդուց սրբոյ տաճարին, որովք և ապատեցաւ սուրբ վանքն 'ի բազմատոհմ պարսուց և զերազանցապէս չքեղացաւ զերազանց զարդուք հարան մատրուն, որ չէր առաջ բնաւին, և մեզ ամենեցուն էր յորդորիչ, գլուխ և դէմ հայրս մեր Գրիգոր դուարթուն բարեւնապետեան սրբակրօն: Ընդ մեզ էր յամենայնի 'ի սկզբանէ անտի և մեծապատիւ եղբայրն Աբրահամ վսեմաբան և քաջաշնորհ վարդապետեան, որ է այժմ վերատեսուչ և արժանաժառանգ առաջնորդ Տարօնոյ և գահակալ սրբոյ ուխտին այնորիկ: Իսկ Ներսէս Ծերունի և. ճգնաղբեայ վարդապետեան և Յովհաննէս վարդապետեան, այլ և բազում կարդաւորքն հուսկ և եւս յետնեալ չնչինս Յովհաննէս մեղապարտ խղճուկ պաշտօնեայս և 'ի բնէ զրաւեցեալ ծառայս Ամէնուդուին, որ ահա և զյիշատակարանս իսկ գրեցի:»





Յանուն եւ Ընծաroք Ս. Կարապետի շինուած
եւ մեզ ծանօթ չէն եւ անուէն վանիքեր:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ա. Սուրբ Կարապետ իւր Ննդեան տեղը Սուրբ Երուսաղէմէն երկու ժամ հեռի, չէն և պայծառ վանք մէ. այժմ կը պահպանի Լատինաց։

Հոն է Զաքարիայ քահանայապետի տունն, ուր ծնաւ Սուրբ Յովհաննէս Կարապետն՝ Մկրտիչ Քրիստոսի։ Այն վանքն ունի փառաւոր դմբէթաշարդ եկեղեցի մը, որոյ աւազդ խորանի աջ կողմը եօթն աստիճանաւ վար է Սուրբ Յովհաննու Կարապետի Ննդեան տեղը, ուր է նաև սեղան պատարագամատոյց. սեղանոյ ներքև կիսաբո-

ըր վոս մ՚ է՝ չրջապատան ու յատակը կճեայ քա-
րերով, դեղեցիկ քանդակներով զարդարուած և
կեդրոնի բոլորակ վոսը արծաթապատ և ակա-
նակուռ, ուր միշտավառ վեց կանթեղներ կախ-
ուած են և ամէն օր անխափան պատարագ կը
մատուցուի: (Տե՛ս Սուրբ-Լուսաւորչեան որբոյ քա-
ղաքին Երուսաղէմի:)

Բ. Սուրբ Կարապետ Երուսաղէմայ վանք, Յանուն Սրբոյն Յովհաննու Կարապետի. այժմ կը պատկանի Յունաց, որ ներսէս եպս. ՚ի հիմանէ յատի Տեառն 1830 և ունի պայծառ եկեղեցի և մեծուչ՝ միաբանութեամբ:

Գ. Սուրբ Կարապետ՝ յԵրուսաղէմ երիքովի արեւելեան կողմ, յանուն Սուրբ Յովհաննու Մկրտչի վանք. այժմ աւերակ:

Դ. Կեսարիոյ Սուրբ Կարապետ, ուր է Սուրբ Կարապետի դլուխ. չէն ու պայծառ վանք մ՚է և ունի իր առանձին միաբանական ուխտը: Որբա-
նոց և արհեստանոց մ՚ալ բացուած է հոն այժմ Չանիւք և խնամովք Տէր Տէրտառ Եպիսկոպոսի Պալեան վանահօր նոյն վանուց:

Ե. Մշոյ Գլակայ կամ Իննակնեան Սուրբ Կա-
րապետի վանքը՝ Լուսաւորչաչէն երեւելի ուխտա-
տեղի և պաշտելի Հայ աղգին, պատմական

արքայական և մայրավանքն է Տարօնոյ վանօրէից. ունի իր վիճակաւորները և ժառ. վարժարանը։ Տ. Սահակ Ծ. վարդապետ Աստուածատուրեանը յանձն առած է վանուցս մէջ նոր Մատենադարան —Թանգարան մը բանալու և կազմակերպելու դժուարին գործը. արդէն սկսած է հնութեանց հաւաքման և դասաւորման այն Մատենադարան —Թանգարանին մէջ։ Իրարու յաջորդող դէպքերու երեսէն հիմա շէնքերն խարխլած և փլիլուն են մասամբ։ Ունի ընդարձակ հողեր և չրեր։ Այսաւղ է ամիսուած Սուրբ Կարապետի և Ամենափրկչի նշխարներուն մաս մը։

Զ. Սուրբ Մատրաւանք՝ Լուսաւորչաշէն. կը դանուի հին Աշխէտոն —այժմ Տէրզէդ —և Մուրատ գետի մէջտեղ՝ ծանոթ դիւղի քով. փոքրիկ և անոթի վանք մ'է և կը կառավարուի ընդհանրապէս դիւղացի քահանայից ձեռքով. ոչ միաբանութիւն և ոչ գոյուց ունի, սակայն ունի հողային կալուածներ արդատանդ և բարեբեր, զոր դրացի Հայերն առանց խնայելու հեռզհետէ կը դրաւնեն։ Հոս ալ Սուրբ Կարապետի և Սուրբ Ամենափրկիչ նշխարներն են։

Է. Մշոյ Սուրբ Յովհաննու վանք՝ Լուսաւորչաշէն. հաստատուած է Տարոն լերան չղթայի մի փոքրիկ սարահարթին վրայ՝ Տարօնոյ դաշտին ա-

բեւեռեան հարաւային կողմը. դեղեցկակերտ և ամրապարիսպ վանք մ՚է և ունի ամենահայեցի դիրք մը և քաղցրաշունչ մեսարան մը, որոյ առաւելեան առջեւ կը պարզուին ու կը ներկայանան Տարօնոյ հարթ և գեղեան աշխարհ, Մուրատ գետի և Մեղրագետի հեղասահ և պղպջուն ջուրերը։

Այս սիրուն վենասատանը ունի իր վիճակութիւնը, գպրոց և հոգեւոր կալուածները։ Հոս ալ կան Սուրբ Կարապետի և Ամենափրկչի չիրիմներ ու նշխարներ։

Ը. Ալաշկերտի Սուրբ Յովհաննէս (Իչքիլիսէ)՝ հիմնեալ ի Սուրբ Լուսաւորչէ. իւր հոյակերտ և փառապանծ եկեղեցին չինուած է Հերակլ կայսերէն։ Այդ վանք չինուած է Նպատ լերան ստորոտ և Մուրատ գետի եզերք. հան է Մաժան գրմապետի գերեզմանը. իւր դէմն են յայտնի գեղտոյն՝ Բադուանի աւերակները, արեւելեան կողմը՝ Միրաւի նշանաւոր դաշտը։ Տակաւին կը ցուցնեն գետոյն եզերք կանգնած մեծ քարը — Աղօթ քար — որոյ թիկնելով Լուսաւորիչն աղօթքներ կարդայեր և մկրտեր է Թագապատակ և փառաւորեալ Տրդատ իշխաններով և Հայ ժողովրդով։

Ունի մեկ երկու վարդապետ. այդ վանքը 1877 Ռուս և Թուրք պատերազմին կողոպտեցաւ և շենքերէն մաս մը վնասուեցաւ։ Ունի իր առանձին

դիւղն ու հողեր. հան ալ կան Սուրբ Կարապետի և Ամանապինէի չիրիմներ։

Զմոռնանք յիշել նաեւ որ Իւչքիլիսէի քով հանդէպ Բագուանին, դեռևին վրայ ձգուած քարաշէն կամուրջին համար կըսուի թէ առ Տրդատաւ շինուած է։

Թ. Սպէրի Սուրբ Յովհաննէս՝ շէն։

Ժ. Կեղուայ Սուրբ Կարապետ՝ Խլպաշէք կոչեցեալ. շինուած Օրօր դեռաւկի և Հանդաստուն դիւղի քով՝ Բոշմէ լերան առորոտ՝ Ագարբ ըսուած տեղւոյն հողին վրայ. այժմ կիսաւերկ, յանձնուած աշխարհականաց տեսչութեան։ Այս վանքի մի հին մագաղաթեայ աւետարանի յիշատակարանէն կը հասկցուի, որ այդ վանք հիմնողներն են եղեր Մշոյ Սուրբ Կարապետի վիարաններէն մաս մը, որ Սուրբ Կարապետի 1709ի մեծ երկրաշարժին դաղթեր են հան և հիմներ են վերոյիշեալ վանքը։

Հաստատուն հանդիստ կամ Հանդստեան տուն դիւղի Օրօր դեռաւկի վրայ տակաւին կեդրեւի կամուրջն, որոյ վրայէն, կը պատմուի թէ՝ Պարսիկներ չորի մէջ ձգեր և նահատահեր են Ս. Խաչ եպիսկոպոսը՝ տարկաւագ Մեծին Ներսէսի, որոյ չիրիմն Հանդստեանի եկեղեցւոյն մէջ է և ուխտատեղի Խաչ.-Հայր անուանըւ։

ԺԱ. Սահակ Սուրբ կարապետ՝ աւերակ։

ԺԲ. Դերչան, Շապանուց Սուրբ կարապետ՝ այժմ աւերակ։

ԺԳ. Խնուս, Մժնկերտ գիւղի Սուրբ կարապետ՝ անտէրունչ։

ԺԴ. Խնուսի Նահապետ-Յովհաննէս գիւղը իր անունն առած է անշուշտ իր քով եղած վանքի մը աւերակէն։

ԺԵ Մանազկերտի Թոնարակոյ նշանաւոր և պատմական գիւղի քով կայ Սուրբ Յովհաննէս անուն վանքի մը աւերակներ, որ չունի իր պատմութիւն, մանաւանդ որ չունեցեր է այլեւս մը, որ պիտեր իր աւերակայ և խաչքարերուն։ Այդ վանքին հետի չէ Լամբար-Դալարիս անուն գիւղը, ուր Տիրան Բ.ին աչքեր հանուելոյն և անդ յարդ առանդութեամբ կը յուշնեն։

ԺԶ. Բլնունեաց Նաղուբ լճին եղերք կերեւին վանքի մը աւերակները, որուն կըսեն Սուրբ Յովհաննու վանք. իւր գիրքն ու անդը պատառուարճ, ոտքերուն տակ պարզուած կը չիշխայ Նաղուքի նաղելի լիճը խաղաղ ու ախուր, որոյ ակօսաձեւ ու մանրիկ ալեայց վրայ կը լողան երկակենդան թռչուններքը։ Վանքը չրջապատուած է

թեղիներէն՝ սեռական մը ծառերը, որոնք դարերէ ի վեր կանգուն կը մնան և չեն կարուիր ի յարդանս վանքին։

ԺԼ. Ախլաթու Սուրբ Յովհաննէս՝ այժմ չկն. Նեմրութի արեւելեան երեսի վրայ շինուած է և կը նայի վանայ ծովակին և Ախլաթու դաշտին, կը դիտէ նաև Մատրամանքի դմբէքին. իւր քովն է թեղուտ դիւղը հայաբնակ՝ հին և փառաւոր եկեղեցիով մը և խաչքարերով։ Ասոր կըսեն նաև թեղուտի վանք։

ԺԼ. Բաղէշի Ամրոցուս Սուրբ Յովհաննէս վանք, որոյ համար կը պրէ Յովհաննէս կոչուա՝ հայր Ինճաճեան վանուց՝ թէ երբեմն չատ ճոխ էր այդ վանք. Բարսեղ Ճոնն ալ հոն կեցեր է կըսուի։ Այժմ Բաղիշեցի աղանեղուս ոմանց ձեռքն է։

ԺԹ. Բաղէշի Ծոփաւոր Թաղի Սուրբ Կարապետ՝ անուանուն և լքեալ։

Ի. Մխաւորի Սուրբ Կարապետ յԵրիզա՝ չկն և աշխարհականաց յանձնուած։

ԻԱ. Ցուռնուղի Սուրբ Կարապետ՝ ի կիլիկիա՝ չկն։

ԻԲ. Վանայ Կաուց անապատի Սուրբ Կարա-

պետ վանք՝ չէն ու պայծառ և հակոլ ու պահեցող կրօնականներով լեցուն։

ԻԴ. Խիզանայ Սորվի Սուրբ կարապետ՝ չէն. այժմ աշխարհականաց ձեռք։

ԻԴ. Խիզանայ Սականից Սուրբ կարապետ. 1886ին չէն էր։


ԻԵ. Կ. Պոլիս Իւսկիւտարի Սուրբ կարապետ եկեղեցի, ուր էր, կըսուի, Սուրբ կարապետի աջ ձեռքը։

ԻԶ. Ռուսաստան Հին Նախիջեւանի երիջակայ Սուրբ կարապետ՝ չէն։

ԻԷ. Ռուսաստան կարս Ղօշաւանք կամ Հռոմոսի Սուրբ Յովհաննէս՝ չէն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Աստուածածին անուն կրող վանքերէ զատ Կարապետ և Յովհաննէս անուանակոչ վանքեր շատ կան, որով հեշտ է հասկնալ որ հայոց ամենէն սիրելին ու սրտին մօտիկ Սուրբ Նշխարդին է, որոյ անուամբ Մշոյ Բարիկէ լերան ստորոտ կառուցուած է Գլակայ վանքը, որ Մայրավանք ու աւագն է միւս վանորէից և կը վխիմարէ՝ի հոգի և՝ի սիրտ Տարօնոյ վիճակի յուսահատ հայ ժողովուրդը։



ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ ՏԱՐՕՆՈՅ

ԳԼՈՒԽ ԾԲ.

Արտաշատի հարաւային արեւմտեան կողմն է Սեւայ Տարբան թաւալն անուանուլ պատկեալ Տարօնոյ աշխարհ, որու տափարակ դաշտն ամուր լեռներով պատեալ՝ 22 ժամ տարածութիւնամբ արեւմտութենէ դէպի արեւելք կ'երկարի։

Արեւելեան կողմէն կը բարձրանայ Խառխառունեաց ապառաժուտ նեղուցքի լեռն, որու տակէն կը վտակէ Մեղրագետն վերկելով Տարօնոյ դաշտն և ապա կը խառնուի Արածանոյ հետ և կը կազմէ Եփրատ գետ։ Արեւմտեան կողմ կը բարձրանայ Պալունեաց բարձր լեռն՝ լանկաքոյր ծաղիկներով զարդարուն և վայելուն, որու գեղապաշտուարճ դրախտանման դաշտը բազմեալ կը ճառագայթէ նման արեգական՝ Սուրբ Կարապետի վանքը եւ հրաշալի տաճարն։ Առաւօտ թաղուած են Տարօնոյ մեծ ամուր պարիսպներ և ազատութեան արժանի որդիներ՝ Պարսից ախոյեաններ՝ կորովին Մուշեղ, քաջն Սմբատ, Գայլ Վահան և Վահան Կամսարական, որք՝ ի սէր հայրենեաց քաջութեան յաղթանակով դղրդեցին Պարսկաստանը։ Հարաւային կողմէն ամբռնեալ կը գիշանայ Տորս ահեղ լեռը, որու լանջայ վրայ կը բազմին Սուրբ Առաքելոյ և Սուրբ Յովհաննու վանքերը։

Իսկ Տարօնոյ դաշտի հիւսիսային կողմ Աշոցաձի բարձր բլրոյն դէմ ի մի մեծ մատուռի մէջն է Հայոց բազմերանգ հայրապետին Սրբոյն Սահակայ Պարթեւի գերեզմանը։ Տարօնոյ արձակ աշխարհը Հայոց հայրենի բնակարանն է. Հայկազանց անուանի քաղաքաց, անառիկ ամրոցաց, ահեղ աշտարակաց և հոյակապ եկեղեցեաց, հսկայ աւերակաց նշանները տակաւ առնողին ապիւքը կը գալարեն և յողբ կը շարժեն։ Այդ արձակ աշխարհի տեսարանը հիանալի է. դիւղ դիւղի դիմաց, սահման սահմանի կպած, օդն առողջ, ջուրն առատ և երկիրն պարարտ՝ կը թնդայ հայ մարդկանց բազմութեամբ, որք հանապազ կ'աշխատին՝ ի դոյժ բերրի անդաստանաց և այգեստանաց։

Տարօնոյ աշխարհին ձմեռն սոսկալի է և կը ծանրանայ. քրտայ անողք բռնութիւնն ալ մեկ կողմէն կը սաստկանայ և կ'ապառէ հայ գեղացւոյ հոգն ու գործքը, որ կըմատնեն զանոնք դառն աշխատութիւն։ Աւազ, թէ մեկն ասեմ հազարն կը մնայ, հազարն ասեմ՝ խելք չմնայ։

Տարօնոյ աշխարհի դաշտերն շրջապատող լեռներն ու բլուրները գարնան գոյնզգոյն ծաղկանց գունիներով կը պսակեն երես գեղեան ու դաշտը, յորոց կը բուրեն հոտ անուշ գինարբն ու վիլլան, անթառամն ու ազնուական արուեստք։


Ամենոյ հնութեան պանծալի պատկերն է

Տարօն, որ տակաւ իւր վեհ բնութեան հրաշիւք նախնի աշխարհի պարզ վիճակը կը ներկայացնէ արդի աշխարհի մարդկանց։ Տարօնոյ հայ մարդկանց բնութիւն արմուն է և խրոխտ, բնիկ քաղցր և ազատ՝ ի կեղծեաց, արտաքին պատկերն հակայ է և բարեմոյն, յաչողակ առաքինութեանց։ Տարօնոյ աշխարհի պարծանքն է Սուրբ Կարապետի վանք, որ բարոյական վիճակէն միայն կախեալ է առձեռն հայ ժողովրդեան կեանքն ու բարոյականութիւնն։



ԳԼՈՒԽ ԺԶ.

Արծուիք վանքիս հիւսիսն է և ունի կէս ժամ հեռաւորութիւն. հինայ Շահիտ կըսեն՝ Շահիտ փիւրաերէն նահատակ ըսել է, որովհետև յիշեալ լերան սատրոտ Թեմեարեայ Հաշտենիոյ իշխանի դերեզմանն է, որն որ 700 մարտ հայոց կոչմէն կորեց և հետ առնելով քրմաց կողմն անցաւ. Այժմ ապառաժ քարերով ծածկուած մեծ քարակոյտ մ'է: (Տե՛ս երես 12).





(Հոս արժան տեսայ աւելցնել երջանկայիշատակ
Հայրիկի հոգեյոյզ Ջօճ առ Կարմիր Վարդան:)

ՄՐՄՈՒՆՋՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

ԱՌ ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ ԵՒ ՆԻՋԱԿԱԿԻՑՍ ԻՒՐ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԻ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑՆ



Հոգի աստուածամատ Քրիստոսազօր բանակին
Քաջապանծ զօրավար,
Նոր Մակաբէ, Յուդա, իրաւատուիչ մարտադիւր,
Յաղթող ի կեանս և ի մահ.
Ընդդէմ պարսկապլնին դիմադրաւ շահատակ,
Առ ի սէր սուրբ կրօնին և հայրենի աղատութեան
Մվ մեծի սիրոյդ, չխնայեցեր զանձնդ.
Դու մեռար, յարեար Հայաստանն,
Ո՛ Մամիկոնեան Վարդան:

Խաչալէն դինուոր դու, աշտանակեալ ի ձի սպիտակ
Ո՛ւր երթաս այսպէս ըշտապ.
Ես քաջն Վարդանայ համնարել նիզակակիցն եմ,
Երթամ հասանիմ Աւտաղու դաշտ.
Խեթկիչ եղջերը խաչին խորտակեմ ես անդ
Մեռաւ այծիկ երամն.

Գընա՛, գընա՛, սուր քո առ Թշնամիս . . . .
Ո՛վ Խոսխոսունիդ Խորէն։

Երկնաձիր իմաստութեամբ զղօնայեալ,
Հոգի սիրավառ.
Դէմ հրապաշտ Պարսկին իմաստութեամբ
մղեր դու մարտ.
Եսուր գքեզ ի վոհ, Թողեր այս աշխարհ,
Երկինքն է քո վարձք.
Մեծ իմաստութեամբ էր այս քո սուր և առ,
Ո՛ իմաստունըդ Հրմայեակ։

Տիրակերտ մայր Սիոնին Այրարատայ
վէմ ընտրելազոյն,
Հառեալ ի Մասեաց սարէն՝ գլորեցար
վինչև ի յԱրտազ,
Հարեր, կործանեցեր զաստուշանս
մոգակրօն գԱնհին.
Բարձրացաւ Խաչին փառք, կոր ի գլուխ երկիր
Սատան Թշնամին.
Ո՛վ զարմանալի՛դ Տաճառ։

Իսկ այն ո՞վ է, որ հեծեալ ի սեաւ նժոյդ իւր
օդապարիկ
Աչկունք իւր հուր ցայտեն, ո՛չ ձախ հայի
և ոչ յաջ,

Գնայ ի մարտ յօժարութիւն.
Դա դիտէ սուրբ է հայրենիք, մեռանիլ
վասն նորա
Է սեպուհ պարտիք.
Գընա՛ չուտ, գընա՛ չուտ, սիրեմ զՀոդիդ,
Այդ ուխտ սուրբ է.
Տո՛ւր արեդ և կեանքդ՝ զոր ետ քեզ հայրենիք,
Այլապէս մեռանիլ անմահութիւն է,
Զոր չդիտեն աշխարհիս անդադար մարդիկ.
Ո՛վ Պալունիդ Արտակ։

Թաղերունեան աշխարհի քաջասերունդ շառաւիղ,
Վեհ քաջամարտիկ,
Մեռանիմ այդ սօսափիլ հասակիդ,
Որ ամբարձեր է զդլուխդ դէմ յերկինս.
Աստուած զքեզ ուռճացո՛ց. տո՛ւր մի՛ խնայեր
այդ հասակ և կեանք
Վասն եկեղեցւոյ և Ազգին,
Յանի՛ր այդ պատրաստ սերմ, ուռդեա՛ կարմիր
արեամբ,
Որ բուսանի չուշան դեղեցիկ,
Ո՛ հրաշակերտ Ներսէհ։

Մանուկ հրեշտակատիպ դեղանի զուարթաճաճանչիկ
Ի Գնունի բուրաստանէն.

Առուաձ ղբեղ ունկեաց, կոյր Յաղկերտ խըլեաց.
Դու դեռ կանաչարեւ և կենդանի կաս.
Ո՜հ, ի՜նչ մատաղ զոհ վասն հայրենեաց
Մատեար կամակատ։

Սուրբ Գրիգորի հօր նոր Սահակ սիրատունդ,
Ջերդ դատնուկ ղենար,
Ո՜վ նաղելիդ վահան։

Սիրտ ի սուրբ նախանձ ղինավառեալ ի վրէժ
վասն հաւատոյ և հայրենի երկրին.
Մտեր յԱւարայրի դաշտ. աւար հարեր,
սատակեցեր
Խաւարին Որմզդայ զորդիս.
Որ կամէր վառել զատրուշան, չիջուցանել
սուրբ Գրիգորի
Լուսափայլ ճրագ.
Բո արիւն չիջոյց սատրուշանս, լուսաւորեաց
Հայաստանին չահ.
Ո՜վ ցանկալիդ Սրբեն։

Անդ՝ յատեան Յաղկերտին, ատ՝ յԱրտաշատ
դաշտին,
Ի բան, ի պատասխան, ի ղէն մխիտ յառաջադէմ
Բոյսալաձ սիրահար առ անբիծ կրօն, առ Քհուս,
Եւ հայրենեաց ազատութիւն.

Երկու սիրային հարազատօջդ, խաղաղաաեաՀ
ղիրեարս
Ննջեցիք քաղցր ի քուն.
Անո՞յշ է այդ քուն, Թող հանդչին պահ մի
Քու վաստակեալ բաղուկք.
Շիրմիդ մահարձան են, դլխոյդ հովանի սիուեն
Շաւարշանայ ծաղկունք,
Ո՛վ յառաջադէմ Գարեդին։

Յարքայական տանէն աղաս ոստանիկք,
Երկու սիրաթեւ արծուիք,
Ց'Ոստանայ սարէն սաւառնեալ արագապէս հասիք
Մինչև յԱւարայր.
Ց'ի՞նչ արդեօք, որսիկ առնել անդ անտուրք
կենդանիս՝
Խաւարածնունդ Զրուանայ որդիս.
Կարմաձև. մազլօք ձիւ ձիւ առնելով
Սեաւ ադռաւուց ղերամս.
Քաջ քաջ կռուհոյայք, հարիք և հարայք,
Հուսկ ուրեմն անկայք՝
Ո՛չ. այլ կենդանի էք, և դեռ կանդուն կայք
Ի սէր Հայկազեանց,
Ո՞ մեծ ասպետաք Արծրունիք՝
Վահան և Սահակ։

Պարծի՛ր, ով Գրիգորէ, բարձրացի՛ր,
ահա քո դառինք

Քաջապէս մարտուցեալ ընդ ուրացող գայլս,
Թաթաւեցան յարեան ճապաղիս.
Ցերկնուստ այսի տե՛ս ահաւասիկ թևաբուսեալք,
Ալաւնեբամ թռուցեալ յերկրէ դան առ քեզ.
Ընդարձակեա՛ ղդոդդ, սո՛ւր հանդիստ զոյա,
Վաստակեալ են զո որդիք.
Թուեա՛ դու մի մի, հաղար երեսուն
և վեց վըկայք են,
Զորս ընծայէ Երկնից, զո ծընեալ Եկեղեցին։

Դո՛ւ, Աստուա՛ծ Գրիգորի, Աստուա՛ծ Ներսէսի,
Աստուա՛ծ Սահակայ,
Աստուա՛ծ մեր սուրբ հարց.
Ա՛հա քեզ զո՛հ բոլորանուէր, քեզ պատարագ
հաճոյական,
Քեզ այսպիսի նահատակաց սուրբ արիւն ընծայ.
Ընկա՛լ, Տէ՛ր, յիշեա՛, Տէ՛ր, գըթա՛, Տէ՛ր, և
ա՛յց սրա
Տառապեա՛լ հայրենեաց սրբոյն Վարդանայ։

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՌ ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ ԵՒ ՆԻՁԱԿԱԿԻՑՍ ԻՒՐ

ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՅԻՆ

Ի Տարօն Մամգունի քաջաց աշխարհին
Ը՝Աչեխատու մայր եկեղեցւոյ Խորանին առաջ,
Ո՞վ է դիւցազն այն սպառազէնն,
Որ Սահակայ պապուն Խաչքարին հանդէպ
Պաղատի հոգեհառաչ.
«Ես, ասէ, Թոռնիկն եմ քո՝ կարմիր Վարդան,
Գօտեւորեալ երթամ ՅԱրտաշատ.
Երթամ զանձն տալ վասն եկեղեցւոյ,
Վասն հայրենեաց ազատութեան.
Ահա ձեռն դընեմ ուխտեմ ի Խաչ և յԱւետարան.
Ո՛վ սուրբ Հայրապետ, յերկինս մօտ ես,
Հոգւով աղերս ած
Առ պետականն Աստուած.
Եւ տո՛ր ինձ զօրավիգ սատար
Գո օրհնաղէն բարձր աչ։»

— «Ես խռովեալ եմ, արտասուաց վերայ,
Դառնացեալ եմ յոյժ առ Հայոց աշխարհ,
Առ անընտրող և տիրադրուժ նախարարս,
Որ զթագն Արշակունի փառաց թողին,

Ո՜հ ստրկացան ընդ լչլանութեամբ Պարսիկ
Մարզպանայ։
Ալլ հաչա եմ ընդ քեզ, իմ ազատասէր ճեռ,
Զալն իմ կարկառեալ ի ախրապին տապանէս
Զքեզ օրհնեմ, ո՛վ հայրենասէր Զօրավար,
երկնից զօրութիւն հասցէ քեզ արագ,
Սուր քո հարցէ զթշնամիս չարաչար,
Ցաղթական բարձրասցիս թէ՛ ի կեանս, թէ՛ ի մահ.
Եր՛թ ողջամբ, որդեա՛կ իմ
Քաջապատա՛կ վարդան։»

Զինակիր՛ք իմ, ածէ՛ք զձէնս, զդեցուցէ՛ք զրահ,
Բերէ՛ք սաղաւարտ, կոչէ զիս Վարդան.
Ես նորա քաջ նիզակակիցն եմ.
Ո՜հ, չմեկնի՛մ ի նոցանէ, ո՛չ ի կեանս, ո՛չ ի մահ,
երթամ ընդ նմա պահել սուրբ կրօն,
Պաշտպանել սուրբ Հաւատ՛ք, կանգնել խաչին փառ՛ք.
երթամ պատուել զԱւետարան,
Պատառել ցազկերտին մահաչունչ հրովարտակ,
Որ սպառնայ շինուցանել ցիսուսի
Սիրոյն հուր, և վառել Որմզդայ կըրակ։
Գնա՛, գնա՛, այդ ուխտ նուիրական է.
Կրօն՛ք, Հաւատ՛ք, խաչ, Աւետարան
Քեզ լիցին օգնական
Ո՛վ խոռխոռունիդ խորհն։

Երեսքն ղէտյս արտասիայլեն,
Գոդ թէ և Թաւօրէն լջևալ
Երթայ յԱւարայրն Դողդոթայն,
Ցևտւսն հետեւելով չդնէ վիտ Պետրոսին,
Խոյս տալ և խաչէն, լռին կալ յանապատ.
Տեսէ՛ք ո՞րչափ լինքնայօժար,
Ո՞րչափ հրճուանօք հոգևվառեալ
Վազէ երթայ և պատերազմ.
Սէրելիք, ընտանիք, բարեկամք՝
Զայս ամեն մոռանայ, չհամարին ինչ յաչս.
Զաւեցէ՛ք, երկինք, զվարձ դորա
Եւ տուք զարժանին պսակ։
Պայծառացէ՛ր,
Ո՛ Պաւղոսիդ Ստրակ։

Նոր Զարմայրն է այն, ի Տրոա՞յ երթայ՝
Թէ և յԱւարայր,
Հեծեալ և նժոյդ իւր ճերմակ,
Աչեզս մրրկային որոտայ, անցանէ
Զերդ յամպոց վայրակոծ կայծակ
Հուր հարեալ մաշէ զանտառս Մատեան գնդին
Ի մռնիր դառնայ անմահ կարծեցեալ բանակ.
Այլ ողբամ զքեզ, քաջ շահատակ,
Վատ Պարսկին սուր զքեզ տապատ արկ,
Եւ ո՛չ Աքիլլեսին նիզակ.
Առէ՛ք զոգն դորա, լուսաթեւ հրեշտակք,

Տարէք կանդնեցէք յերկնից վեհ տաճար.
Մեռաւ Յաղկերտ, կորեաւ Մահման դունդ,
Այլ քո յիշատակ և հոգիդ անմահ կայ,
Ո՛ զարմանալի՛դ Տաճատ։

Ելէ՛ք և տեսէ՛ք, սուրբ Գրիգորի որդիք,
Ո՞ւր երթայ, յառաջ մըղի անժայժ
Զիաւորն այն խաչապօշ,
Ահնպէս արբեալ է խաչելոյն սիրով,
Մ՚չ երբէք զգայ զօրահաս մահուն.
Դա հանճարեղ է, գիտէ կռռել քաջ
Թէ մեռանել վասն հաւատոյ՝
Կեանք է և անմահութիւն։
Բաբէ՛, այսպէս հաւատայ, չարաբ երես մահուն,
Զաշխարհ և զանձն եա, դնեայ զկեանս լաւագոյն
Ո՛ խնամատուն Հայեակ։

Հապա ո՞վ է այն գերապատուհաճ
Հրացոլակ սպայն,
Որ յարձակեալ յերկուս ճերքէ
Զ՚Արեայ դնդին կուռ ճակատ,
Մուշկան Նիւսալաւուրա մռնչէ,
Զայն տայ յառաջ ածել վտայ զերամակս
Ուր անդիմադարձ խիզախէ դիւցազնաբար.
Հուսկ ուրեմն անկանի հասակն այն սօսաբարձր,
Զաշկունս կափուցանէ, հոգին վերաթռչէ,
Զ՚Աստուած տեսանէ,

Եւ ի մահուն կանգնի յաղթական.
Վա՜շ իմ հրաշակերտ ներսէհ։

Ծո՜ւշ, յո՜ւշ, Հայոց մանկունք,
Յառեցէ՛ք զաչըս ձեր յայն Գնունի մանուկն.
Դա գինեհարեալ է, չգիտէ թէ ո՞ւր երթայ,
Ի հարսանի՞ս թէ ի կոչ մահուն.
Աէ՛. ես երթամ յԱւարայր,
Երթա՛մ յարիւնակոխ հնձան,
Երթամ ճակիլ անդ զերդ ոսկոյզ Յիսուսի որթոյն։
Այդպէս յաղաժոյժ ճակիցայր,
Մանուկ դու, մանկական դեղովդ,
Սպիտակ և անբիծ ձորձովդ.
Ա՛յլ գի՛ չքնաղ, գի՛ վայելուչ կարմրացայր ողջամբ
Որպէս ոչդան բոսորագոյն,
Ո՛հ, ի մէջ շուշան ծաղկանոյ
Թուի թէ ննջես ի քուն։
Զայն տամ քեզ մատռուակ գնունի,
Թափեա՛ զգինիդ ի քէն, Յիսուս կոչէ զքեզ,
Զարթի՛ր, զարթի՛ր,
Զքեզ հրեշտակք տանեն յերկինս,
Ո՛վ փարելիք վահան։

Հաւատո՛ք, հայրենի՛ք, երկինք
Զքեզ վառեցին սուրբ նախանձով,
Հոգի արդար և զօն.

Արդեօք ցիսուսի հու՞րն էր այն,
Զոր արկ նա ի քեզ, և դու ողջամբ կիզար ի ջոհ,
Ցորդահոս թափեցիր զարիւնդ
Շիջուցեր զմոլեգնախանձ բոց
Ամբարիշտ դինեին մոգակրօն,
Որ խանձել, լափել կամէր
Չ'նկեղեցւոյ նոր դրախտ,
Եւ սուրբ Գրիգորի Հօր
Մշակեալ ձեռաւորունկ.
Այլ քո արիւն չիջոյց աւրուշանին հուր,
Ֆանդեաց մնխրապաշտին տուն,
Պայծառացոյց սուրբ հաւատոյ լոյս,
Եւ դու յաստեղս վերափայլեցար
Ո՜ յանկալի՛դ Արսէնս։

Ոստանիկ Պայազատք,
Կապել ձեզ ի մի ընդ խարին առաքինեաց.
Չ'Ձեզ սուրբն եղիչէ Թուեաց և դրեաց.
Զիւեմ ո՞ր ոխերիմ ձեւն եղծելով ընկեաց
Զանուան ձերոյ քաջափայլ յիշատակ.
Ցնծացէք, հոգի՛ք, երկինք ձեզ դիտէ,
Եւ ես յերդ անմահ դրոշմեմ յոյս արձան։
Որ յԱրուսեայ սարին դադարիցն դէտական կալեալ
Ցարծուածիւ հասիք ի յԱրատաղ;
Խաչասուր մագլօք հարեալ խըլէյիք
Կոյր Ցազկերտի մի զակն.

Անդ երդուայք մահուամբ չնջանիլ,
Զի վառ մնասցէ Հայոց տաճարին լահ
Եւ Աւետարանին աչխարհալոյս ճրագ.
Ո՛ Աղծրունի ասպետք՝
Վահան և Սահակ։

Օ՜ն, զարմացէ՛ք, ո՞վ է այն,
Որ զմինն ի յալ և զմիւսն ի ձախ թևն առեալ.
Ո՛հ, բաւ չէ լինքն միայն,
Զերկուս ևս այլ զոհ խմիասին տանի,
Անբաժան մեռանիլ երթայ ոգեյօժար։
Զա՜յն տուք, վարդան յետուստ է .
Ո՞ւր այդպէս ճեպընթաց լինի անվախ դիմադրաւ.
Մթէ՞ կարծէ լինքն թէ անդրէն երթայ
Ձառել զԹաչէն ի Պարսից առեան։
Ո՛չ, ո՛չ, մի՛ այնպէս կարծէք,
Ես անդիտակ չեմ և դեռ զիշեր չէ.
Գիտեմ՝ ատոյգ թէ ի լոյս ղընամ.
Ես յառաջադէմ Գարեգինն եմ,
Վաղ մեռանիլ կամիմ,
Եւ վասն իմ Թաչելոյն կռուիմ ընդ աչխարհ.
Ես երկնից սիրահար եմ, երթամ առ Սէրն իմ,
Ողջ կացցես, Հայրենի՛ք,
Ողջամբ կացէ՛ք, սիրելի՛ք.
Զիս և զեղբայրս մի՛ ողբայք,
Ողբացեալ ան՛ն Սրուանձտեան։

Բարապան հրեշտակք բացէք դդուռն երկնից,
Պատրաստեցէք ղերիս պսակս.
Ո՜հ, երկու հարաշատօք
Անկա՛ւ Գարեգին, մեռաւ Գարեգին,
Թռաւ ի վեր հոգեակն։

Ամենակալ մեծանուն Տէր, Աստուած
մեր սուրբ հարց,
Աստուած ներող, դլխա՛ծ,
Ահա քեզ պատարագ
վերընծայէ հայոց աշխարհ,
Հալար երեսուն և վեց ղոհ
Նուիրական սուրբ ողջակիզաց.
Քեզ հաճոյ լիցի, Տէր, որպէս երբեմն առ Նոյիւ
ի գլուխ անդ Մասեաց.
Տե՛ս թէ քանի՛ հոտ անույշ է
Ծուխ ղոհից սուրբ Գրիգորի,
Որ բուրէ առ քեզ յԱլտաղու բարձանց։
Տէր Հայր մեր, ա՞ւր է օրն այն,
Ը՛ր ներբէր մեզ, որպէս Յակովբայ ասն.
Յո՛յց և այժմ սիրոյդ ծիածան,
Կամար ած ի վերայ Հայոց լերանց.
Աստ, Տէ՛ր դլխա՛ծ, թէ այլևս հաշտեալ եմ ընդ քեզ,
Ո՛վ տառապեալդ Հայաստան։




DEBERNY

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ

Ո՞վ ես դու, նոր եղիսպար քաջափառ,
Հոգի նախանձաւոր և հանդիսադիր,
Ձհաչն ի յուսդ առեալ, զԱւետարան ի դիրկդ,
Վաղես երթաս վկայել վասն Յիսուսի.
Քեզ ոչինչ փոյթ է Թողուլ զպատարագն ի սեղան,
Թողուլ զերեխայն յաւազանին մկրտարան,
Թողուլ զհարսն ի քօղ և փեսայն ի պսակ.
Ո՜հ մինթէ՞ դոյժ եհաս քեզ ի վանանդ,
Թէ մոխրապաշտ մոգք հասին, մտին ի Հայաստան.
Յաղկերտ հրամայէ, քակէն եկեղեցիք,
չինի՛ն ատրուշանք.
Ելցէ Յիսուս ի տաճարէն, մայէ Որմիզդ
ընդ Սատան.
Օ՛ն, զինուո՛ր դու զօրավարին Նաղովրեցւոյ,
Կրօն, Հաւատ և եկեղեցի կոչէ զքեզ ի մարտ.
Գընա՛, վկայէ՛ և մեռի՛ր,
Ո՛վ սուրբ Ղեւոնդէ։

Մեծին Գրիգորի տան և դահին Յառանդ,
Սուրբ հայրապետըդ Յովսէփ,
Լո՛ւր, ի վանայ ձորէն հնչէ վա՛յ ի Հայաստան.

Եւ, հայր զքանդակ սուրբ տաճարին էջվիաճնիւ,
Ա՛ռ զգրիչ քո, չոյտ զրեա՛ զկոնդակ.
Տո՛ւր հըրաւէր հայոց հօտին և հուլուայ,
Աչխարհախումբ լինել յԱրտաչատ.
Անդ կնքել նոր ուխտ միութեան,
Անարատ պահել զհայրենի հաւատ.
կռուել վասն կրօնի և վասն ևկեղեցւոյ
աղատութեան.
Թո՛ղ մեռցին հովիւք ընդ հօտին, և հարք՝
ընդ որդիս,
Թո՛ղ ի զոհ երթան վասն ևկեղեցւոյ
Յովսէփ իւր ընկերօք, վարդան իւր նիզակակցօք
Թէ բառնի կրօն և հաւատ,
Զի՞ այնուհետեւ մեզ կեանք և աչխարհ։

Ըռըչտունեաց հսկող հօտապետ Սահակ,
Ե՛Ա՛րտօսյ բարձրատար դիտանոցէն
Հայե՞ս ընդ գագաթ Մասեաց վիդապատ.
Տե՛ս, զնա՛րդ ի կասպիական ծովէն
Հողմավար գան սեաւ ամպոյ երամբ,
Գան, խռնեն բարդին յԱյրարատ և յԱրտազ.
Զրադաչտ զայրագին դոռայ թաւիել կարկուտ
սաստկահար.
Փշրել զորթատունկս Գրիգորի, քանդել սուրբ
օրինաց ցանկ.
Էջ այտի, հասի՛ր յԱրտաչատ,

Ղեւոնդ, Յովսէփ և համայն ուխտ եկեղեցւոյ
Ինդ սպասեն անդ, զի լիցիս դու նոցա թարգման.
Տեսցուք զինչ խօսի մովսիկ Պարսիկ.
Թէ ասէ՝ Թողէ՛ք զՅիսուսի Աւետարան
Եւ մեր հարց սրբատան հաւատ,
Հոգի՛ անվհեր, տո՛ւր անդէն քայ քայ
պատասխան,
Ասա՛ համարձակ՝ թէ հայք մեռանին
Եւ չթողուն հայրենի սուրբ աւանդ։

Մուշէ՛, Արշէն, և Սամուէ՛լ,
Ինձատօսի երիցունք և պաշտօնեայք
Աւետարանին,
Հաւատար մլոցք յատպարէզ նահատակութեան,
Ընդ Յովսէփայ, Սահակայ և Ղեւոնդի.
Ո՛վ չինական հօտարած վտրկիկ հովիւք,
Եղին զանձինս իւրեանց ի վերայ վտրկիկ հօտին.
Դո՞ւք էք արդեօք այն վտրկիկն,
Որ մեծ է յարքայութեան երկնից.
Ո՛ ծառայք ազնիւ ի տանկաւուն հաւատարիմ,
Մըտէ՛ք յուրախութիւն Տեառն։

Աբրահամ և Ինձաջ սարկաւագունք,
Առէ՛ք զբուրվառս ձեր և լըցէ՛ք զՀուր.
Խաչանման արկէ՛ք զուրարս՝ զկապանս մահուն.
Երթամք նախ ի բացօդեայ տաճար

Աւարայրի մեռելոց դաշտին.
Ուր կազմին սեղանք ղոհից, զենանին
սուրբ Գրիգորի դառինք.
Ուր ընդ սուր և հուր անցեալ
Ողջակիղին եկեղեցւոյ որդիք։
Սարկաւագո՛ւնք, խունկ ծխեցէք ի հոտ անոյշ
Շաւարշանայ չիրմայ անմահ մեռելոց.
Օ՜ն, թողէ՛ք արդ ղորդւոց չիրիմն, երթամք
յԱպար աշխարհ
Օրհնեմք անդ ղհարոյ գերեզման
Եւ ղյիշատակ կատարման նոցա։

Ձեռս ի վե՛ր կալէք, ձեռս ի վե՛ր, ծովսէվ,
Սահակ և Ղեւոնդ,
Երիցո՛ւնք և սարկաւագո՛ւնք,
Ո՜հ, ծերանալոյ ձեր ժամն եհաս.
Ահա՛ կապեն ղձեզ ի գօտի մահուն.
Ահա՛ վարեն, տանին ղձեզ ի Պարսս հեռագոյն,
Ցերկիր նժդեհ ի քաղաքն Նիւշապուհ։
Կամար ձեր չէ մարգարտայեռ, այլ շղթայ է
ծանրակուռ,
Ո՜ տայր ինձ հասխուրել ղկապանս ձեր սուրբ.
Ձօք արձակեցան աղատ որդիք եկեղեցւոյ.
Ցաղթանակ տարաւ Խաչ, փառաւորեցաւ Քրիստս.
Ո՜վ սուրբ Ղեւոնդեանք։

Զարաչուքն այն Դենչապուհ
Ցանձնէր զձեզ Մոգպետին մոլեռանդ,
Որ նորին չղթայիւք պրկեալ
Դընէր ի դէճ և խաւարչտին բանտ,
Մարմին էր ձեր ղէն, և կռուելով տոկացիք
վշտակրեալ ի դառն կոտանս,
Ո՛չ փշրեր անօթի հոգւոյն ձեր անվըկանդ,
Դուք լոյս՝ ի խաւարի լոյս ծագեցիք անդ
Մոգպետին խաւարապատ աչաց,
Որ ի մահ ննջէր Զրադաշտին ուսմամբ, հրաշիւք
բացան աչք,
Եաես զլոյս Ցիսուս, և հաւատաց յԱստուած
Ո՛վ Սուրբ Ղեւոնդեանք։

Անցանէր այս ծաղկալարդ
Մեծ պասքին օր գայր հասանէր անդ,
Մերձանայր տակաւ տակաւ Գողգոթային խաչ.
Պիտոյ էր ձեզ Սիոնի վերնատուն մի զարդարեալ
համակ,
Պիտոյ էր ձեզ սուրբ ընթրեաց սեղան և կենաց
բաժակ.
Զայդ պատրաստէր շոյտ Մոգպետն այն
հաւատացեալ,
Ինքնին լինէր ձեզ անդ կոչնատէր և հրաւիրակ։
Զաքեի նըման հայցէր, լոյս և փրկութիւն
տանէր իւր տուն,
Լուանայր ղոտըս ձեր ղչուրն արկանէր զանձամբ.

Մկրտեր և պաշտեր զՀոգ իբրեւ զԱստուծոյ
հրեշտակ.
Սեղան կազմէր նահապետական, սեղան բարելից
և առատ.
Ո՜հ, քաղցեալ սոված էին հիւրք զբառաչուն
օր և բանս։
Ցանկանալով կերե՛ք, կշտապինք կերե՛ք.
Ո՛ խաչապատրաստ վըկայք.
Այդ է ձեր վերջին ընթրիք,
Վերջին երեկոյն և գաւակական գառն,
Ո՛վ սուրբ Ղեւոնդեանք։

Ելե՛ք, գոհացե՛ք և օրհնեցէ՛ք զսեղան,
Հասին ձեզ գահիճք անգութք,
Ո՜հ, հաննաւ և զուարթ սեղանոյդ,
Կրկին կապեալ վարեն զՀոգ ընդ առաջար
աւաղուս,
Զոյգ զոյգ լծեալ անագորոյն սպանչայ,
Քարշեն զՀոգ անխընայ ընդ քար և ընդ թուխ.
Գո՛ք իբրեւ այն վըշակին հատօր զերկիր հերկեալ
Ուղիղ վարէ՛ք տանիք զարքայութեան ակօս.
Իբրեւ ցորենահատ գո՛ք ցանեալ ցրուիք,
Որպէս առակէ յիւր բան՝ սերմնահան Քիստոս։
Անդ ի Խուժաստան ծածկին վշրանք ոսկերաց
ձերոց ի հող.
Ասէ ի Հայոց աշխարհ բուսանիք ցորեան
առօք և հասկաթուռ.

Ա.յսպէս մեռելութիւն ձեր կենդանի և քարգա-
ւաճ արար

Զորդիս Եկեղեցւոյ,
Ո՛վ սուրբ Ղեւոնդեանք։

Դեռնշապուհ յոտին կայ սուր ընդ մէջ
թերթաքամ.
Ա.ռ նըմին կանդնին դահիճք դաժանադէմ
մերկասուր պատրաստ,
կանդնին նաև առ ձեօք երկնահրաւէր հոգէաւանդ
հրեշտակք,
ժամ եհաս, ո՛հ, զոհին և զինման,
կախուցէ՛ք, ո՛վ սուրբք, առ աչխարհ պահ մի
զաչս ձեր.
Տեսո՛ւք զինչ առնէ Յայկերտ և աշխարհ
Յետ բառնալոյ սատի զձեր մահկանացու կեանք.
Ո՛հ, զքեզ նախանուէր զհնուն, Սահա՛կ,
զօրաւորդ ի բան.
Որ լռէ զո ճարտար լեզուն ազատ և թարգմանի։
Յառա՛չ մատիր ի սուր, Ղեւոնդ ձայնէ քեզ,
Ո՛վ հայրապետ Յովսէփ,
Ասէ՝ պատուեմ զքեզ աստ, զոր վհո ես քան զիս·
Յառաչ մատի՛ք և դուք, երիցունք և սարկաւա-
գունք,
Մի՛ վարանիք, տա՛ք զձեր պարանոց, առէ՛ք
զանմահութիւն.
Զմեռանիմ ես Ղեւոնդ, մնամ ձեզ յետին տրուպ,

Մինչեւ մի մի յուղարկեմ զձեզ առ Քիստոս,
Ո՞ իմ խաչակից վըկայք, այդ է իմ սուրբ ուխտ։

Իսկ դու զի՞ առնես, հոգի՛ զօրավիդ,
Հոգի՛ հըզօր և մինչ ի մահ անյաղթ,
Զընկերս քո ամեն եռուր ի սրոյ բերան.
Մի՛թէ՞ ինաց այլեւս քեզ նոր լինչ կասկած.
Մատի՛ր և դուն ի սուր, կան ապասեն քեզ
մարտիրոս մշակք,
Խմըռվին երթալ առ ի վարձատուն Քիստոս
և կալ յանդիման,
Ասել համարձակ. Տէ՛ր, վասն Հայոց աշխարհին
մեռաք,
Տո՛ւր զվարձ մեր արեան.
Առէ՛ք զձեզ պսակն անեղծ անթառամ,
Ո՛վ իմ ազնիւ ծառայք։

Գրիգորէ, Ներսէս և Սահակ,
Առէ՛ք ընդ ձեզ զիմոռնիկն ձեր զկարմիր վարդան.
Պսակազդեստ շըքով եկէ՛ք ընդ առաջ յաղթական
առաքինեաց,
Ահա գան առ ձեզ Ղեւոնդեանց հարք, որ ընդ
որդիս մեռան.
Առէ՛ք, տարէ՛ք, յանդիման կացուցէ՛ք
Պետական աթոռին առաջ.
Տո՛ւք զաղերսագիր և յիշեցէ՛ք զտառապեալ
Հայաստան։

Ցառա՛ջ մասիք ինձ լըսել,
Շառաւի՛ղք հաջին Հայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործ *Վարդանայ*:
ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՎԱՐԴԱՆ — զօրավար իր ազգէն ընտրած,
Արեան դաշտի մէջ ԲԱԶ հանդիսացած,
Սըրտացաւ Հայոց դառը վիճակին,
Ոտք հանեց նոցա ընդդէմ դառ Պարսկին։
Զըկարաց տանել նորա վեհ հոգին
Կրանի հալածմունք սիրելի ազգին,
Թըրուի և խաչով տուեց մեծ երդում—
Ցաղթել կամ փառքով ընկնել դառ դաշտում։
Եւ զօրքը նոյնը երդմամբ կրկնեցին,
Մարմինք ու հոգիք ազգին զոհեցին։
Վերին ներշնչմամբ Վարդան քաջ դիտէր,
Որ օրհասականն այն օր վերջինն էր,
Բայց նա ըստրկի կեանք վարել չընտրեց,
Ծննդով ազնիւ, ազնիւ մահ խնդրեց.
Չէր նա կուրացած նշոյլքով բաղդին,
Բայց չէր էլ պղուել օրերով կեանքին.
Նա քաջ էր մարմնով, հոգւով էլ վեհանձ,
Կիրքերը նորա բնաւ չէին անսանձ.
Առտընին կեանքում ծընող բազմադութ,
Բանակի մէջը զօրավար հմուտ,

Պարիսպ ամրակուռ հայրենեաց համար,
Ամեն մի հայի յոյսն ու մխիթար.
Բայց իր թշնամեաց . . . ահեղ հալածիչ,
Դէմ ու դէմ կռուող, բայց ոչ նենդ պատրիչ.
Քանի որ ոսկւն թուր ունէր ձեռին,
Վարդանն էր նորա ահեղ թշնամին.
Բայց երբ դընէր նա զէնքն իր դեռին,
Վարդանն էր նորա պաշտպան առաջին.

ԳԱՄԱՌ-ՔԱՔԻՄԱ



ՅԱՆԿ

Գլ-ի		Եր-ս
	Նամակ Տ. Սահակ Ծ. վարդապետ Աստուածատուրեանի առ Աբխատասիրողն	3
	Յառաջաբան	5
	Տարօնոյ Ս.Կարապետի վանուց եւ Տաճարի յատակագիծը պատրաստուած ձեռամբ Տ. Սահակ Ծ.վարդապետ Աստուածատուրեանի	6
Ա.	Պատմութիւն փոխադրութեան նշխարաց Ս. Յովհաննու Կարապետի ի Կեսարիայէ ի Տարօն եւ պատերազմ Ա.	7
	Առաջին պատերազմ, որ եղեւ յոյժ սաստիկ, պատերազմին գլխաւոր Արծան Բրմապետն, որ կայ այսր ի քաղաքն եւ ընդ նմա արս հազար երեսուն եւ ութ եւ զայս պատերազմ արարաք վասն Գինաեայ կռոց եւ վասն Քրիստոսի . . .	21
Բ.	Հիմնարկութիւն Սուրբ Մատրաւանից . .	32
Գ.	Կարգ վանահարց Սրբոյ Կարապետի հրաւալի վանից Տարօնոյ եւ պատերազմ Գ. .	37
Դ.	Նօրն խոստաճարակք ճգնաւորք	41
Ե.	Գայլ վահան	50
Զ.	Պատերազմ Դ.	54
Է.	Յիշատակարան Յովհաննու Մամիկոնէի .	57
Ը.	Շարունակութիւն վանահարց սուրբ Կարապետի վանուց	63
Թ.	Շարունակութիւն վանահարց սուրբ Կարապետի վանուց	72

Ր. Շարունակութիւն վանահարց սուրբ կարապետի վանուց 86
Յանկ վանահարց 115

Ծ, Ծանօթութիւնք. Գալուստ երից մոգուց Ցերուսաղէմէն ի Տարօն, կոնդակին պատճէն. . . . « 121

ԺԱ. Հիմնարկութիւն Եղրդոտի Սուրբ Յովհաննու վանից 125

ԺԲ. Կոլոս Յովհաննէս եւ Գրիգոր Շղթայակիր վանահարք 127

ԺԳ. Յանուն եւ նշխարօք Ս. Կարապետի շինուած եւ մեզ ծանօթ չէն եւ անշէն վանքեր 133

ԺԴ. Գլակայ վանք 141
ԺԵ. Նկարագրութիւն Երկրին Տարօնոյ . . 142
ԺԶ. Արծուիք 145

Մրմուռնջք հայրենասիրի առ Քաջն Վարդան եւ զիզակակիցս իւր, ի յիշատակ տօնի Ս. Յահատակացն 147

Ողբերգութիւն առ Քաջն Վարդան եւ զիզակակիցս իւր, յիշատակ տօնի Յահատակութեան Յոցին 153

Ողբերգութիւն ի յիշատակ տօնի սրբոց Ղեւոնդեանց 163

Գամառ-Քաթիպայի «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը» բանաստեղծութենէն մի հատուած 171

125-00

5000 z.

Archbishop
Vicken Aykazian

1250 դ.
Կ 0459/155



Ռուսաստանի համար 60 կոպէկ